



Բ Ա Գ Ի Ն

©. ՏԱՐԻ 1970 ՅՈՒԼԻՍ
digitised by A.R.A.R.@

ԹԻԻ 7

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية عليا
 مدير المسؤول
 السيد ارتين كارنيك قرانجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

բւգին
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱՆՈՒԹՅԱՆ
 ԵՆ ԱՐՈՒԵՍԻ

ԱՄԻՋ ԽՐԱԳԻՐ
 Կ. ՅԱՍՈՒՆԻ
 ԽՐԱԳԻՐ
 Պ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԳԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԳ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Ն. ՊԱՐԲԵՆԵԱՆ
 Թ. ԱՔՐԱՐԵԱՆ

ՀՈՄԱՆԻՐ ԱՆԳԱՄՆԵՐԵՆ
 † ԾԻ. ՊՅՍԱԶԵԱՆ

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ա. ԳԱՌՕՆԷ
Ա. ԱՐՓԻՆԷ
Ա. ՍԵՒԱՆ
Ն. ԶԱՐԵՈՒՏԵԱՆ
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ
ՇԱՀՊԱՆ
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ
Թ. ՓԱՓԱԶԵԱՆ
Մ. ՍԼԻՄ
Մ. ԷՍԼԻ
Լ. ՄԿՐՏԶԵԱՆ
.....
ՆՇՄԱՐՆԵՐ

Խմբագրութեան հասցէ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban
 Հեռաձայնի թիւ 296898

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Թ. ՅԱՐԻ. ԲԻԻ 7

ՅՈՒՆԻՍ 1970

ԳԵՐՈՒԹ

ԱՐԱՄ ԳԱՌՕՆԷ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1

Օրերի փոշին իջաւ ինձ վրայ
Ու տոգունեցին ոստեր, տերեւներ,
Կանաչ ծառ էի, հիմա ի՞նչ դառայ,
Օ՛, երազների բաւիշ նամբաներ...

Համբաներ անծիր, երգող առուակներ,
Եւ առատներ շաղի ու շողի,
Անհրեւից ծնուած ջի՛նջ ծիածաններ,
Օ՛, տենչեր երկչոտ ու գաղտագողի...

Օրերի փոշին իջաւ ինձ վրայ...
Թէ՛ տեղա՛ր կրկին մի վարար անհրեւ...
Տեսոյ՛ մի արփի, եւ դէմքին նրա՛
Երփներանգ ժպիտ մի կամարածել:

2

Փոքորկուն ծովում,
Որպէս հեռաւոր յոյսի դու մի լոյս,
Ինձ ներշնչեցիր
Եւանդ ու կորով եւ ծաղկելու յոյզ:

Թէկուզ ամի չելած
Խորտակուեմ պիտի անդունդներում մտք,
Բայց մեռնելիս էլ,
Դու ինձ հետ ես մի՛շտ, իմ հաւատ, իմ յո՛յս...

3

Էլ ուշ է հիմա... Ի զուր եմ փնտռում,
Միտքս քանկոտում...
Ի զուր եմ կեղծի եւ նշմարիտի
Հետեքը պեղում:

Եկել հասել եմ մի վերջակետի,
Որով անսկիզբ եւ թերի ձգուած,
Վերջին էջերն են փակում
Խունացած այս մագաղաթի...

4

Այս գիշեր նորից
Իմ սիրտը նշաց,
Բայց նրան ո՛չ ոք,
Ո՛չ ոք չլսեց:

Անտուն շան նման
Ոռնաց, վնգուտաց,
Բայց նրան ո՛չ ոք,
Ո՛չ ոք չլսեց:

Մի արբեցութեան
Կնքոյփից դարձած,
Է՛հ, իուն են մտել
Ամենքը թմբած...

Թմբութեան բովում
Իմ սիրտը նշաց,
Բայց նրան ո՛չ ոք,
Ո՛չ ոք չլսեց...

5

Ով իմ բարեկամ, անտր ու անտուն,
Ի՞նչ ես թողնելու քեզանից յետոյ.
Տե՛ս, ժամանակը անցնում է գնո՛ւմ,
Գնո՛ւմ ամպի պէս...
Ո՛չ, ծխի նման:

Քանզի, ամպը երբ անցնում է, սահում,
Գուն է նա մի տեղ անձրեւ է մազում,
Մարգեր է ցողում, կեանք է պարզելում:

Իսկ ծո՞ւխը... ծո՞ւխը...
Գիտե՞ս, երբ ծուխը նամբայ է ելնում,
Իր ետեւ միայն մոխիր է թողնում:

ԱՐԱՄ ԳԱՌՕՆԷ

Ա. Ա Ր Փ Ի Ն Է

Հ Ո Պ Ի
Ե Ի
Շ Ո Ի Ն Ջ



Կիրակի է: Լուսթիւն ու խաղաղութիւն ամէն կողմ: Կը դիտեմ ծաղկած եղբւանիկն, կը դիտեմ շարքը գոյնզգոյն ծաղիկներուն ու անյագորէն կը շնչեմ գով ու մաքուր օդը:

Նախորդ օրերու Հեղձուցիչ տաքէն ետք, գիշերուան անձրեւը եկեր էր քաղցր օրհներգի մը նման ու լուացեր էր ծառերը, լուացեր փողոցները ու բուրումնաւէտ էր դարձուցեր օդը:

— Մինք եկեղեցի կ'երթանք, չե՞ս ուզեր դալ, — Հարցուցիւ էր քոյրս:

— Ո՛չ, — պատասխանեմ էի, — ոչ. անշուշտ, ամէն եկեղեցի Աստուծոյ տունն է, բայց ես կը նախընտրեմ մերինը...

Կասկած չունէի, թէ Համաձայն էր քոյրս ինձի. բայց, Հայաշատ լըր-ջաններէ բոլորովին հետու՝ կ'ուզէր որ տղաքը, գէթ Կիրակնօրեայ վարժարան յաճախէին, անհաւատներ չլսանային:

Այո, տարբեր է մերինը, կը կրկնեմ մտովի: Մեր երգեցողութիւնը, մեր պատարաւը, մեր աննման շարահանները, որոնք կու գան մեզի դարեւրու խորքէն, դարերու խորհուրդով: Մեր պատկերուն, մեր նախնիքներուն սրբազան շունչով մեզ յուզելու, մեզ ներշնչելու, մեզ ցնցելու ու մեր հոգիներուն սլացք տալու:

Կեանսեծիին վրայ ձայները Հեղձուցիչ կ'անին, կը ծաւալին, կը բազմանան, կը բազմապատկուին... Խնճոյքի մէջ են թռչունները ու անոնց ճըլ-ըլըցը զուարթ Համերգի մը կը վերածուի: Մտօին ստատ բերքէն յղփաջած թէև՝ բայց վճռած են մաքրել զայն իր վերջին պտուղէն: Տէրերուն բաժին թողլով՝ Թափած կուտերը մաքրելը միայն...

Աչքերս յառած սա ծաղկած եղբւանիկն՝ մտքով կ'երթամ ետ, տարիներ ետ, կը յիշեմ մեր տունը, որուն ամէն յարկէն կարելի էր եռայարկ պարտէզը ելլել:

Ասինքնող աշխարհ մըն էր մեզի համար այդ պարտէզը՝ իր եզրեւանիէ թուփերով, իր անմահ վարդերով ու ծաղիկներով:

Գարնան՝ մեր նշենին կը հարսնանար, վարդերուն ու լիւակներուն զգիխիւ բոլորով օդը կը յաղենար ու կը դինովցնէր մեզ: Սալորները դեռ չկարմրած յարձակում կը կրէին մեզմէ, ինչպէս նաեւ մեր որթատունկը...

Չեմ գիտեր, մինչեւ այսօր ալ չեմ գիտեր, թէ ինչո՞ւ մեր զիմքերը այդքան կը սիրէին, կը փնտռէին այդ բարկ թթուն, թէ ինչո՞ւ այդքան «քաղցր» էր այդ թթուն...

Ու կը յիշեմ մեր խոշոր, աղուոր թղենին, որուն պտուղներէն մեզր կը ծորէր. ու կարծես կը լսեմ աւազանին շատախօս գորտը, որ իր խոշոր աչքերով մեզ կը դիտէր, ու կը խորհէինք, թէ ամէն օր անհամբերութեամբ մեր այցելուն կը սպասէր: Ու հոն էին, հոն, պտտին յենած՝ մեր անմահ վարդենիները, որոնց վրայ աշխարհի դեղեցկադոյն վարդերը կը բացուէին:

«Միայն Արարչին ձեռքը կրնայ կերտել հրաշքի համազօր այսպիսի դեղեցկութիւն», կը մտածէի ես ու կը դիտէի տեսակ մը վերացումով, ինքնաճառագործեան հասնող յափշտակութեամբ: Անոնց թաւշեայ թերթերուն հըմայիչ երանդաւորումը, ծալքերուն աննկարագրելի զրաւչութիւնը երազային աշխարհ մը, դեղեցիկին տանող արիւցուցիչ աշխարհ մը կը բանային մեր առջեւ:

Ու խիստ ձմեռէ մը ետք, երբ աղուոր օր մը զարնան շունչը զղայինք՝ վաղեցինք վեր, պարտէզ ու սարսափով կանգ առինք...

Փլեր էր պատը...

Գամինեքէն, փոթորիկներէն, առատ ձիւնէն քայքայուեր ու տապալէր էր՝ իր ծանրութեան տակ ճղմելով մեր անդուգական վարդենիները:

Անոնք չծաղկեցան այլեւս, ու անոնց հետ, այդ դարնան, արեւին ժըպիտը չտեսաւ շուշանթոյր աղջիկ մը, որ կ'ապրէր բլուրի լանջին նստած տնակին մէջ, ուր երկա՛ր տարիներ առաջ, իրեն պէս հիւծախտաւոր՝ հայրենասէր մեծ բանաստեղծ մըն էր մահացեր:

Մարդին վրայ պտտկող կարմրալանջ մը ուշադրութիւնս կը դրաւ ու կը բերէ զիս ետ:

Իրարմէ բուսական հեռու, սա սիրուն տուններուն ետեւ տարածուող քմբուխտապատ պարտէզները՝ ընդարձակ տարածութիւններ, առանց բաժանումի, առանց ցանկապատներու: Մտա մը, կամ թուփերու շարք մը միայն սահման դժող: Ազատ է մուտքը այդ պարտէզներուն թէ՛ փողոցէն, թէ՛ ետեւի կողմէն: Անշուշտ, ծանօթներ միայն կը համարձակին ատկեա ընել: Ակնարկս պահ մը կը սեւեռի ծառերուն ետեւէն երեւցող ալեւոր ծերունիին, որ դէպի դրացիին պարտէզը կ'ուղղուի ու ես մտածումսով կրկին կ'երթամ ետ...

Այդ դէմքը, այդ բամպակ մազերը, կը յիշեցնեն ինծի մեր տաներէ-ցը. իր որոշ ծուխերուն յաճախ այցելող մեր Տէր Ղեւոնդը: Մատներովը իր ճերմակ, երկար մորուքը սանտրելով կը պատմէր իր մանկութենէն, իր սիրելի Վանայ ծովէն, թէ ի՞նչպէս իր եւ իր խաղընկերներուն մազերը դոյն կը փոխէին ամառուան ընթացքին՝ անոր ջուրերէն ու արեւէն ոսկի երանգներ տունելով: Կը պատմէր վանքի կեանքէն, ու վերջապէս, Պոլսոյ ամիսներէն, մեծահարուստ ազգայիններէն: Սիսո՞ս, որ այն ատեն գիտակցութիւնը չուներ այդ բոլորը զնահատելու, պապական շրթներու անյապօթեամբ ու իւրապեմելու տենչով ականջ տալու:

— Բարի լո՛յս...

Սպիտակահեր ծերունին է, որ իմ կողմս կու գայ, ինձի կը մտնայ: Միջահասակ, լեցուն, բարի աչքերով ծերուկ մը, թեւիս սուկ ճիւղաձորի պատկանելի դէպք:

— Բարի լոյս, — կը պատասխանեմ ժպտելով, գրեթէ վստահ, թէ ինձի անձանօթ դրացիներէն մին է:

— Ի՞նչ դեղեցիկ է հաս, շէ՞, — կ'ըսէ ժպտով մը, որ թաւ յոնքերուն տակ աչքերը կը ջերմացնէ, — Պիւսթերուն հայրն եմ ես, Թոռս, ձերին, Փոթիպոյի մըցումի մը պիտի երթար, ըսի՝ ես կ'օգնեմ լրագրները ցրուելու, սա մեր կարգի դրացիներուն գոնէ ես կը տանիմ, քանի մը խօսք կ'ընեմ, ժամանակ կը մեռնեմ...

Տեսայ, թէ վերջին թերթն էր, որ կը շնչէր պարտէղի դրան առջեւ եւ խօսելու պահանջ, մարմաջ ունէր:

— Խնդրեմ, նստեցէք, — ըսի, — հանգչեցէք պահ մը:

— Սիրով, սիրով, — պատասխանեց իսկոյն ու պարտէղի աթոռներէն մէկուն մէջ ինկաւ իր ծանր մարմինը:

— Աղջիկս ըսաւ, որ դուք ալ ինձի պէս հիւր էք ու Նիւ Եորքէն...

— Այո՛, — ըսի, — քանի մը օրուան համար եկած եմ միայն:

— Ես ամէն տարի, այս եղանակին, տիկնոջս հետ կու գամ երկու շաբաթ կը մնամ: Նիւ Եորքը ասպրիտ տեղ չէ այլեւս: Պիտի ուզէինք այս կողմերը գոյադրուիլ, բայց մեր տարիքին դժուար է... Առանց կտուքի կարելի չէ այստեղ, եւ օթօ վարելու մեր ժամանակն ալ անցած է...

— Այո՛, — կը պատասխանեմ, — դժուար է, շատ դժուար, առանց ինքնաշարժի ասպրիլ այստեղ:

— Ենչէ՞, շնչէ՞, խորո՞ւնկ շնչէ այս օդը. շն՞ս դգար տարբերութիւնը...

— Անշուշտ, — կը դռնեմ, — կը զգամ անձիջապէս որ կտուքէն իջնեմ, եւ իսկոյն թոքերս կը լեցնեմ այս բուրումնաւէտ թթուածինով...

— Նիւ Եորքի օդը թոյն է ամբողջ, — կը յարէ, մազոտ կզակը չփելով, — անվերջ կը գրեն, կը խօսին, անպակնի կը հնչեցնեն ու ոչինչ կ'ընեն, ոչինչ: Միտլը շատ կանուխէն ձգած եմ ես. անցեալ ձմեռ ցաւեր ունեցայ. բժիշկս ասպահով ըլլալու համար կուրծքիս պատկիրը առաւ. երբ դայն կը դիտէր՝ խնդաց ու ըսաւ. «Թոքերդ ցոյց կու տան Նիւ Եորքի բնակիչ ըլլալը...» Տիկինս կ'ըսէ՝ թոյն կը շնչենք, թոյն կը խմենք, թոյն կ'ուտենք: Նիւ Եորքի մեր այնքա՞ն անուշ, անպակի ջուրին մէջ թոյներուն տեսակները խառնեցին, միջատասպան դեղերով յագեցած են մեր կերած պտուղներն ու բանջարեղէնները: Կինս կը զգուշանայ այն պտուղներէն, զորս շնք կրնար կեղուել, չ'ուզեր պնել կարգ մը բանջարեղէններ, ինչպէս օրինակ, ծաղկա-կաղամբը եւ ուրիշներ: Ո՞ր մէկը թուեմ թոյներուն... Ղիտութեան, քաղաքակրթութեան ստեղծած թոյներուն: Քիմիական վնասակար բաղադրութիւններ մտած են մեր շատ մը ուտելիքներուն մէջ, նոյնիսկ մեր կերած հացին՝ զայն թարմ պահելու համար:

— Այո՛, — կ'ըսեմ գլուխս հաստատական շարժելով ու նիւթը փոխելու նպատակով՝ իսկոյն կ'աւելցնեմ, — որքա՞ն խաղաղ է ամէն կողմ, բոլորը եկեղեցի պացած են կարծեմ:

— Ըսել կ'ուզես՝ մնացեր ենք մենք, Նիւ Եորքի մեղաւորներս...

Ու կը խնդայ. կը խնդայ բարձրաձայն ու ախորժակով, կը կարժրի դէմքը, կը ցնցուի իրանը, քիչ ետք՝ լըջացած՝ կը շարունակէ.

— Երբեք մի կարծեր, թէ ամէն եկեղեցի գացող առաջինի ու բարե-

պաշտ է, կամ, աղօթելու համար հոն մտած է: Առանձնութեան մէջ միայն կարելի է ջերմեռանդօրէն աղօթել... Թիսուս իսկ ըսած է, թէ երբ աղօթել կ'ուզես՝ մտիբ քու սենեակդ ու դուռդ դոցէ: Գիտե՞ս թէ որն է ամէնէն վեհաշուք, ամէնէն փառահեղ տաճարը, ամէնէն ներշնչող ազօթավայրը, — կը հարցնէ՞ քաց ձեռքերը օդին մէջ տարածելով: Աչքերը երջանկօրէն շրջանը կ'ընեն ծառերուն ու ծաղիկներուն ու ի վերջոյ կը յատին երկինքի անսմոյ կապոյտին:

— Բնութի՞ւնը, — կը շնջամ քիչ մը վարանումով, քայք իսկոյն, համարձակօրէն ու առանց հարցականի կը կրկնեմ՝ — բնութիւնը... —

— Աս', այո՞, այո՞, բնութիւնը... Հոն է, որ ամբողջ էութիւնդ կը մտննայ Աստուծոյ, առանց իսկ աղօթելու՝ հոգիդ կը թեթեւնայ, կը զգաս Արարչին շունչը, մեծութիւնը, վեհութիւնը: Եթէ երես ես դարձուցած կեանքին՝ կը մոռնաս բոլորը ու ապրելու նոր տենչով կ'ուզես կառչիլ անոր, փառք տալով երջանկօրէն կ'ուզես կրկին փարիլ անոր: Այո՞, բնութիւնը, բնութիւն է Աստուծոյ գլխաւոր տաճարը եւ հոն է, որ մարդ ամէնէն աւելի կը դգայ Տիրով փառքը սրհներդելու պահանջը:

— Սրտէս կը խօսիք, — ըսի յափշտակուած, — ուրեմն շատ ալ մեղաւոր չզգամ ես դիս՝ բնութիւնը վայելել ու խորհրդածել նախընտրած ըլլալու համար... —

— Որքան ատեն որ մօտ է հոգիդ Աստուծոյ՝ ոչ: Բայց մարդիկ սկսեբ են մոռնալ անոր զորութիւնը: «Աստուած մեռած է, Աստուած գոյութիւն չունի», կը զօնն նորերը ու կ'ուզեն կեանքը վայելել իրենց հասկցած ձևով ու մեծ մասով՝ զէպի փճացում կ'երթան: Փոխուեր են ժամտնակները, փոխուեր են պայմանները, փոխուեր է ժողովուրդը: Անբաղձալիներով լեցուեր է մեր անմասն Նիւ Եորքը... Ոճիր, զոգութիւն, յափշտակութիւն, կողոպուտ... Մութին հետ կը տարածուի նաեւ սարսափը՝ մեր քաղաքին վրայ ու այլեւս չենք համարձակիր տունէն դուրս ելլել: Կարծեմ, աշխարհ կ'երթայ դէպի կործանում: Եատեր այլեւս սկսեբ են հաւատալ, թէ մօտ է աշխարհի վերջը... —

— Պատերազմները, — կ'ըսեմ, — պատերազմներուն հետեւանքը, պատերազմներուն ստեղծած չարիքները... —

Աչքերը յտեբ էր մարդի զմբուխտին ու զգացի, թէ չէր լսեբ դիս: — Տե՛ս, — ըսաւ ոտքի ելլելով ու ակնարկը ինծի ուղղելով, — տի՛ս սա թափած կանաչ տերեւները, երբ ամառ իսկ չենք մտեր տակաւին: Կը դիտեմ ու՝ արդէ՛ն իսկ, կը մտածեմ, արդէ՛ն իսկ... Մարդոցմէ շատեր ալ այսպէս կ'իյնան անժամանակ՝ աշխարհի պատուհասներէն, մարդոց չարիքներէն հարուածուած... —

Կը հակի արեւի շողերուն իրենց քաժակը մատուցող, արեւի շողերը բժպող կակայներուն վրայ ու՝

- Հատ մը կրնամ քաղել, — կը հարցնէ:
- Քանի հատ օր կ'ուղէք, — կը փութամ պատասխանել:
- Ո՛չ, ո՛չ, հատ մը միայն: Մերիները կակալ չունին եւ կրնս շատ կը սերէ:

Իսկոյն կը մօտենամ ու լեւակներով միասին փունջ մը կը կաղծեմ:

- Ծնորհակալ եմ, շնորհակալ եմ, — կը կրկնէ, — վաղը մեղի հետ քաղաք կը տանինք ու հոն կը վայելենք: Հաճելի էր քեզի հետ խօսիլը:
- Ակնարկս կը հեռուի իր քիչ մը դեղեկկոտ քայլերուն: Երբ անկիւնը

կը հասնի՝ կը դարձնէ արհեստը գլուխը, կը ժպտի ու ձեռքով հրաժեշտ կ'առնէ կրկին:

Կը վերցնեմ օրուան թերթը եւ կը սկսիմ լուրերը աչքէ անցընել. քիչ ետք, դուռը կը բացուի ու քոյրս կ'երեւայ սեմին:

— Տակաւին հո՞ս ես նստած, — կը հարցնէ զուարճացած, — ընեղեցա՞ր առանձին:

— Նեղուի՞ր, — կ'ըսեմ, — զարմանք զբաժ աչքերուս, — դիտես, թէ չեմ նեղուիր եւ յետոյ, առանձին ալ չէի, հոգեշահ խօսակցութիւն մը ունեցայ Տիգրին Պիւսթին հօրը հետ. աւելի ունկնդիր էի անշուշտ, քան խօսող:

— Բարի ծերունկ է, չէ՞, բայց շատ աւելի լաւ պիտի ըլլար, շատ աւելի պիտի շահէիր, եթէ մեզի ընկերացած բլլայիր...

— Ինչո՞ւ, քարոզը աշխարհահայեացքս պիտի փոխէր...

— Ա՛յ, շատ լաւ պիտեմ, թէ աշխարհահայեացքդ փոխել դիւրին չէ, բայց դիտեմ նաեւ, զրեթէ մտաս եմ, թէ պիտի զղջաս, եթէ լսես...

— Հաւանաբար, հին ու սիրելի ծանօթի մը հանդիպեցաք...

— Ա՛յ, ո՛չ...

— Հապա ի՞նչ, համերբութիւնս կ'ուզես սպառել...

— Գիտեմ, թէ գէշ պիտի գրաս...

— Է՛հ, լաւ, թող գէշ գրամ:

— Պատմուածքի մը նիւթ պիտի ստանայիր... Եթէ պատմեմ՝ արժէք պիտի շունենայ... Դուն ինքզ պէտք է անսնէիր, դուն ինքզ պէտք է դիտէիր ու գրայիր...

— Կին մըն էր, — կը շարունակէ քոյրս պահ մը լռելէ ետք, — երբ մտաւ եկեղեցի՝ բոլոր ականակները իր կողմը դարձան: Գլուխը բաց, գորշ մազերը մոխրի գոյն դէմքին թափած, երկայն ու դունաստած վերարկու մը վրան՝ մաշած, պատուած: Ինչ որ սակայն ինծի ամէնէն աւելի զարմանք պատճառեց, թուղթերու այն խոշոր արցակն էր, զոր թեւին տակ սեղմած, առաջացաւ ու նստաւ եւ խկոյն սկսաւ աննոցմով գրադիլ: Իր մօտ գըտնըւողներ զպացուցին իրեն՝ անոնց հանած արժուիք: Այն ատեն՝ իր ուշադրութիւնը դարձուց քարոզիչին, որ կը խօսէր ատելութեան, ռիսակալութեան առաջ երբած թոյներուն, անոնց քանդիչ, աւերիչ հետեւանքներուն, ու կը ծանրանար՝ ներելու, ներողամտութեան պարզեւած երկրային ու երկնային բարիքներուն վրայ:

«Կինը կարծես նախ ցատումով ծառացաւ. յետոյ, գլուխը հետզհետէ ինկաւ կուրծքին ու հեծեծանք մը ցնցեց ուսերը: Այն ատեն, տարեց կին մը ոտքի ելաւ, մտաւ թեւէն ու դէպի դուռը առաջնորդեց զայն: Երբ մօտէս կ'անցնէր՝ առսայ ճմովկուած դէմքը, անվերջ շարժող անգոյն շրթները:

«Եկեղեցիին կից սրահի մը մէջ սուրճ կը սպասարկուէր արարողութեանէն ետք: Բոլորը կը խօսէին տարօրինակ կնոջ մասին: Ամէն մէկը կը ջանար դուշակել անոր մտքի հաւասարակչութեան աստիճանը: Իր ներկայ վիճակին ծնունդ տուող դրոշմապատճառը: Եւ որքան անձ կար, այնքան ալ՝ կարկին ծնունդ տուող դրոշմապատճառը: Եւ որքան անձ կար, այնքան ալ՝ կարծիք: Թէեւ նժարը աւելի կը հակէր յուսախաբութիւններու տեսակներուն...

«Կը խօսէին, կը վիճէին, առանց յիշելու թուղթերու արցակը, որ իմ ուշադրութիւնս էր գրաւած առաջին բոլորից, որոնց վրայ կեդրոնացած էր կնոջ ամբողջ ուշքը եւ որոնք փոխերուն մէջ կը ճմովկէր դուրս ելած պահուն:

«Տարեց տիկինը, որ իրեն էր ընկերացած՝ անկիւն մը քաշուած՝ սուրճը կը խմէր: Երբ գաւաթը դրաւ վար՝ մօտեցաւ խօսողներուն ու՝

« — Բոլորդ ուլ կը սխալիք, — ըսաւ, աչքերուն մէջ խորհրդաւոր ժը-
պիտ մը դրած :

« Հարցականն ակնարկները ամէն կողմէ ուղղուեցան իրեն :

« — Ո՛ւշ, — ըսաւ հանդարտօրէն, — չեմ ճանչնար դայն, բայց տե-
սած եմ զինքը բաղձաթիւ տոբիթներով : Ամէն կիրակի կը շրջի եկեղեցիէ ե-
կեղեցի ու կ'արձանագրէ անոնց առջեւ շարուած ինքնաշարժերուն թիւերը :
Մյո՞ք ձեռով կը յուսայ գտնել իր դասկին սպաննիչը... Ան՝ որուն ինքնաշար-
ժը ճամբայ ելլելու ատեն դարկած է եկեղեցիին առջեւ խաղացող տղեկին,
ու անդգայ ճիւղազր արագ ակնարկ մը նետելէ ետք՝ բարձրացող ճիւղերուն
ականջները փակած ու սրարչաւ փախուստ է տուած : Եւ հոն... Թողուն
վրայ, չէք կնոջ միակ գաւակը՝ իր աչքին առջեւ մահացած է... »

« Ե՛կեղերը լրջացեր էին : Տեսայ, թէ աչքեր տամկացան, յուզումի ա-
լիքներ արսուտներ տուին եւ Ես յիշեցի քեզ ու արտասացի, որ չընկերացար
մեզի » :

Ակնարկս կը յառի մարդին վրայ ինկած տերեւներուն ու քրոջս դառ-
նալով կը շնջամ :

— Գիտե՞ս ինչ ըսաւ Տիկին Պիւսթին հայրը... »

— Ի՞նչ, — կը հարցնէ թոյրս դարմացած՝ կարծելով, թէ իր պատ-
մութիւնը երբեք չէ տպաւորած զիս :

— Ակնարկելով սա թափած կանանչ տերեւներուն՝ ըսաւ. « Մարդոց-
մէ չափեր ալ այսպէս կ'իյնան անժամանակ՝ աշխարհի պատուհաններէն,
մարդոց շարիքներէն հորուածուած » : Ու... կարծես նախորդացած ըլլար
պատմելիք պատմութիւնդ, ի միջի այլոց աւելցուց. « Ձկարծես, թէ ամէն ե-
կեղեցի մտնող առաքիւնի ու բարեպաշտ է... » »

— Ծամբան կը մտածէի, գո՛հ էի, որ քեզի նիւթ կը բերէի : Կ'արժէ
դայն թույլթիւն յանձնել : Սրբախայրերէ դուրս ելլող քարսիրտ ու մեղապարտ
հողիները մաղկել, խարանել : Բայց ինչպէս ըսի՝ դուն ինքզ պէտք է տեսած
ըլլա՞յիր, դուն ինքզ դիտէիր, զդայիւր, որպէսզի կարենայիր հողի եւ շունչ
զնել գրութեանդ մէջ :

— Ծիչդ է, — կ'ըսեմ, — ու պահ մը լռելէ ետք, — յաճախ, այդ
պարագային, իսկոյն շնք յաջողիւր շունչ ու հողի դնել, — կ'աւելցնեմ
տրամօրէն :

Աչքերս շրջանը կ'ընեն պարտէպին. կը յառին ծառերուն, ծաղկանե-
րուն, արեւին շողերը ըմպող կակաչներուն, մարդի թաւիչին վրայ պտտկող
կարծրալանջերուն, մինչ միտքս հրդեհուած՝ անվերջ կը կրկնէ.

« Հողի եւ շունչ : Հողի եւ շունչ, ատիկա է կարեւորը... »

Ա. ԱՐՓԻՆԷ

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

ՎԻՐԱՒՈՐ ԱՂԱԽՆԻՆ

Վլաստիմիրի մեր բանտին ցուիքին տակ, ազաւնիներ իրենց բոյնը շինած էին ու ձագեր հանած: Քիչ չէր անոնց թիւը: Մեր արգելափակուած սենեակին պատուհանին վերին բացուած էին՝ ուրկէ երկնքի կայոյտ ու լայն երկզ մը, լուսափառփ ու մաքուր պաստառի մը նման կը տարածուէր մեր տեսողութեան առջեւ ու կարծես կը լուսաւորէր նաեւ մեր հոգիին մութը, զըւարթ ու լագուարթ ճառագայթումով մը: Բանտարկեալներս յափշտակութիւնով կը դիտէինք ազաւնիներու կապտորակ խումբերը, զբոնք ուրախ գըւարթ, խաղաղօրէն կը լողային արեւով պայծառացած մաքուր մթնալորտին մէջ, կը թեւածէին վար ու վեր, գիրար կը հայածէին, կը գրկէին գիրար ու կը թծանուէին, կրկին իրարու միանալու եւ ընդհուպ անջատուելու համար:

Ինչքան ներդաշնակ էր իրենց խաղաղ թռիչքը երկնքի անդորր ու գաղջ մթնալորտին հետ: Այդպէ՛ս ըլլալու էր իրենց հոգիին երկնքին ալ, անխոռով եւ աննիչ...:

Միջօրէին անոնց պարը կ'անհետանար, ձագուկներուն հոգը գիրենք կը մղէր դէպի իրենց բոյները, ուրկէ կը լսէինք միայն անոնց սիրագործով վաւաւանքը՝ յիշելով մեր ճանդուած ու կորսուած բոյները...: Այսպէ՛ս էր այդ անմեղունակ ազաւնիներուն հանապօրոնայ կեանքը, արեւին, գեփիւսին, ու մերթ փոթեաններուն ու թռչուններուն խաղընկեր...:

Անցաւ ատեն մը՝ եւ խաղաղ ու արեգազոյ երկնքը փռորկեցաւ, ազաւնիներու կարգին գիշատիչ եւ չար բազէներու մթին խումբեր երեւացին երկնքի վրայ, մթնալորտը խռովելով իրենց սուր նիշերով ու արշաւելով աջ ու ձախ:

Կոխի կ չարութեան սցին է, որ կ'ետար անոնց ընդերքին մէջ ու իրենց գիշատիչ ախորժակներուն յագուրդ տալու համար, յարձակեցան ազաւնիներու անպաշտպան եւ փխրուն բոյներուն վրայ, արեւն ու աներ տարածելով:

Եւ անմեղ թռչունները բոյնին ու ձագուկներուն պաշտպանութեան ի խնդիր, պարտադրուած եւ անհաւասար պայտարի ելան խմբովին, բազէներու չարախանձ գրեհին դէմ՝ որ օր ըստ օրէ անլի սպառնալի կը գտնար: Կտիւր ամէնօրեայ էր. ճատած մեր մթին սենեակին մէջ, կը դիտէինք երկնքի ազատ ու արեւատ կապայտին վրայ մզուող արիւնտ ու կատաղի գուպարը: Կը տեսնէինք բազէներու արըմբաց էջքը եւ անողորմ հարուածները՝ ազաւնիներու գլխուն: Կը տեսնէինք սպաննուած ու վիրաւոր եւք թռչուններուն թաւալգլոր անկումը երկնքի բարձունքէն եւ ողջ մնացածներուն յուսահատ նիզն ու նիշը՝ անգոր մարտնչումը՝ ի խնդիր բոյնին ու ձագերուն պաշտպանութեան:

Ականատե՛ս կ'ըլլայինք կատաղի յարձակողականներու՝ եւ յուսահատ նահանջներու...: Շարաֆներէ ի վեր դաժան պայքարը կը շարունակուէր ու մենք ալ կարծես դուրսը մղուող ամագորոյն եւ ամարդար պայքարին մասնակից՝ խորապէս կը տրտմէինք, մտածելով խաղաղ եւ արեւոտ երէկուան՝ եւ խռովայոյզ այսօրուան պատկերին մասին...:

Օր մը, բազէներու արշաւը կրկին սաստկացաւ եւ կեճաց ու մանու գուպարը վերսկսաւ աղանձներուն եւ անոց միջեւ:

Մենք սրտատրոփ կը սպասէինք անխուսափելի վախճանին, սպասելով նաեւ հրաշքի մը, որ փրկարար ըլլար աննեղ թռչուններուն համար:

Օր մը, երբ աչքերնիս յառած էինք բանտէն դուրս, ազանի մը կկաւ ու թռեցաւ կիսաբաց պատուհանին երկաթէ ձողին վրայ՝ անտարակոյն ապաւեն մը գտնելու յոյսով:

Մահէն կը փախչէր՝ անգիտօրէն մահուան տո՛ւնը ապաստանելու համար:

Կը վախճայինք, որ ներս կը ցատկէր մեր սենեակը, չգիտնալով թէ կրնայ 25 տարուան դատավճիռ մը ստանալ իր այդ յանդգնութեան համար...:

Պահ մը մտնալով մեր դժօխմ նակատագիրը, համակուած էինք վախով, այդ խեղճ թռչունին սպառնացող վտանգով, սարսուռ գգալով, թէ ան կրնայ անմիտ շարժումով մը, անմիջական վտանգէ մը խուսափած ըլլալու յոյսով, ազախնի այս անկարեկիր սենեակին չորս պատներուն գուրբին՝ ուրկէ այդ առաքինութիւնը ընդմիջու վտարուած էր...: Մեր լեզուէն չէր հասկընար հալածական թռչնակը, ձեռքով ըրինք, որ թռիչք մը, նահանջ մը կատարէ դէպի դուրս, դէպի ազատ ու անսահման աշխարհը՝ այնտեղ ապրելու եւ ի հարկին նաեւ հո՛ն մեռնելու համար:

Մինչ մեր աչքերը սեւեռած էինք պատուհանին, բազէներու խումբ մը, արշաւատոյր ու ճշալով, սեւ ամպի մը նման անցաւ պատուհանին առջեւէն, փակելով մեր տեսողութեան երկնքի կապտոյտը: Հալածական ազանին տարապահար, քայլ մը առաջ անցնելով, թռեցաւ պատուհանին շրջանակին եզերքը, այդ ստեղծ միայն նշարեցինք, որ կուրծքէն արիւն կը ծորէր, որուն կաթիլները անցնելով փետուրներէն, սկսան կաթիլ կաթիլ իյնալ վար, անկողինիս բարձին վրայ:

Ազմուկ բարձրացաւ սենեակին մէջ՝ ի տես վիրաւոր, քնքոյզ, անօգնական ազաննիին, որ յանկարծական թռիչքով մը, նետուեցաւ վա՛ր, սենեակին կրագիւսէ յատակին վրայ ու մտաւ մահնակալին տակ, արեան կաթիլներով ճախշելով գետինը:

Քուրբ բանտարկեալները ռոփի կլան՝ ուզուելով դէպի ազանին, որ մահնակալին տակ, պատին անկիւնը, ծուարած էր լա՛ւա, մուկն էր անշարժ: Գրեական մը տեղէն բարձրանալով — «մարթենք եւ ուտենք», ձայնեց աշխոյժով:

— Փետուրները՞ վը պիտի ուտես, հում-հո՞ւմ պիտի ուտես, — ըսաւ բախտակից մը սպառնացիմ մօտենալով քրեականի մահնակալին:

Քուրբ ռոփի կեցան ի պաշտպանութիւն վիրաւոր թռչունին:

Գրեականը լռեց եւ տեղը նստաւ:

Սենեակին մէջի իրարանցումն ու ազմուկը, ուշադրութիւնը գրաւեց

դրան առջեւ կեցող պահակ զինուորին, որ դռնակը բանալով լուսփուն հրու-
մայեց եւ ամէնէն մօտիկ բանտարկեալը կանչելով բացատրութիւն պահան-
ջեց յառաջացած անկարգութեան մասին:

Անհրաժեշտ լուսարանութիւնը ստանալէ ետք, պահակը դռնակը
փակեց:

Հագիւ տաւը վայրկեան անցած, սենեակին դուռը բացուեցաւ եւ ներս
մտաւ բանտին գրութեան քայրերէն մին, մանրի (հօտ) սրուակ մը եւ բաւ-
պակի փուեջ մը ձեռքը բռնած:

Բոլորս խմբուեցանք անոր շուրջ:

— Ո՞ւր է թռչունը, — հարցուց անուշ ժպիտով մը:

— Այստեղ, մահճակալիս տա՛կը, — պատասխանեցի, միտմտմանակ
փորձելով ձեռքովս բռնել վիրաւոր ազանին:

Փորձս անցաւ անյաջող, որովհետեւ փախտականը ծուարած էր ան-
շարժ մահճակալին յետին անկիւնը՝ կծկուած ու սեղմուած պտտին:

Անյաջողութեանս ի տես, սլովակ քանոնեայ երիտասարդ մը սողա-
կելով մտաւ մահճակալին տակը, բռնեց թռչունը եւ արիւնքաթաւ մտնե-
րով յանձնեց գրութեան էրոջ: Վերջինս, խնամքով մէկդի ըրաւ անոր փե-
տուրները, մտքից վերջը ւաճառով, դրաւ սպեղանին վրան ու տմբացուց,
ազատ արձակելով գայն:

Թռչունը կրին անապարեց մտնել մահճակալին տակ, տեղաւորուելով
նոյն անկիւնը:

Բանտարկեալներս հացի փշրանքներ ստատօրէն նետեցինք անոր առ-
ջեւ, որ կտցահարելով կերաւ անյագօրէն ու կրկին սաւորի-փաւորի քաշուե-
ցաւ իր տեղը:

Անցաւ ժամ մը եւ ազանիին հանդէպ հետաքրքրութիւնը կարծես վերջ
գտաւ: Մեկնակը վերստացաւ իր սովորական լուսփունը, ամէն ոք խորա-
սուզուած իր սեփական վշտին ու մտահոգութիւններուն մէջ:

Անյորրութիւն կը տիրէր դուրսն ալ եւ տրեւը իր մեզրը կը քսէր եր-
կրնքի ջինջ կապոյտին:

Նկատեցի, որ մահճակալիս տակէն, սոսիկ-սոսիկ փայլելով, զգուշ
եւ անազմուկ, դուրս ելաւ վիրաւոր թռչունը, կեցաւ շուրջը դիտելով, կար-
ծես ճանչնալ ուզելով իր նոր միջավայրը, բայց աչքերը սեւեռելով պատու-
հանի բացուածքին՝ ուրկէ անդին կը տարածուէր անսահման եւ լուսաշող
կապոյտը: Ճիշդ մեզի պէս, մարմնով այս շորս պատկերուն մէջ էր, բայց
կարծես հոգին կը ձգուէր դէպի դուրսը. կ'ըզմար սաւտոնիլ երկնքի անսահ-
ման եւ ազատ տարածութիւններուն մէջ:

Այսօրինակ մտածումներով տարուած էի, երբ անակնկալօրէն, ուժեղ
թելաքախուսով մը, սուրաց դէպի պատուհանին բացուածքը եւ խորասոյգ
անյայտացաւ անսահման միջոցին մէջ:

Թռչոր բանտարկեալներուն աչքերը դարձան դէպի պատուհանը:

Ու բոլորը տրամօրէն մտածեցին՝

— Ինչո՞ւ մենք ալ թեւք չունենայինք...:

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

Պուէնոս Այրէս

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐՁԸ

(Վ Է Պ)

Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Դ
ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՓԵՐԸ

ԳԼՈՒԽ Զ.

Կը քալենք զէպի հարաւի բարձունքները: Բլուրներու զառիթափներուն վըրայ, որթատունկերը նոր սկսած են ծլիլ, հակառակ որ Մայիսը բաւական յառաջացած է:

Զապէլ՝ հրացանը ուսին՝ զիս կ'առաջնորդէ լուռ ու մտահոգ: Կը մօտենամ իրեն, երբ կը հասնինք բլուրին գագաթը:

— Մեր ալին, — կ'ըսէ, — կը գըտնելի Իդտիր դիւղաքաղաքը, իսկ աւելի հեռուն, զէպի հարաւ, Վասպուրահան նահանգը, ուր լսածիս համեմատ կատաղի կոխներ տեղի ունեցած են:

Կը նայիմ այդ ուղղութեամբ: Կարծես հեռուններէն կու գայ ովկիանոսի մը խուլ մանչիւնը, տեսակ մը ժխոր, որուն տկարացած այիջները կը զարնուին մեր պատուանդանին:

Յանկարծ լուսթիւնը կը պատուի հսկայ սաւանի մը պէս եւ կրակոցները իրարու կը յաջորդեն:

— Մերինները ըլլալու են: — կ'ըսէ Զապէլ, առաջ վազելով, — անպայման կռուի բունուած են թշնամիներու հետ:

— Բայց թուրք բանակը կը զանուի շատ հեռունները:

— Մեր թշնամին միայն թուրք բանակը չէ, այլ նաեւ թուրք ֆողովուրդը, քիւրաք, թաթարը...

Որթատունկերը կը փաթթուին մեր ոտքերուն: Մենք միշտ կը վազենք զէպի այն կողմէ, ուրկէ կը լսուի հրացաններու որոտը: Կը հասնինք բլուրին միւս կողմը: Հոս ու հոն ցրուած գաճաճ ծառեր, տատասկներ, մացառներ կը վարագորեն մեր գոյութիւնը: Կը պատուարւինք ժայռի մը ետեւը:

Ճիշդ մեր վարը, տասնեակ մը վըրաններու շուրջ դիրք բռնած, հարիւրի չափ քիւրտեր կը կրակեն զէպի մեր աջը, ուրկէ երբեմն կը լսուի հրացանի մը կրակոցը:

— Մերիններուն դիրքը վտանգուած է, — կ'ըսէ Զապէլ, — ի՞նչ կրնան ընել: Քիւրտերու տասը հարուածին զէմ

Հաղիւ մէկ Հարուածով կը պատասխանեն: Անպայման զինամթերքը սպառելու վրայ է:

Քիւրտերէն մէկը ոտքի կը կանգնի ու Հրացանը վեր բարձրացնելով՝ Հրամաններ կ'արձակէ: Հասկցած է, որ հայերու զինադրուածութիւնը վերջանալու վրայ է ու ժամագահառութիւն է, զիբքերու վրայ մնալով, փամփուշտ սպառել: Քիւրտերը Հետեւելով իրենց պետին, մէկիւր-մէկի կ'ոտքի կը կանգնին:

— Պէտք է միջամտել, — կ'ըսէ Ջապէլ, — գոնէ մերիններուն նահանջը դիւրացնելու համար:

Մեր պայտուակները կը դնենք գետին, եւ ծուկի կու գանք ժայռերուն ետեւը: Մեր հրացանները կ'ուղղենք դէպի վար, դէպի թշնամին, որ լքած իր դիրքերը՝ կը պատրաստուի զրոհ տալու:

Առաջին կրակողը կ'ըլլայ Ջապէլ: Քիւրտ մը կը զլուրուի գետին: Երկրորդ մը կ'իջնայ իմ հարուածի տակ: Մեր ելած տեղէն կ'իջինք թշնամիին վրայ, աշնպէս որ, մեր իւրաքանչիւր Հարուածը կը հասնի իր նպատակակէտին: Աջ կողմէն, մերինները՝ քաջալերուած, կը սկսին պարպել իրենց վերջին փամփուշտները: Քիւրտերը՝ անակնկալի եկած՝ ապաստան կը փնտռեն ու կը վերադառնան իրենց թուփերուն ետեւը: Ջապէլ իրարու ետեւէ կը տապալէ իր երրորդ եւ չորրորդ զոհերը: Հայերը, առիթէն օգտուելով, կը տեղաւորուին աւելի նրպասաւոր դիրքերու վրայ, ու իրենց խնայած փամփուշտները կը տեղացնեն, թշնամին դատապարտելով անարժուութեան: Յեղապետը կրկին կը յայտնուի, հրացանը վեր բռնած՝ կը հրամայէ, կը հրահրէ, կը սպառնայ: Ջապէլ ուշի ուշով կը հետեւի անոր շարժումներուն: Դէմքին վրայ կայ լարուածութիւն մը, բայց աչքերը անթարթ են: Եւ յանկարծ բոց մը կը ժայթքէ իր հրացանէն ու ցեղապետը գետին կը գլորի շանթահարուած: Ջապէլ հանդարտօրէն կը ծոփ ու պայտուակէն կը հանէ փամփուշտներ:

Աչքերը կ'ուղղէ ինծի. հրճուածը կայ տնոց մէջ, բայց ո՛չ Հպարտութիւն:

Քիւրտերը, տեսնելով իրենց ցեղապետին մահը, կը լքեն զիրքերը ու կը ցրուին բնութեան մէջ, հետու մեր մահացու հարուածներէն:

Ջապէլ ու ես կը վազենք դէպի վրանները: Նոյն պահուն, ալ կողմի թուփերուն ու ժայռերուն ետեւէն կը յայտնուին մերինները: Յանկարծ անոնցմէ մէկը անունս կը կանչէ: Սահակն է, էրզրուացի դասընկերս: Կ'ողջապարտուինք:

— Առանց ձեզի մեր բանը բուրդ էր: Մեր զինամթերքը գրեթէ վերջացած էր, եւ Հաղիւ իւրաքանչիւրին քով յորս հինգ փամփուշտ մնացած էր: Ատենին հասաք եւ ճիշդ թշնամիին թիկունքին: Նայինք ինչ նուէր ձգած են մեզի:

Քսանի չափ քերտեր փուռած են գետին: Անոնցմէ ոմանք տակաւին կը շնչեն: Ֆետայիներէն մէկը կը ծօտեկայ անբացող վերաւորի մը եւ Հրացանին փողը կը դնէ անոր բերին մէջ:

— Ո՛չ, Ատոմ, — կ'ըսէ Սահակ, — ո՛չ: Նախ ինայէ փամփուշտը եւ յետոյ մի՛ ծոռնար որ Հայ ես...

— Բայց խմբապետ, մի՛թէ վատութիւն է վրէժ լուծել: Մի՛թէ շատ է իմ բղկտուած ու խողխողուած կնոջ ու դեւատի աղջկանս դահիճը պատժել:

— Վրէժը պէտք չէ ըլլայ մեր նպատակը, այլ միջոց մը մեր բազուկները ամբասպնելու, որպէսզի կարենանք իրագործել մեր դերապոյս երազը՝ փրկել մեր հայրենիքը, պաշտպանել մեր ժողովուրդը:

Ֆետային պահ մը լուռ կը մնայ, յետոյ հրացանը ետ կը դնէ ուտին:

— Ի՞նչ պիտի ըլլայ ուրիշն այս վերադարձերուն վիճակը, — կը հարցնէ ուրիշ Ֆետայի մը:

— Ատիկա թող իրենց խորհին: Քիչ յետոյ, երբ հոսկէ հետանանք, թող իրենց ընկերները դան ու պէտք եղածը ընեն: Հիմա, ինչ որ մեզ կը հետաքրքրէ, մեզի ձգուած նուէրն է:

Նուէրը արհամարհելի չէ: Ետքը քը-

սան հրացանն եւ քանի մը հազար փամփուշտ:

— Ձեզմէ իւրաքանչիւրը թող վերցընէ հրացան մը եւ հարիւրի չափ փամփուշտ: Ասոնք աւելի արդիական են: Ձերիններն ալ կը բաժնեմ անոնց, որ դէնք չունին, — կը հրահանդէ Սահակ:

Տասնըհինգ երիտասարդներ են, սեւ մազերով ու սեւ մորուքով: Անոնց նախածքը քաղցր է ու անողոք միանգամայն: Անոնք պաշտպան կանգնած են իրենց որբ քոյրերուն, որբ եղբայրներուն եւ այրի մայրերուն: Յաղաղասէր մարդիկ են, զորս ճակատագիրը նետած է զժոխքի մը մէջ: Կը սպաննեն, որովհետեւ չեն ուզեր սպաննուիլ: Կը պայքարին ու կը մեռնին, որովհետեւ ա՛յդ է մարդկորէն պարելու միտք միջոցը:

Իւրաքանչիւրը կ'ընտրէ հրացան մը եւ կը կանգնի մէկ կողմ: Սահակ կը դառնայ դէպի բարձունքը եւ ձեռքերը կը ճօճէ օդին մէջ: Ու յանկարծ, մացառներու տակէն, ժայռերու ետեւէն, մարդիկ կը սկսին խոչանայ բլուրներն ի վար: Հարիւրի չափ կան անոնք, գինւած բիրերով, երկմանիներով, բահերով ու բրիչներով: Մարդկային հեղեղը կանդ կ'անոնէ մեր շուրջը:

— Ձեզմէ ո՞վ գիտէ հրացան գործածել, — կը հարցնէ Սահակ:

— Ե՛ս, է՛ս, — կը պոռան ամէն կողմէ, նոյնիսկ անոնք, որ գեռ հրացանի մը ձեռք չեն զպցուցած:

— Ե՛ս՛տ լաւ, շա՛տ լաւ, — կը պոռայ Սահակ, — սակայն խնդիրը հոն է, որ դուք հարիւր էք, եւ միայն քսան հրացան կայ մեր տրամադրութեան տակ: Պէտք է ուրեմն վիճակ ձգենք:

Ուսմբին մէջ կան տասի չափ կիներ: Տեւտայիններէն մէկը կը փորձէ զանոնք դրկել վիճակի մասնակցելու իրաւունքէն:

— Մեր քոյրերը, — կը միջամտէ Սահակ, — մեզմէ աւելի տանջուեցան եւ յաճախ ենթարկուեցան այնպիսի շարժարաններու, որոնց առջեւ տղամարդն իսկ պիտի ընկրկէր: Անոնք արժանի քոյ-

րերն են մեր կտրիճներուն եւ հաւասար իրաւունք պէտք է վայելին:

Քսան հրացանները կ'անցնին իրենց նոր տէրերուն ձեռքը, որոնցմէ չորսը կիներ են:

— Հի՛մա ունինք երեսունհինգ հրացան եւ բաւարար քանակութեամբ փամփուշտ: Այլեւս կրնանք շարունակել մեր ճամբան աւելի ապահով, — կը բացատրէ Սահակ:

Ու անմիջապէս կը կազմէ երեք խումբ ու կը նշանակէ խմբապետներ:

— Քանի մը ժամ հանդիցէք այտեղ, յետոյ կը շարունակենք մեր ճամբան:

Սահակ, Ջապէլ ու ես կը հետանանք թիչ մը ու կը նստինք ժայռի մը վրայ:

— Այս շրջանը, — կը բացատրէ Սահակ, — գրեթէ ամայի է: Ճիշդ է, որ հոս ալ ջարդեր տեղի ունեցան, բայց շատեր կրցան իրենց կեանքը փրկել ուսական բանակին հետ նահանջելով: Կառավարութիւնը պարպեց թուրք բնակչութիւնը ու մնացին միայն քերտերը: Ռուս բանակին փուլումէն ի վեր, հայկական ուժերը միայն ճակատ կը բռնեն թուրք բանակին դէմ եւ նոյն ատեն ըստիպուած են պաշտպանուիլ քիւրտերու եւ թաթարներու թիկունքային հարձակումներէն: Հայերը չկրցան պահպանել բոլոր ճակատները ու նահանջեցին, խրտացնելու համար իրենց շարքերը: Ինչպէս գիտէք, էրզրումն ու Կարսը ինկան թշնամի դերազանց ուժերու գրոհին տակ: Իսկ տարբեր էր հարաւային ճակատին վիճակը: Հոն, ո՛չ միայն պէտք էր նահանջել, այլեւ պաշտպանել ճամբան բանակին հետ հեռացող հարիւր հազարաւոր հայերու, մարդ, կիներ, երեխայ: Մենք այդ նահանջող բազմութեան յառաջապահ խումբին մաս կը կազմենք: Կեդրոնական մասը հասած ըլլալու է Իգտիբ, Ուրիչ զանգուած մըն ալ Վանէն ու Մշոյ դաշտէն բռնած է Պարսկաստանի ճամբան: Ի՞նչ է վիճակը մեր շրջանին:

— Մենք էրզրումի մօտեւէն ճամբայ ելանք, — կը պատասխանեմ, —

քաղցիւնք զիշեր ու ցերեկ լեռներէն եւ անտառներէն: Թրքական բանակը մեծ պատրաստութիւններ կը տեսնէ ու քանի մը օրէն կը սկսի իր գրոհը: Իրենց առաջին գիծը կը գտնուի բաւական հեռու՝ զէպի արեւելք: Մեր եւ իրենց միջեւ կայ ընդարձակ ամառութիւն մը:

— Ուրեմն թուրք յարձակողականին առաջին գրոհը մենք պիտի ըլլանք:

— Սահակ, — կը հարցնեմ, — քանի՞ հոգի կրնաս հաւաքել շուրջդ այս կարճ ժամանակին մէջ:

— Այստեղէն քանի մը մղոն անդին ունինք բանակատեղի մը, Արծին քաղաքի աւերակներուն մէջ: Քանի մը ժամէն կրնամ զանոնք շուրջս հաւաքել, բայց ի՞նչ օգուտ, անոնք ո՛չ զէնք ունին, ո՛չ զինամթերք:

— Ծիչդ անոր համար ուզեցի հասկընալ: Պէտք է տեսարեմք, որպէսզի թուրքերը մեզմէ առաջ չհասնին հոն: Աստուած մեզի ցոյց տուաւ այդ ճամբան եւ այդ վայրը, որպէսզի օգտակար ըլլանք մեր ազգին:

— Ի՞նչ ճամբայ, ի՞նչ տեղ:

— Անցեալ զիշեր կը քաղցիւնք դաշտավայրի մը մէջէն: Հետուն տեսանք լոյսեր: Մտեցանք զգուշութեամբ: Մեր իւրաքանչիւր քայլին լոյսերը կը ժարէին տասնակներով: Զարմացանք: Երբ բաւական մօտեցանք, մէկ լոյս միայն մընացած էր: Տեսանք անթիւ ու անհամար վրաններ, ու վրաններուն առջեւ տեսանք զինուորներու դիակներ: Խուս բանակատեղի մըն էր, որուն վրայ կարծես անցած էր թունաւոր ու մահացու հոգ մը: Զինուորներուն մասնորոն մէջ կար անբնական թերթ մը, վրան բուսերէն բառերով: Հաս մը պահած եմ գրպանս:

— Ես բուսերէն քիչ շատ կարգաւ գիտեմ, — ըսաւ Սահակ, թուղթը առնելով ձեռքէս: Գարգաջ ու թարգմանեց անոր երկու տողերը:

• Կարչի՛ պատերազմը

Զինուորները դէպի իրենց տուները:

— Բանակատեղին ամայացած էր, միակ բնակիչները դիակներ էին: Երջեցայ հոս ու հոն: Վրաններու շրջանակին

մէջտեղ կար ընդարձակ բացութիւն մը, հոն դիզուած էին բանակին զէնքերը եւ զինամթերքը: Հրացաններ, գնդացիներ, թնդանօթներ, սնտուկներով փամփուշտ ու ուսմբ: Այդ բոլորը կը պատկանի առաջին հասնողին: Եթէ թուրքերը լուր ունենան՝ անմիջապէս կը դրասն այդ բոլորը:

— Մեկնի՛նք անմիջապէս: Այդպիսի զանձ մը կրնայ փրկել աղզը եւ հայրենիքը: Կ'երթանք Արծին ու այնտեղէն դուն կ'առաջնորդես մեզ: Հոս կը ձգենք քանի մը հողի, որպէսզի հասնող կարուաններուն տղամարդերը մեր կողմը ուղարկեն:

Ժամեր կը քաղցիւնք բլուրներու միջայ, դաշտերը ձգելով մեր աջին: Գիտենք, որ հոն, Արարատեան գաւառի արեւելքը, հայկական բանակներ կը պատրաստուին իրենց գերազոյն պարտականութիւնը կատարելու: Տասնեակ մը հազար հայ կամաւորներ, տարիներ է մեր, կը հարուածեն իրենց դարաւոր սուրը: Դաւիթ՝ Գողթաթին զէմ: Մենք ալ այս կողմերէն պիտի ջանանք զիւրացնել անոնց ահաւոր գործը, պիտի ջանանք թշնամին հարուածել թիկունքէն, որպէսզի Մայիսեան այս գեղեցիկ երկինքը հովանաւորէ մեր հազարամեայ եւ արդար երազին իրականացումը:

— Ահաւասիկ մեր բանակատեղին, — կ'ըսէ Սահակ, ձեռքը երկարելով զէպի բլուրներու ստորտը տարածուող դաշտագետները:

Ու կը տեսնենք քաղաք մը, պարսպներով շրջապատուած, փլած ուր տարակներով, հսկայ շէնքերու եւ եկեղեցիներու աւերակներով:

— Մեր հին թագաւորներուն մայրաքաղաքներէն մէկն է այս աւերակ քաղաքը, — կ'ըսէ Սահակ, — Անիէն աւելի հին, Արծինն է:

Տախտակէ խարխուլ կամուրջի մը վրայէն կ'անցնինք գետակ մը եւ կ'ուղղուինք զէպի քաղաքին պարթսպները: Եւ, յանկարծ, աղմուկ մը կը բարձրանայ ներսէն, աւերակները կը սկսին տալ իւր կիներու եւ երեխաներու՝ բազմութիւն:

թիւն մը կը ծնի քարերու մէջէն ու կը վազէ զէպի մեր կողմը:

Քաղաքը շինուած է հսկայ տարածութեան մը վրայ: Մեր պապերուն շինած վիթխարի պարիսպները կը պատըպարեն հիմա մեր կոտորակուած ժողովուրդին բեկորները: Բայց ի՞նչ կը յուսան այս թշուառականները կառչելով կեանքի յատին: Չե՛ն դիտեր, թէ իրենց քոյրերուն եւ եղբայրներուն դիակները կ'ողբան հոն, հարաւի անապատներուն աւաղին վրայ: Հոս անպայման ըլլալու է գերեզմանատուն մը, ուր մեռնողները կը յուսան դո՛նէ հանգիստ քնանալ խաչի մը շուքին:

• •

Սահակ պէտք եղած հրահանգները կու տայ, ուսանց յայտնելու սակայն մեր արշաւանքին նպատակը: Խուճրը կը բազկանայ ձօս հարիւր տղամարդէ ու յիսուկի չափ կիներէ: Լոստին չկայ, բայց մութ չէ գիշերը, որովհետեւ աստղերը իրենց լոյսը կը մաղեն երկնակամարն ի վար: Ու մենք կը քայլենք լուս ու մուկ, ամայի դաշտերու մէջ: Պէտք եղածին չափ արագ շնք յառաջանար, որովհետեւ ո՛չ մէկ ուղեցոյց ունինք ու յաճախ կանգ կ'առնենք ճշդելու համար մեր գիրքը:

Արշաւայրը բացուելու վրայ է ու բաւական խարխափելէ ետք, կը հասնինք ոռոտական բանակատեղին: Վրանները կը նմանին կոնաճեւ դամբարաններու եւ դիակները, մտած իրեն յաւիտեանական քունին մէջ, կը սպասեն մեզի անշարժ իրերու պէս:

Վրաններու կեդրոնը գտնուող բացութեան վրայ, դիզուած են սնտուկներով փամփուռանք, ուժեր, ձեռնառումներ: Թնդանոթները, իրենց անիւներուն վրայ հեծած՝ կը նմանին տարօրինակ սապետներու: Հրացաններ քիչ կան օակայն:

Սահակ իր լուրջը կը հուաքէ բոլորը ու կը բացատրէ կացութիւնը.

— Մէկ ժամէն միւսը, թուրքերը,

որ մեզմէ շատ հեռու չեն, կրնան հասկընալ իրողութիւնը եւ յարձակիլ մեր վրայ: Այն ատեն կը կորսնցնենք այս բոլորը: Պէտք է շուտով վերջացնենք այս գործը ու ինչ որ կրնանք՝ փոխադրենք Արծիւն եւ այն տեղէն բաժնենք առ որ անկ է: Կանոնաւոր աշխատանք է պէտք: Մեր թիւը շատ քիչ է այս գործը դիւրաւ գլուխ հանելու համար, բայց հայրենիքի սիրոյն մեր կարելին պիտի ընենք: Նախ հաւաքենք դիրքերու վրայ դանուող հրացանները եւ փամփուռները, յետոյ կը սկսինք փոխադրութեան:

Արեւելեան հորիզոնը սկսած է արդէն ճերմկիլ: Անմիջապէս կը վազվզենք հոս ու հոն, կը հաւաքենք դիակներու քով գտնուող զէնքերը, փամփուռները, սուրիները եւ ատրճանակները ու գատազատ կը դիզենք բացութեան վրայ: Դիակները ցրուած են վրաններէն շատ հեռու: Բանակատեղին հաստատուած է բարձունքի մը վրայ, որուն արեւելեան կողմը, մեզմ գառիթափով մը կ'ընչէ զէպի հովիտ մը, ուրկէ կը լուսի առակի մը կարկաչը: Կը քայլենք այդ կողմը: Հիմա լոյսը առած է երկինք ու երկիր: Կը հասնիմ առուակին ձօս: Ձիու դիակ մը պառկած է խոտերուն վրայ, գլուխը կը ծփայ ջուրերուն մէջ: Քիչ մը անդին կան ուրիշ դիակներ: Հոգիտը երթալով կը յայննայ եւ ձիու գիակներն ալ կը բազմանան: Գետակը կը վազէ օձապտոյտ: Եւ, յանկարծ, ժայռի մը ետեւը կը տեսնեմ անիւ մը: Քոսանի չափ կառքեր՝ ըով-ըովի շարուած՝ ինծի կը սպասեն: Այս ի՞նչ բախտ:

Անմիջապէս կը վազեմ Սահակին ձօս, ու կը պատմեմ եղելութիւնը:

— Մեր գործը շատ պիտի դիւրանար, եթէ ձիերը ողջ ըլլային, — կ'ըսէ:

— Այդ ո՛չ մէկ կարեւորութիւն ունի, — կը պատասխանեմ, — ձիերը կը փոխարինենք մարդոցմով, ութ հոգի իւրաքանչիւր կառքին եւ կը փոխադրենք ութ անգամ աւելի բեռ:

Սահակ կը կանչէ խմբապետները, որոնք իրենց մարդիկը կը բաժնեն ութ հոգինոց խումբերու:

— Կը տեսնեմ, որ կանոնաւոր գործ կատարած էք: Հիմա պիտի անցնինք աշխատանքի ամենակարեւոր մասին: Հոս ունինք ջրանի շափ կառքեր: Իւրաքանչիւր կառքին մէջ կը բեռցնենք հարիւր հարցան, տասը սնտուկ փամփուշտ եւ մէկ զնդացիք: Ութ հոգի կը յատկացուենք իւրաքանչիւրին ու փոխն ի փոխ չորս հոգի կը քաշեն կառքը: Անմիջապէս որ հասնինք Արծին, զէնքերն ու դիւնամթերքը կ'ամբարիչք բերդին մատաններուն մէջ ու զինեալ պահակներ կը հսկեն գրան առջեւ: Հոն ժամ մը հանդիստ կ'ընէք ու կը վերադառնաք հոս, երկրորդ ճամբորդութեան մը համար: Հարկաւ, ձեր գործածութեան համար կրնաք վերցնել պէտք եղած զէնքերը: Միայն թէ՛ շուտ ըրէք:

Հինգ վայրկեան շանցած, առաջին կառքը կը բեռցուի ու անմիջապէս ճամբայ կ'ելլէ: Տասներորդ կառքը հազիւ ճամբայ ելած՝ դաշտին վրայ կը նշմարենք բազմութիւն մը, որ կը վազէ մեր կողմը: Մարդ մը կը մօտենայ մեզի:

— Ճամբան Ֆետայիներու հանդիպեցանք: Մեզ ուղղեցին այս կողմը, ըսին, որ գործ կայ կատարելիք: Ուրիշներ ալ կու գան մեր ետեւէն:

— Ո՞վ էք եւ ուրի՞նչ կու գաք:

— Տարօնի եւ Վասպուրականի դադթականներն ենք: Թուրք բանակներ կը հետեւին մեզի. քիւրտ ցեղախումբեր կտրեցին մեր ճամբան, բայց մեր քաջ զինուորները յաջողեցան մեզ հասցնել մինչեւ այս կողմերը:

— Շատ լաւ: Այստեղ ունինք թընդանօթներ, որ պիտի փոխադրենք մինչեւ Արծին: Կան նաեւ զէնքեր ու զինամթերք:

(Շար.)

Կը հետեւիք կառքերուն ու կը հասնիք:

Թնդանօթները կառքերէն աւելի ծանրը ըլլալով՝ պէտք կ'ըլլայ իւրաքանչիւրին համար նշանակել ջրան հոգիւնց խումբեր: Մնացած տասը կառքերուն մէջ կը բեռցնենք ռումբեր: Նոր եկողներուն կը տրուի տասական հրացան-կապոցներ կամ սնտուկ մը փամփուշտ երկու հոգիի: Ու մըջիւններու պէս, որոնք կը փոխադրեն իրենց ձեռնալիս պարէնը, հայ բազմութիւնն ալ կը կրէ իր զէնքերը, դաշտերուն մէջ շարժուն դիժ մը գծելով բանակատեղիէն մինչեւ Արծին:

— Ա՛ր, — կ'ըսէ Սահակ, աչքերը ուղղելով արեւմտեան կողմը, — Ատուած տայ ալ մինչեւ իրիկուն գոնէ մեզ հանդիստ ձգեն:

Առաջին կառքը կը վերադառնայ յետմիջօրէին: Երթեւեկը տեսած էր մօտ տասը ժամ:

— Կրկնապատկեցէք բեռը, — կը հրամայէ Սահակ, — եւ թող քսան հոգի թնուի իւրաքանչիւր կառքին: Ինչ որ տանինք այսօր, լա՛հ է:

Վերջին կառքը ճամբայ կ'ելլէ, երբ արեւը կը հանդիչ դիմացի բլուրներուն վրայ: Ճիշդ այդ պահուն, փամփուշտներ կը սուլեն մեր գլխուն վերեւը:

— Շո՛ւտ, — կ'ըսէ Սահակ, — զինւեցէ՛ք ու հեռացէ՛ք բանակատեղիէն, ու մի ձգէք, որ թուրքերը մօտենան կառքերուն:

Ու անմիջապէս Ֆետայիները գիրք կը բռնեն դաշտերու մէջ ու կը սկսին կրակել այն կողմը, ուրի՛նչ կ'արձակուին փամփուշտները:

ՆՈՒԳԱՐ ՉԱՐԵՆՏԵԱՆ

ՎԵՆԻՒՍԻ ՀԵՏ

Հեշտաժպուն մերկութեան դէմ անսահման
 Միջերկրական ծովու լագուրթ ջուրերում՝
 Վառ դիւթանքիդ նառագայթումն է բեղուն
 Միջօրէի գոր արեւուն տակ կը զգամ:
 Վենի՛ւս, Վենի՛ւս, դուն, ծովահարս անմահ,
 Գեղեցկութեան եւ տարփանքի դիցուհի.
 Զուր կը թովես զիս վարսերովդ ոսկեման
 եւ սիրակոչ, հեշտ հայեացքովդ զրգանքի:
 Նոր օրերու զի Արա՛ն եմ Գեղեցիկ,
 Հաւատարիմ՝ լուկ Նուարդին իր սիրուն,
 Սիրտը որուն, կանչը սիրոյն երգեցիկ՝
 Յաւէտ անեղծ, յաւէտ խինդ եւ ու զարուն:
 Արա՛ն եմ ես ու սէրս՝ վէ՛մ անխորտակ
 Հեշտագրգիւս փորձութեանց դէմ ժանտային.
 Ես չեմ քաղեր կեանքիս ճամբու ափունքին՝
 Կախարդագեղ ոչ մէկ սիրոյ մանիշակ...:
 Ո՛չ դուն, Վենի՛ւս, մերկութեամբդ կաթնային
 եւ ոչ մէկ ցոփ եւ վաւառու Շամիրամ՝
 Կրնան դիւթել զիս պատրանքով դիւային,
 Խլե՛լ սրտէս Նուարդի սէ՛րը վառման...:
 Արա՛ն եմ ես, թէեւ հեզ՝ այլ վնասկամ,
 Զեմ երկնչիր սիրոյ ոչ մէկ պայքարէն.
 Իմ պապերուս ըմբռնումով դասական
 եւ ձգտումով ոգեղէն՝
 Փա՛կ է հոգիս ամէնուն...:

..

Բաւ չե՞ն միթէ ծիրանագգեստ կեսարներ,
 Որ քեզ դարեր ակնածանքով պաշտեցին,
 Ընծայելով վարդափունջե՛ր, հարսնուկնե՛ր
 Փառքի բազում, եւ պսակներ պերճագին՝
 Մրտեկի հիւսուած դալար ոստերով:
 Բաւ չե՞ն միթէ, որ Հատրիանն անվեհեր
 Տուա կառոյց կայսերապանծ մեհեանիդ
 Լոկ հմայքիդ ի նուէր.

Վեհ արուեստի եւ ներդաշնակ երանգով
Պոթիչէլլի'ն հանճարեղ՝
Օ՛, գերազանց եւ գեղանորը յղացով
Մարմնաւորեց գեղեցկութիւնդ մեղկագեղ:
Իսկ ես, Վեհի՛ւս, միջօրէի տակ գարնան
Ընկողմանած այեփրփուր քարափին՝
Քեզ ի՞նչ հիւսեմ, սիրե՞րդ մը հեզ ու հեշտին,
Թէ հոգեշունչ համանուագ հովուական:
Ես կը բազմամ պարզել սրտով անձկագին
Մերկութեանդ դէմ մերկութիւններն հոգեկան,
Օ՛, լուսամիտ, քաղաքակիրթ մեր կեանքին
Ու մեր դարուն՝ որուն քարքին իրական
Դուն, անծանօթ ես, Վեհի՛ւս:
Կը մանչնամ ես, աւա՛ղ, մատղաշ աղջիկներ
Եւ տիկիներն ռկեհներ,
Որոնք թէեւ ազնուատիպ կերպարով
Ու նրբաչուի նայուածքով
Անմեղութեան, ո՛հ, շուշաններ կը բուրեն՝
Ի՛նչ հաւատով ու եղկելի ի՛նչ սրտով,
Նայուածքին տակ Աստուածամօր կարելէր՝
Կը վառեն մօմ մրմունջներով յոյժ աղու,
Անխաւելի ո՞ր մեղքն արդեօք քաւելու...:

..

Վեհի՛ւս, Վեհի՛ւս,
Հարկ է շրջիս մերկութեամբդ տարփային
Երդիքներէն եւ մայքերէն յորդալոյս
Նախաստեղծեալ մեր երկրին.
Յազք բռունցքով փշրես դուռներն ուժգնօրէն
Այն գազտնաւառ շէնքուն,
Ուր գրկին մէջ առագաստի՛ ապօրէն
Կը յգփանան ինչքան իզձեր վատանուն...:
Հոգեպարար պատարագի աւարտին՝
Հարկ է կանգնիս տանարներու մայր գրան
Եւ անձնդիք վարժովն անբիծ Շուշանի,
Շունչովն իր քերտ, տիրական,
Խօսի՛ս անոնց, խօսի՛ս յստակ ու մեկին,
Թէ յեն կրնար քոզազարդեալ դէմքերով
Հասնիլ նոյնիսկ Արքայութեան գաւիթին,
Երբ շուայտ են, լեբկ են ու մե՛քկ հոգիով...:

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

Վ Ա Ր Ք

ԿՈՄԻՏԱՍ ԿՈՒՏԻՆԱՑԻԻ

Գ.

Հրո վերյուշը երանելի թիւրիմացութեան մէջ՝ դրեց նախ ճիշդը:

— «Ըստ ասրեգրութեան մը, որուն հեղինակը կը մնայ անծանօթ, Գէորդ Վարդապետ հետը առած Սողոմոն Քիւթահացին, անցաւ ցամաքով ծովեզերեայ քաղաք մը. անկէ նաւ նստած՝ դնաց Սեւ ծովով Պոլիս. առաւ ալը Պատրիարքին. որչա՛ մը դրաւ աջին եւ դուրսը բարձրացնելով աչքով ցոյց տուաւ Սողոմոնը. «Ահա՛, սա է ընտրածս»: Ապա՝ Պատրիարքը. «Ասիկա՞ ընտրեցիր. հա՛: «Հրամանքը, Սրբազան հայր»: Պատրիարքը թէ՛. «Ի՞նչ բարեմասնութեամբ»: Գէորդ Վարդապետ կուրծքը կը բռնէր ու դէպի վեր բարձրացնելով թեւը. «Ձայնի անսպառ զեղեցկութեամբ»: Յետո՞յ. օր մը վերջ Պատրիարք Հօր օրհնութիւնն ու Մայրազոյն Պատրիարքին ուղղուած յերբ ծոցը, Գէորդ Վարդապետ եւ Սողոմոն կրկին նաւ կը նստին եւ կ'երթան ծովով, կը հասնին Պաթում. շողեկառքը դիրենք կը տանի էջմիածին...»:

Վերյուշը ապա ծալեց տարեգրութեանց տոմարը. ձեռքը զարկաւ տնոր կողքին եւ արձանագրեց իր մտտեանին մէջ ճամբորդութեան նկարագրութիւնը այսպէս, առանց չափերս բանալու կամ դոցելու: Բայց դրաւ մեծ փակագիծ մը զբաժին առջեւ ու մոռցաւ փակագիծը դոցել:

Ձոր, փոշոտած, տաք ամառ էր. դաշտահողի վրայ հոս-հոն կարկրանքաւ հին ձմերուկի ու սիխի դեղնականաչ արտեր: Լեռնայանջերուն՝ կանաչ երեզ կամ բուրբակ անտառամասեր: Գիւղեր փռուած լանջերուն, ահերու շուրջ, մերկացած հողերու կուշտին: Ու ճամբան, որ կ'եզերէր այս բուրբէն մէկն ու մէկին փէշը՝ կը տանէր իր վրայէն երկձի կառք մը, որուն մէջ տեղ զբաւած էին Գէորդ Վարդապետն ու Սողոմոն Սողոմոնեանը:

Գէորդ Վարդապետ զեղատեսիլ, միջահասակ մարդ էր. հրապուրել պատանի մը եղած ըլլալու էր ժամանակին, երբ դեռ պիտի-մօրուք չունէր եւ ոչ ալ կուսակրօնի սեւ սքեմը: Կառքին անիւներուն տակէն փախչող սպիտակ փոշին շուրջ-զարձի կատաղութեամբ կը յարձակէր սեւին վրայ: Պեխերու պատրոյզին, մօրուքին: Իր քովը կծկուած նստած Սողոմոնին աչքերը

Թաց էին դեռ եւ ան ճիշդ կը թափէր շապիկին թեւով շորցնել զանոնք եւ սա-
կան կը կեղտոտէր այտերու մօրթը, քիթն ու բերանը:

Կառքը գլուխը առած՝ կը վազէր դէպի արեւելք: Բարձրաբերձ, իրարա-
բամէջ խոնուած, կանգնած լեռներ, կարծես կը պատուարէին ճամբան, որ
ի վերջոյ մօտիկցած մէկն ու մէկին միջոց կը դսնէր սարդելու ձորամէջ կամ
լեռնալանջէ մը կախուիլ: Յաճախ ուղին կող կու տար լեռան, բայց իր աջ
թեւէն կը կախէր անդունդ մը, ուրկէ կը հոսէր արծաթաջրուած կոնակով
անձանթ վտակ մը կամ փփրաբաշ կատաղի դետ մը:

Գիւղամօտ ճամբուն վրայ աքոյր մը լեղապատառ կը կտրէր կտռքին
առջեւ՝ աղեղ մը գծելով. բրդոտ, մերկամարմին, հաշան թուլայ-զամբու
կը դրոճէին թաւալող անիւներուն դէմ ու կառքին ցնցումներէն ներհատ
Գէորդ վարդապետ կը բանար կոպը եւ բիրբիրը զարմանք եւ հետաքրքրութիւն
կը նկարէին արտաշխարհէն:

Հովտամերձ բլուրներու վրայ թաւած գիւղերէն կը լուէր երբեմն եր-
գի պատառիկ մը: Սողոմոն, որ չէր ներհեր, կը սրէր ականջը, սեւեռարիք
Պը դառնար, բայց ոչինչ կրնար որոտլ ետեւ մնացած ձայնի պատասխիկէն:

Կառքը կ'երթար պատմական ուղիներու վրայով: Դարե՛ր, դարեր շա-
րունակ թշնամի բանակներ հոռովմէացի կամ բիւզանդական՝ անցան այս ճամ-
բաներէն հայ աշխարհը նուաճելու կիրքէն կուրացած: Հեծելազօրային զօ-
րամասեր, բիւր-բիւրաւոր ստանաքայլեր հետիոտն բանակներու, անթիւ-ան-
ճամար կառքեր խուժած էին սա լեռներուն վրայ, հայուն դիմադրական կա-
րողութիւնը ջլատելու, ջնջելու նպատակով: Գէորդ վարդապետին կիսաջուն
միտքը կը խոկար եւ ափսոսանքի այրուցք մը կը զգար սիրտին մէջ.

— Ի՛նչ անմիտ յիմարներ էին անոնք... անցան դաջին պատմութեան
բեմէն, բայց կրցան ջլատել մեր կամքը. մնացինք. սակայն ինչե՛ր քաշելով
մինչեւ օրս...: Անոնք ուզեցին մեզ փճացնել եւ այդ կիրքով այ մտան պատ-
մութեան փոշիին տակ. սակայն, մենք ալ դաժան ներկայ ունեցանք...:

Կը խոկար Գէորդ վարդապետ ինքն իր մէջ. Սողոմոն կիսաբաց աշ-
քերով կը տեսնէր անոր գէմքին մթննալը եւ անձայն շարժող շրթունքները:

— Ինչի՞ մասին կը խոկայ... — կը հարցնէին աչքերը տղուն:
— Ի՛. Սողոմոն աղբար, դուն հայերէն գրեթէ չգիտես. մեր պատմու-
թեանն՝ ոչինչ: Մնայի՛ր Գիւթահա, այլազգիներով եւ յոյներով լեցուն օր-
ջին մէջ, պիտի բզկտուէր նկարագիրդ: Կը դառնայի՛ր մանր արհեստաւոր,
կամ շատ-շատ շուկայի մարդ: Մի՛ խորհի՛ր թէ զՄ՛ւրբ-սուրբ կամ ճեւա-
լօտ լուսոյն կանչելով՝ երգիչ կը դառնայի՛ր. խօսկան լեղուն թրքերէն պիտի
ըլլար. ի՛նչ օգուտ մեզի քու այդ կեղծ լեղուդ...: Վաղը, միւս օր, Աստուած
եւ միւր ճամբորդութեան շատուածը գիտեն, թէ քանի՞ օր ետք, երբ ելլես
Կաթողիկոսին առջեւ, հոգ չէ, երգէ թրքերէն սրտի մօտ երգ մը. երգէ՛, օ-
րինակի ճամբար՝ Ուայ-Ուայ մը: Խոռ աչքով պիտի ընդունին մեր հաստափոր
հայրերը. բայց հոգ չընես. Կաթողիկոսը լաւ մարդ է, կը հասկնայ վիճակդ.
Քու թրքերէն երգովդ կը զբոստես իր աղբային ջրղը, աւելի դիմացկուն կը
դառնայ... Իսկ դուն կ'ընդունուիս ձեմարանը, կուսակիցն արեղայ կ'օծուիս
ետքը եւ Աստուած գիտէ յետոյ թէ ի՛նչ...:

Թէեւ խօսքը ուզղած էր Սողոմոնին, բայց աղան ոչինչ լսեց: Գէորդ
վարդապետ կը խօսէր այնպէս, ինքնիրեն, լռելեայն, ինչպէս որ պիտի ու-

ղէր խօսել օր մը մարդէ առ մարդ եւ ոչ այս փոքրիկ տղուն...:
Ե՛ն մնային հեաղճեսէլ շատացող հայ գիւղերը եւ հոս-հոն աղայական
տունները, որոնք դռնաբաց կ'ընդունէին հայը Սուրբը եւ փոքրիկ ուղեկիցը:

Այս Հանգրուանները օդատկար միջոցներ էին, որ ճամբորդութիւնը բլլար Հանգստաւէտ: Գիշերային քունը խաղաղ, սնունդը՝ անպակաս: Աջահամբոյրի պատին ալ կամ եկեղեցիի մէջ հիւրարար պատարագելը ուրիշ՝ հոգեկան խոռոչ եւ ծանօթացման լաւ առիթ, մօտէն Հետաքրքրուելու դիւղական որպիսութեամբ, վարք ու բարքով: Սողոմոնին պատանութիւնը այսպէս պիտի արթննար:

Փորքիկ Սողոմոնը ափ է բերան կը մնար օդի ճոխ սեղաններէն եւ Գէորգ Վարդապետին տրուած պատիւներէն: Կրնար կրկնքի արջայութեան մէջ չպանել այս բաները. սքանչացած էր զինքը պատուող կիներու բարութեան վրայ: Բայց կը զարմանար ուրախութեան մէջ երգուած տաղերուն, որոնք կէս-Հայերէն, կէս-Քրքերէն կը հնչէին. երկար, միօրինակ լալկան չեւաէն չէր ախորժեք. անոնք քնարերութիւն կը պատճառէին իրեն: Երբ կ'արթննար արդէն լոյս էր եւ առանձին՝ հիւրընկալ բնտանիքի քանի մը անդամներու միջեւ մոռցուած:

— Է՛. ըսէ՛ տեսնեմ. լաւ քնացա՞ր. լուեր չխածոտեցի՞ն քեզ...:

Այսպէս կատակ-մանր խօսակցութիւն մը տեղի կ'ունենար ամէն Հանգրուանի յաջորդ օրուան առաւօտուն, երբ Սողոմոն ջուր կը թափէր Գէորգ Վարդապետի ափերուն կուցին, որով զէմքը կը լուար Հայր Սուրբը:

Սողոմոն գլխու շարժումով կը հաստատէր կամ կը ժխտէր հարցումը: Բարակ, նորիւրեկ քմծիծաղով կը լիանար գէմքը: Ու հարցումին զէմ կը դռնէր իրը.

— Դեռ շատ ճամբայ կա՞յ, Արքազամ...:

Մտահոգութիւնը չէր արդէն հարցադրողը: Սողոմոնին մէջ առողջութիւնը կ'արթննար օր օրին. միայն Գէորգ Վարդապետ չհաւնեցաւ «Արքազան»-ը, որ չես դիտեր ի՛նչպէս եկեր թառեր էր մէկէն Սողոմոնին լեզուին վրայ: Մեղք չէր գործածը. օր մը չէ օր մը Սրբազան ալ կ'ըլլար... Ժպտեցաւ: Թրջոտ մասներով կամիթ առաւ տղու այտին.

— Փորդ չկըտացուցի՞ր. լաւ չքնացա՞ր. հը՞...:

— Փորս կուշտ քնացայ:

— Դէ՛. լաւ. ալ ինչո՞ւ կ'աճապարես. հիմակուրե՛ք առ վարժութիւնը ժողովուրդին հետ շփուելուն. փորձառութիւնդ թող կանխէ գիտութիւնը... քանի որ կայ յոյժ մարդ դառնալու դրաւականին. եղի՛ր հաւաքութիւններու սովոր, բան չես կորսնցներ ապագայիդ...:

Սողոմոն շատ բան չէր հասկնար Վարդապետին բառերէն, որոնք կը խլանային յաճախ, երբ կուցով ջուրը կը հարուածէր անոր քիթն ու բերանը: Երեսը սրբած պահուն Գէորգ Վարդապետ կը սիրէր կատակել.

— Ձըսի՛ր, թէ ինչէ՞ն ճանճորոթ կը դրաս... մէկը չկա՞յ, հը՞... երեսիդ խնդացող, կամ, ա՛յ, «նպիս-մողիս» ըտող...:

Ու աչք կ'ընէր Սողոմոնին, երբ այդ պահուն հիւրընկալին փոքրիկ աղ-ընկը շեղ-շեղ նայելով տղան կ'անցնէր քովէն: Սողոմոն լուրջ տղայ էր, ինքնամփոփ, լուկեաց, ներդործ նկարագրով ու բնաւարութեամբ, ունէր սուր միտք, կը հասկնար ու կը մերժէր Հայր Սուրբին կատակը. կ'ըսէր իրը.

— Երգերը քնարեր են. երկա՛ր, ուրո-մուր, միօրինակ... չեմ սիրեր, քունս կը բերեն...

— Կեցցե՛ս, Սողոմոն, ճի՛շդ ես, ուր՞-մուր, միօրինակ, անտա՛ջ... երբ մեծնաս, խորճ տաշել-յղկելու մասին. իսկ այժմ պատրաստուելու ենք մեկնելու. շատ ճամբայ ունինք կտրելիք. զնա՛, ըսէ՛ կառապանին, որ միե-բը լծէ...:

— Հրամանքդ, Արքայազն, — կ'ըսէր ու կը վաղէր Սողոմոն կառապա-
նը գտնելու:

Արքայազնը պելխին տակ կը ժպտէր: Պէտք էր թողուլ տղան սխալի մէջ.
մեղք չէ՞ր իր կոշտամբին անօրհնէք ու անծէս տիտղոսով բարձրացումին: Կու
դար անշուշտ ժամանակը, երբ իրապէս պիտի կրէր այդ կոշտամբը: Ինք պէտք
ունէ՞ր Աստծուն հաշիւ տալու. քիչ մը դուարձութիւնը շատ չտեսնուէր
թող... Սողոմոնը անմեղ տղայ էր, չէր արժեք պղտորել անոր միտքը՝ սը-
խալներ երեսին տալով: Կրնար չըմբռնել ու չհասկնալ բացատրութիւնը...

Այսպէս էր, որ հանդրուանէ հանգրուան՝ քիչ մը աւելի ծօտիկցան ի-
րարու Գէորդ Վարդապետն ու փոքրիկ Սողոմոնը: Օրերը, դաշն կապած,
հետեւեցան մէկզմէկու, երկնցաւ անոնց շարքը. Երկուշաբթին հասաւ շաբա-
թադրուխ. շաբաթը դիպուեցաւ շաբաթի վրայ, սակայն ամիսը երկար օրեր
ունէր ամբասն. ամառը պտղաբեր էր. իսկ աշունը դեռ չէր երեւեր: Ժամերդ-
րերուն յաճախ կանգ առին սելի կամ ձմերուկի համտեսի համար:

Օրերուն հետ եղասայլը փոխարինեց երկմի կառքին, ի շքոյէ սմբա-
Պաւօր կենդանիք. դաշտային ջերմը նետեց ճամբորդները լեռնալանջերու
զով տրահեաներուն վրայ: Արահեանները լեռնադաշտերու վրայ երկնցած ե-
րկի դարձան ու ամբաստունք ջորիներ, ի վերջոյ, տարին իրենց կոնակին հե-
ծած Գէորդ Հայր Սուրբն ու ասպագայ սարկաւազցուն:

Որովհետեւ ինկած էին հայաշխարհի բարձրակուսակ լեռնաստանը,
Գէորդ Վարդապետին տրամադրութիւնը յարափոփոխ եղաւ: Ժպտան ու մաղ-
ձը խաւնուեցան իրարու: Սողոմոնին սիրտէն ահի ու զարմանքի զոյղ անպա-
կաս մնաց: Վախը կու գար ջորիէն, որ սմբակները կուտացնելով խիճերու եւ
ցցուն ժայռաբեկորներու վրայ, երբեմն ուշթաքումի փորձութիւնը կ'ունե-
նար, բայց չէր գլորուեր ու անկուժ չէր ունենար, զառիվար կածաններէ ի-
ջած ժամանակ:

Կանցնէին մերկ, շոր լեռնախարհէ մը. դիմացը կ'երեւէին մանիշա-
կադոյն քողի տակ ծածկուած սարալանջեր, ձիւնահեր դազաթներ: Գետն-
ու, ազրիւրներու քջջոցը երբեմն կ'ընկերանար ճամբաներուն, յաճախ փա-
խուստ կու տար: Մէկզգի ինկած դիպուր կը կանչէին Աստուծոյ հիւրերը դէ-
պի տուք օճախը նախամարդու կերպարանքով մարդոց: Ամէն տեղ Գէորդ
Վարդապետ ախնածանքի եւ կրօնական ջերմեռանդութեան ցոյց մըն էր եւ
առիթ, որ Սողոմոն արժեցնէր ձայնը եւ Գիւթաշխայն բերած աննանսթ եր-
դեր հրամայէր հիւրընկալ մարդոց...:

Սողոմոնին երգացանկը ճոխ չէր արդէն. մէկ քանի կտորտուքներ, ու-
րոնց ամբողջացման մէջ իր յիշողութիւնը տարիքին բերումով սուր. չէր կըր-
նար ըլլալ: Այն ատեն կը կանչուէին գեղջուկ երգացանցներ եւ չորան ազաք,
որոնք իրենց ձայնը մարգած էին լեռներու վրայ, ծործորներու մէջ զտած
արձազանդներուն ունկն դնելով: Սողոմոն ամօթով կը մնար թէեւ, բայց աչք
ու ականջ կտորած կը լսէր գեղջկական երգերն ու շուրջկարերը:

Ու ամէն առաւուս միեւնոյն յանկերգն էր, որ կը կրկնուէր Գէորդ
Վարդապետին եւ Սողոմոնին միջեւ:

- Ի՞նչ քաղիք. Սողոմոն. լաւ քնացա՞ր. ի՞նչ երազ տեսար...:
- Լաւ չքնացայ, Արքայազն. մտեղ կար ականջիս տակ...:
- Մտե՞ղ...:
- Վըղոց մը, որ դադար չունէր...:
- Ա՞յ, շարանճի, մարդոց երգին կ'ակնարկես, հա՞...:
- Գէորդ Վարդապետ, որ լրած էր Արքայազնի կրկնութեան համար, ժը-

պիտ մը կը խոցցնէր թաց երեւոյն վրայ եւ թըջնու զոյդ մատներով կը կրճարթէր Սողոմոնին այտը, ըստ սովորութեան:

Կ'ուրախանար Սողոմոն ներքնապէս, որ իրենց միջեւ եղած շաղակրատանքը մտերմութենէ կու գար: Կ'աճապարէր ուրեմն վրայ տալ:

— Երթում ըսէ՞մ ջորեպանին, որ ջորիները փայլանէ...:

— Ո՛չ. ան արդէն պատրաստած է կենդանիները... Իսկ դուն լսէ հոգիւին ձայնը, որ հօտը լեռը կը տանի արածելու:

— Հովիւը սրինգով կը տանի հօտը. ձայնէն ան աղքատ է. անով շուները կը հաւաքէ գայլին դէմ...:

— Կեցցե՛ս. Սողոմոն. դուն արդէն խելօք բաներ կ'ըսես. ես պէտք է յուշատարիտ մէջ զբանցեմ զանոնք, իբրեւ փաստ եւ յիշատակ...:

Ջորեպանը ձայն կու տար.

— Անասունները կաղմ ու պատրաստ են:

— Լա՛ւ, այ մարդ. զնացի՛նք...:

Այս անգամ անոնց ուղին կ'անցնէր դալարաւէտ լեռնակողէ մը. Հովիտ մը կանաչ կողակներ ունէր վարը: Վերէն կը քլօքլային փոքրատեսիլ ջրովէժներէ փախչող զլլգլան շուրթեր: Աղբիւր մը սառնօրակ ջուր կը հոսեցնէր տեղ մը: Մարտի մը ճիւղերը ձեռք կը նետէին ճամբորդները ճանկելու: Ու Սողոմոնին զիլ ձայնը երբեմն բեկուժ կ'ունենար: Ահա զեսնասուրէ՞ մը, որ զլուխը հաներ էր ժայռաբեկորի մը ետեւէն, պահուրտուք խաղալու պէս: Արեւի լոյսը կը շողար անոր զորջ զանգին վրայ: Վայրի նապաստակը նետի պէս կը նետուէր քարի մը տակէն — սուր ահանջները անքէն ըլլային կարծես — ու կը սուրար լեղապատառ մոլուցքով մը: Կաքաւեհբու երած մը թոռալով կը բաժնուէր ծերպէ մը: Իսկ ջորիները ուրախ, կայտառուն, ահանջնին շորս հովին բերած ձայներու՝ կը ուրակուհարէին շոր գետինը. խրաձայն խրխինջ կ'արձակէին, երբ զով հովը կենդանական հոտեր թխմէր անոնց սունդէն ներս:

Ջորեպանը, ծնած ու մեծցած հայերու մէջ, քրտինք թափած անոնց աշխատանքին մէջ, թիկունքին հրացանին կոթը բռնած — ձեռքին զաւազանով կը ձեռէր ճամբորդի մացառները եւ ի լուր Սողոմոնի «ա՛խ, անան անան» երգին՝ շափ կու տար, կրկնելով ինքն իրեն համար. «ջա՛ն, ջա՛ն»:

Ետեւ մնացած ճամբան ոլոր կու տար լեռնացուկի մը ետին. զոյնները կը խտանային. լեռ լեռի վրայ կը դիզուէր. դաշտերը կ'անհետանային քարակէն պատնէշներու ետին: Մանրչակագոյն մշուշ մը կը ծածկէր խորտուբորտ եկղբեր, լեռնախորշերուն ծուարած զիւղական տուները. կը հաւատարեցնէր բարձրարեքձ կարկանդակներ, խոր ծերպէր, ձորակներ եւ ընդհանուր սմբողութեան մը մէջ անոնց կու տար միադիժը հորիզոնի մը, որ շատ հեռու կը թուէր...:

Իսկ գիժա՞ցը: Քիւրտ ջորեպանի ուսերէն վեր կապոյտ երկինք մը, որուն մէջ խրուած կը թուէին անհամար լեռնապագաթներ: Օդը մեղմ էր. արեւը լուսաւոր, չըջնապատճճ՝ ամայի: Ոչխարի հօտ մը կ'այլիտէր լեռնակողը: Հողաչերտի մը վրայ ինկած արօրը կը քաշուէր զոյգ մը եզներէ, որոնք պճշակները խրած հողին, ուժ կու տային իրենց վղակոթին ու ծանրօրէն կը տանէին խոփը փոքրիկ ահօսներու մէջէն: Աղքատ էր արտը հողէ, ժայռադուիններով բղկտուած: Մաշած բանկոնը թիկունքին, շալուարին կեղտը զորջ-պիտակ, գլխուն փաթթած ապարօշին ճօթերը հովին, ահա՛ զեղջուկ մը, որ մաճին հետ ինքն ալ կը շարժուէր սա քիչ մը նեղ հողաչերտին վրայ:

— Ձիգ տո՛ւ. քաշի, ա՛ եղբ... — կ'երպէր մանկայրը:

— Աստուած՝ օղնական...:

— Օրհնեա՛լ, Տէր, — կանգ առած էր դիւղացին. կանգնած են յոգնած եղները ու աչքի տակէ կը նային անցնող ջորիներուն, որոնցմէ մէկուն կ'ոնակին սեւ սքեմաւոր մը բազմած է եւ Աստուծոյ օղնութիւնը կը ցանկայ իրենց շարքաշ կեանքին համար:

Անցած են մարդ ու ջորի. գեղջուկն ու իր եղները մնացեր են ետին: Սողոմոն չի կրնար հետաքրքրութիւնը պարտկել:

— Ինչո՞ւ մարդը բարձրացեր էր այսօրն վերկրը վար ընելու...

— Կտոր մը շոր հացի համար, Սողոմոն. պահէ այս պատկերը յիշողութեանդ մէջ. պէտք կու գայ օր մը...:

Սողոմոն կը յիշէր իրենց թաղին ջրկիր տղան: Ինքն էր եղած միթէ այդ տղան, որ հոս-հոն կը վազվզէր, ատր-անոր յանձնարարութիւնը կը կատարէր, պատէ պատ կու տար դուրսը, որպէսզի մէկ-երկու փարան տուն տանէր եւ հօրաքոյրը ձեռամբաց աղօթէր:

— Այսօ՛ր ալ կտոր մը շոր հաց բաշխեցիր մեզ, Տէ՛ր Աստուած...

Միջանկեալ վերջիւումը անմիջապէս կանգ առաւ: Գէորգ վարդապետ պիտի շարունակէր:

— Դուն, Սողոմոն, սրամիտ տղայ կ'երեւիս: Այդ մարդը, որ արեւն քրտինք մտած էր եւ հողաշերտը կը հերկէր՝ ունի տկուր, սոված մեծ ու սղոթիկ. հողը իրը չէ. դիւղին աղան կամ դրացի քերտոր իրմէ դրաւած է գայն պարաքի կամ ուժի ցուցադրութեամբ: Բայց ճանօթի ենք պոռացողներ ունի: Կը վարէ որ ցանէ. ցանքահաւաքէն ետք մեծ բաժին կ'երթայ անոր շինարարին մէջ... Ը՛ր ժամանակ, որ անօր պատը գինուր էր, բանակին մէջ նախարարի մը. կար հայու գլխուն նստած թագաւոր: Բայց կային եւ ժողով-հետու շար, աչքածակ թաղաւորներ, որ անհամար զօրք ունէին: Հոռով կար, Յոյներ կային. եկան արարը, պարսիկը, թաթարը, սելճուքը: Ասոնց դէմ մէկ գլուխ թագաւոր ի՞նչ կրնար ընել: Կուտեցաւ քաջարար: Կեղծիք եւ գաւաճանութիւն անպակաս եղան: Ինքնազուտի մարդիկ թագաւոր դարձան. երկիրը բաժնեցին, փոքրացան, կղզիացան. իսկ թշնամին միշտ ծեծեց հայուն դուռը թէ. «Բա՛ց. եկայ որ քեզ ջարդեմ»: Ինկա՛ թագաւորը. ուրիշ մէկը չկրցաւ թագաւորել: Աշխարհին մեծ պատուհասը մեր գլխուն՝ երկուքը եղան — մէկը՝ պարսիկը եւ միւսն ալ՝ դուն կը հասկնաս արդէն, սա՛ թուրքը...: Կործանեցան քաղաքնե՛ր, գիւղեր, շէնքեր: Ժողովուրդը եղաւ ցիրուցան: Քու պատուգ պատկերն ալ ելան դաղթեցին. Գողթանն էր ձեր հայրենիքը, Քիւթահանն եղաւ բնակութեան վայրը: Եւ դիտե՛ս, թէ ո՛ր է Գողթան աշխարհը. հետո՛ւն, մեր գիմացի լեռներուն ետին:

Քիչ դադարէ ետք, Գէորգ վարդապետ, ինքնաբերաբար երգեց քիթին տակ.

«Արդեօք գալո՞ւ է մի օր, ժամանակ.
Տեսնե՛լ Մասիսի գլխին մի դրօշակ...»

Սողոմոն, որուն ջորին կը հետեւէր Գէորգ վարդապետին — ականջները սրած՝ մտիկ ըրաւ խուլ երգը. բառերը անհասկնալի էին. եղանակը սրբատուր եղաւ:

— Այդ ի՞նչ երգ է, — Սրբազան:

— Ազդային, — Գէորգ Վարդապետին երզած եղանակը ինքնահնար-
ած էր տեղւոյն վրայ:

— Կարծեցի եկեղեցական է. տխուր շեշտ ունէր...:

— ձիւղ է. տխուր է. տխուր մարդու հողիէն բխածը տխուր բուն
կ'ըլլայ...:

Շուրջը նայեցաւ: Ամայութեան մէջ կը գտնուէին: Գէորգ Վարդապետ
ուզեց անակնկալ մը եւս ընել Սողոմոնին: Այդ օրերուն ամէնուն շրթունքին
վրայ էր դարձեալ երզը, որ «Մայր Աբաբախ» կը կոչուէր...:

— Սողոմոն, մտիկ ըրէ՛ ինծի. երբ եղանակին խորքը հասկնաս՝ հե-
տեւէ՛ ինծի: Այն՝ որ պիտի երզեմ՝ տխուր շեշտ ունի քիչիկ մը. բայց իրա-
կանութեան մէջ մարդիկ քունէ կը հանէ եւ խորհուրդ մը ունի. սերունդներ
ու սերունդներ զայն պիտի երզեն, մինչեւ որ...:

Գէորգ Վարդապետ քակեց ինքզինք կրօնական կապանքներէն: Առջե-
ւէն քայող քիւրտ ջորեպանին եւ Սողոմոնին վրայ ուշ չգրաւ: Սիրտը կ'ու-
զէր բանալ պերճօրէն բազմած բնութեան վրայ: Թէեւ չըջանին մէջ արդիւ-
ւած էր «Աբաբախ Արտատուքը» երգելը, բայց Գէորգ Վարդապետ ազատու-
թիւն տուաւ ձայնին ու ազգային բնազդներուն: Երգեց «Պարի»-ն, դարիւ խը-
փելով, վիսխելով էին լայազիմս—ը թաւ ձայնով, պատարադային շեշտի հըն-
չեղութեամբ, կոնաւոր ելեւէջներով թաւալուն: Երկնամերձ բարձունքներու
վրայ, ազատ բնութեան զիրկը, բէթմիկ կճոտուքովը ջորիներու հանած սըմ-
բակներուն — երզը կը բերէր կորով ու խանդ, յիշատակներու յառնում,
ափսոսանք եւ ձգտում: Գէորգ Վարդապետ չէր զգար նեղ կամանին վայել,
որուն վրայ ոտք կը դնէր ջորին: Էջըը թեք էր. վարը՝ խորխորատ: Սողո-
մոնին սիրտը կծիկ-կծիկ կը զողար վայրէջքի ահէն: Փակած էր ջորիի կըտ-
նակին: Հեղեղներէ սրբուած սալի մը վրայ ցատք ունեցան ջորիները: Քիչ
եւք ճամբուն երիւր պիտի ձգուէր վեր եւ հետզհետէ լայնար: Սողոմոնին
սիրտը արօփեց ուրախ տկտկոցով: Գէորգ Վարդապետ կը շարունակէր երզը
ինքնամոռաց ջերմութեամբ:

Դադարին, քիւրտ ջորեպանը ըսաւ հայերէն.

— Զայնք անսպա՛ռ, Հայր Սուրբ. Մայր Արաքսին կը ճանչնամ. դեռ
է. գեաէն անդին էջմիածինը կայ, մէջը՝ կաթողիկոս նստած...:

— ձիւղ ես, հոն է, որ կ'երթանք ես եւ Սողոմոնը: Կ'ուզես, քեզ կը
կնքենք հայ...:

— Ես կը սիրեմ դիրենք. իսկ կնքուելէս ձեռք քաշէ, Հայր Սուրբ. գայ-
լերու մէջ վայլ մնալը ձեզի համար լաւ է, — ու խնդալով կրօնակ դարձուց
ու քալեց:

Գէորգ Վարդապետը կատակ ըրած էր մարդուն հետ: Ինքն ալ բարձ-
րաձայն խնդաց եւ զառնալով ետ, Սողոմոնին աչք ըրաւ.

— Այժմ, մենք պիտի երզենք մէկ ուրիշ երգ, նոյն ժամանակներուն
զրուած ու երզուած: Իմաստի ու խորքի նոյնութիւն կայ: «Մանկութեան
օրեր երազի նման» սողով կը սկսի: Ապա ձայն բարձրացնելով կարելի է եր-
զել «Ազատն Աստուած»-ը: Քիչ մը ըմբոստ է. յեղափոխական. հոգ չէ. մենք
մեզի ենք. վերջէն կ'իջեցնենք թօնը, ձայնային խորիտ ելեւէջը քնարական
կը դառնայ. կ'ապրինք «Ես լսեցի մի անուշ ձայն»-ով: Ասոնք կ'երգեն հիւ-
սիսային կողմն աշխարհին: Հոստեղերը անոնք կը նկատուին արդիւնալ պը-
տուղներ. ով որ փորձէ երզել — կը մերկանայ կեղծիքէն. ազդային գոյն կը
ստանայ եւ դիւրին որս՝ պատկան իշխանութեանց:

Գէորգ Վարդապետ չէր անդրադառնար, թէ իր խօսքերը քժուարա-

մարտ էին տասներկու տարեկան Սողոմոնին Համար: Բայց տրամադրութիւնը տեղն էր եւ խօսելու, շագակրատելու ցանկութիւնը՝ մեծ: Սողոմոնի հոգին կ'աշկերտուէր: Ըսած երգերը շերտութիւն կը ջարձէին մարմինն: Միաքը կ'աշխատցնէր, պահել յիշողութեամբ, անոնց տուած տպաւորութիւնը, եղանակի ընդհանուր Հնչեղութիւնը: Ափսո՛ս, որ չէր հասկնար բառերը. մայրենի լեզուէն մերկ էր ու բուսիկ: Կը ցաւէր ու վախ կ'ունենար, երբ կը մըտածէր, թէ քննութիւն պիտի անցընէր Կաթողիկոսին եւ Սրբազան Հայրերու ներկայութեան, էջմիածինի մեծ դահլիճին մէջ...

— Սրբազա՛ն, դու լաւ մարդ ես, ըսածներդ ու երգածներդ կ'աշխատիմ հասկնալ. երանի թէ դուն ըլլայիր իմ ուսուցիչս...

— Այդի՛ս, Սողոմոն. ուսուցիչ ըլլալ չեմ կրնար. բայց ճիշդ պիտի չիմայնեմ, որ քու նկարագիրդ կոփուի հայրենասիրութեամբ: Աստուած մեծ է եւ քեզ օգնական կ'ըլլայ...

Կիսատ մնաց խօսքը: Կանգնեցուց ջրին եւ ակնով տուաւ հեռուէն եկող շնային Հաջոցներու: Սողոմոնի ջրին անպատրաստ էր կանգաւորումի. դնաց զարնուեցաւ առջեւի ջրիին: Գէորդ վարդապետ պիտի իյնար վար: Ինքն ալ պատրաստուած չէր նման ցնցումի: Սողոմոն ձեզաւոր կը զգար ինքզինք: Կը յուէր հայհոյանք մը, որ փախուտ կու տար վարդապետին շըրթունքներէն.

— Ա՛նծին անասուն. ափսո՛ս, որ մայրդ ձի է եղեր եւ ոչ թէ է՛լ...

Հայհոյանքին շարունակութիւնը պիտի խափանուէր անակնկալով մը: Չեւ դիտեր ուրիշ՝ փրթած՝ վրայ տուին հովիւի քանի մը շուներ: Գայլախղդ դամբուր էին, Հաստալիկ, մեծգլուխ, բարձրակազմ: Ջորիները խորտակեցան առաջին նուազ. ապա սմբակներով միջոցը Հարուածեցին: Սողոմոնը ստեղծեցաւ մէկ կողքի վրայ: Կապուած էր. չիմկաւ վար: Գէորդ վարդապետ իջաւ դետին. շտկեց սեւ սքեմին փէշերը:

Շուններուն հետ երեւան ելան բարձունքի մը ետեւէն երկու զրօպներ, որոնց քովէն կը ցցուէր Հրացանի փողը: Ուրիշ մը, մանրահասակ աղեկ մը մեռելի ունէր հովուական սրինդ: Քիւրտ ջրեպանը կ'ազգարարէր օդին մէջ փամփուլտ մը կրակելով: Նորերը նոյնպէս քիւրտեր էին: Աւելի ծերը, աղւամազ, սպիտակ մօրուքը դրաւ Հրացանի փողին եւ սաստեց Հաջան շուները, որոնք մէկդի քաշուեցան ու լռեցին:

— Ներող դատուեցէք, Քէշիշ Պապա. շուն են, չեն հասկնար հիւրին յարկելիութիւնը: Ո՛ւր, այսպէս, բարով-իւրով... եթէ ամօթ չըլլայ հարցընելը, — ծերն էր խօսողը:

Գէորդ վարդապետ ըմբռնեց հեղնական շեշտը, որ դրուած էր քիւրտի հարցումին մէջ:

— Աստուծոյ ճամբորդներ, — ըսաւ միայն եւ աչքը նետեց միւս զինուած քիւրտին վրայ:

Սողոմոն, որ շտկուած էր ու կրկին նստած ջրիի կոնակին, սարսափի դող մը կ'անցընէր: Առաջին անգամ կը տեսնէր քիւրտեր: Իր յիշողութեան մէջ թուրքն ու քիւրտը կը մարմնաւորէին դուրսում, ջարդ ու ժաշ: Հիմա ան միտքին մէջ ունէր մահուան պատկերը: Մակայն, կը տեսնէր Հայր Նորբէր անվախ, բայց տեգունած դէմքով: Զինեալ քիւրտը մօտիկ-մօտիկ կ'ընէր իր հեծած ջրիին: Տղեկը կոթնած էր մայրի մը եւ ակնասպիւն՝ կը գիտէր զինք:

— Սրբազա՛ն, զիս պիտի սպաննեն, — ճշաց:

— Մի վախնար. մազիդ դաշնոյ չ'ըլլար, — ըսաւ քիւրտ ջրեպանը, որ

եկեր քովը կոնզնիեր էր: Ու դառնալով դէպի զիւրաք, ազգարարեց — «Ռա-
շիդ պէկին են ջորինները, չհամարձակիք...»:

Սողոմոնին բարտը ժպտեցաւ այդ կէտին: Հրացանով զիւրաք քակեց
զիւրաքի նայուածքին սարսափը: Իջաւ հրացանը ուսին. դէմքը ժպիտ առաւ,
սուաւ: Գէորգ Վարդապետին յօնքերը վեր բարձրացան: Ծեր զիւրաք բարի
արամադրութիւն ցուցուց:

— Որ պէկին անունով կը ճամբորդէք, մեր հիւրն էք. միայն ներողա-
միտ եղէք տղուս, որ իր կորսնցուցած ջորին ստուգելու համար մտեցած
էր: Ջորինները ջորի են եւ իրար շատ նմանող... Թիւրիմացութիւն եղաւ.
կը ներէք, Քէչիշ Պապա... հրամմեցէք մեր օրան:

Գէորգ Վարդապետ իջնուց յօնքերը:

— Ի՞նչ մը չէ. շնորհակալ ենք հիւրասիրութեան ձեր հրաւերէն. եր-
կար տեղ ունինք երթալիք. թէև ջորին ջորի է ժիշտ, բայց նմանութիւննե-
րը իբրտ հազուադիւս են... Կրկին սնգամ շնորհակալութիւն հրաւերին
համար:

Քիւրտ տղեկը սրինգը բերանը առած էր: Երբ փոքրիկ կարուանը ճամ-
բայ ինկաւ եւ բաւական հեռացած էր, լսելի եղաւ սրինգին ձայնը: Սողոմոն
դուրսը ետին դարձուց: Քիւրտ տղեկը նստած էր ժայռին ու կը փչէր զըն-
տական եղանակ մը, որ այնքան քաղցր թուեցաւ Քիւթաշիացի Սողոմոնին:

Գէորգ Վարդապետ խօսքը դրաւ ջորեպանի ականջին.

— Ապրի՛ս, այ մարդ. խորամանկ եղար. սուտք կրնամ ըսել փրկու-
թիւն մը եղաւ մեզի համար: Կ'օրհնեմ քեզ եւ Աստուած օգնական...:

— Քիչ է օրհնութիւնը, Հայր Սուրբ, ինծի պէս խեղճ ու կրակ մար-
դուն պէտք է օրհնութիւն հնչական, — ու ջորեպանը բթամասը քսեց քանի
մը անգամ ցուցամատին:

— Նիւթապաշտ ես, կը տեսնեմ. ցեղիդ առաքինութիւնը չես փոխած,
հայերու մէջ ապրելովդ: Ձեմ ուրանար ծառայութիւններդ. վերջին հան-
գըրուանին յիշեցուր պարտքը:

Քիւրտ ջորեպանը կրկին կոնակը ետ առած՝ կը քայլէր ուրախ: Իրեն
համար հարցը լուծուած էր: Այդ էր պատճառը, որ ան լօ՛-լօ՛ երգելով կ'ըն-
թանար, ձեռքին գաւապանը օւժով-ուժով ճամբեղրի մացառներուն խփելով:

Սողոմոն, սակայն, հմայուած էր Գէորգ Վարդապետի արտասու կեց-
ւածքով: Ահա կատակ կ'ընէր ջորեպանին հետ: Խօսքի խառնուելու մարմա-
լը դինք մղեց ըսելու.

— Կ'ըսէիր, Սրբազան, մէկ հայրապետ կայ. ի՞նչ կը նշանակէ հայ-
րապետ...:

— Կաթողիկոս...:

Լսեց. խոկաց ինքնիր մէջ. ժպիտ ու լրջութիւն փոխն ի փոխ եկան
տեղ գտնել դէմքին վրայ: Չափազանցութիւն էր լռելը: Տեղն էր, որ վերջ-
նականօրէն Սողոմոն ըմբռնէր սխալը: Կատակախառն ըրաւ թելադրութիւնը.

— Ինծի՛ նայէ, Սողոմոն, մինչեւ հոս սխալմունք կար: Եկո՛ւր. շտակենք
սխալը. այսուհետեւ ինծի տուր իրական կոչումիս համապատասխան տուր-
քը. ըսէ՛ «Հայր Սուրբ» փոխան «Սրբազան»-ի, ոչ դուն բան կը կորսնցնես
եւ ոչ ալ ես բան կը շահեմ «Սրբազան» կոչուելէն:

— Բերանս վարժուած է Սրբազանին:

— Վարժուէ, տղա՛ս. դպացումի մարդ մի՛ ըլլար: Սրբազան ըսուելու
դեռ ժամանակ ունիմ: Երբ զիւրաք հոգիս շառաւ, ա՛լ դժուար թէ հոյի
տամ...:

Եւ Գէորգ Հայր Սուրբը բարձր քահ-քահ մը ձգեց :
Արահետը լայն էր, անվտանգ, Սողոմոն քահ քահ ջրին. երբ հաւասարած էր ինք Հայր Սուրբին, կիսաձայն փսփսայ .

— Կ'ուզեմ որ շուտով Սրբազան կուռիս, Սրբազան Հայր... :

Գէորգ Վարդապետ ձեռքի բարակ ճիւղատով դպաւ Սողոմոնի ուտին .

— Սրբաձանկութիւն է ըրածդ, տղայ . մի՞թէ կը մարգարէանաս : Քու տարիքիդ՝ մեր Յիսուս-Քրիստոսը Կանա ջաղաքին մէջ լուրը գինիի փոխեց . իր առաջին հրաշագործութիւնն էր :

Արահետը, որ միշտ լեբան կողը կը տալէր, ստիպուած էր դառնալով մը նուաճել : Գազաթին յայտնի դարձաւ, որ ան դէպի ձոր պիտի խուժէր : Գէորգ Վարդապետ եւ Սողոմոն իջան ջրինընտու կոնակէն : Ջորեպանը ինկաւ անասուններուն մէջտեղը, քիչ առաջինը, ետեւէն քաշելով երկրորդը : Գէորգ Վարդապետ զգուշացուց Սողոմոնը սայթաքելէ եւ ինք իջաւ առջեւէն : Ջորինընտու ոտատակին խճեք պար կու գային . բարակ փոշի մը ապա կը պատէր պահ մը ճամբան :

Վարը ընդարձակ ձոր մը կը տարածուէր : Յետմիջօրեան արեւը արծաթագօծած կը թուէր պետի մը մէջը, որ կը հոսէր դանդաղօրէն : Ո՛րն էր Հայրենի ծանօթ դետերէն սա մէկը : Արդեօք Արածանին չէ՞ր : Գէորգ Վարդապետ ինչեւի՜տ հանդերձ, կ'ապրէր պատմական օրերը երանելի ժամանակներուն : Կը վերակենդանացնէր Արշակունի արքաները, բայց ափսոսանքով կը վերջիչէր անոնց կործանումը : Ժամանակին սրբազան գեա նկատուած էր : Քրիստոնէութիւնը հոս էր, որ պետական դարձաւ : Գէորգ էր, որ Մեծն Տըր-զաա իր վերջին օրերը անցընէր ճգնելով : Թագաւոր մը պէտք էր մնար իր բարձրութեան վրայ, սիրաէն աւելի ուղեղ պէտք էր մեղի : Ահո՞՞ս, որ մենք միշտ զգացական եղանք... :

— Սողոմոն, էջըը դժուար է եւ ոչ հաճելի, շոյնեցա՞ր... որգի՛ :

Ետեւէն կ'իջնէր Սողոմոն, զգոյշ, ամէն քայլափոխին ամբաստանելով սաքը կոխած տեղը : Երբ քնապէս ան կը զգար, թէ ճամբորդութիւնը կը մօտնար իր վախճանին : Քանի մը օրեր եւ ահա աշունը կիսուած կ'ըլլար : Պիտի մտնէր Ճեմարան . բայց պիտի կորսնցնէր Գէորգ Վարդապետին մօտիկութիւնը : Իր փոքրիկ գլխուն մէջ կը դառնար ու կը դառնար ապագային վախը ու տարուած երազներով, շփոթախանայ Վարդապետին հարցին :

Վարդապետը կանգ առաւ : Սողոմոնին դէմքը մթնցած կը թուէր :

— Ձեռքդ տուր ինծի . կ'երեսի վայրէջքը դժուար է . քաշէ՛ք միասին, հող չէ թէ կածանը մեզ միասին չկարենայ պարտկել : Կ'իջնէ՛ք, ահա այդ հովիտը եւ անկէ կը կտրենք կ'անցնինք քանի մը լեռնաշղթաներ . մեր երկիրը հարուստ է լեռներով, բայց մենք մեր լեռներու նման ուժեղ չեղանք... քաշէ՛ք, քաշէ՛ք... :

Կ'իջնէր նաեւ Չորեպանը, երկու ջորիներու միջեւ կապ եղած : Ու ջորիներու ոտքերուն հանած փոշիի սայթաքումներուն պատճառով խրթիւրթոցի ընկճէջէն կը լսուէր քիւրտ մարդուն հայերէն երգը, որ կը թուէր խաղաղեցնող զգուշաւորութեան շոյիչ զգուշանք մը .

Կամաց էջէ սելերը
Կտրամ սրտիս քիլերը...

Իսկ հանգրուանը շատ հեռու էր, ճամբան՝ երկար :

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

(Շար. 2)

Մ Ա Յ Թ Ե Ր Ը

Ինձի կը թուի,
 Թէ քեզ տեսած եմ,
 Բայց չեմ յիշեր ո՞ւր:
 Աչքերն այն ազուր, գոր դուն ունիս լոկ
 Յիշատակ ունին պահած այն տեղէն:
 Ես գիտով տղայ՝
 Մայքերուն վրայ
 Այնպէ՛ս կ'երգէի,
 Երբ քայլերուս տակ մտնուած իղձեր
 Կը մտնանային
 Եւ տաք լոյսերէն — գիշերը երբ գար —
 Արցունք կը շողար.
 Մովափ կ'երթայի
 Ալիքներուն մէջ ուռկան նետելու,
 Կը կարծէի, որ
 Մայքերուն վրայ կոյս մը քիչ տառջ
 Առջեւէս անցաւ ու ծով նետուեցաւ:
 Բայց ի՞նչ խենթ կատակ
 Մի՞նչու առաւօտ:
 Բառե՞րը արդեօք գիտ կը տանչէին,
 Երբ կը կանչէի,
 Իսկ ծովուն խորէն անունս միայն
 Արձագանգ կու տար.
 Ես ի՞նչ գիտնայի
 Անունն այն ազուր, գոր դուն ունէիր:
 Աւագին վրայ
 Աստղեր կ'իյնային.
 Ի՞նչ հաճելի էր
 Աւագը գրկած ափ-ափ ծով նետել:
 Ես կը քաչի մայքերուն վրայ
 Մի՞նչու հեռուր կապոյտն անուրջին:

Ազրաթափ մարդիկ ապրիլ կը կարծեն
 Երբ ամէնօրեայ մաշած կօշիկներ
 Գիտեն ուր կ'երթան:
 Մայքերուն վրայ
 Պատմութիւն մը կայ...

Ինծի կը բռնի,
 Թէ քեզ սիրած եմ,
 Բայց չեմ յիշեր ե՞րբ:
 Հոգին այն ազուր, գոր դուն ունիս լոկ
 Ափսոսանք ունի պահած այն օրէն:
 Ես բախտեցայ՝
 Մայքերուն վրայ
 Լոյսը դեռ հազիւ
 Կոսկրէս կախուող բունը խանգարած.
 Գիշեր մը առաջ ես լացած էի
 Փեղկերուն դիմաց
 Մինակ մնացած...
 Ու երագեցի մայքերուն վրայ,
 Որ իսկոյն մէկէն
 Գարնան չափ շքեղ
 Իզն մը կը ծնի
 Կու գայ ետեւէս, կը հասնի ինծի
 Ու զիս կը տանի ծանօթ մայքերէն
 Մինչե՛ւ հեռուոր կտայտոն անուրջին,
 Ուր ես կ'երթայի...
 Ու գիշեր մը ետք
 Մայքերն ալ լացին...
 Ես ի՞նչ գիտնայի
 Անունն այն ազուր, գոր դուն ունէիր:
 Մութ փողօցներէն երբ մարդիկ անցան՝
 Պատերուն վրայ քանի մը բիծեր
 Մնացին լոյսի.
 Բիծերն այդ լոյսի
 Գոյն-գոյն բեւառք երգերուս նման
 Թելաքիկ ինկան:
 Ազրաթափ մարդիկ մեռնիլ կը կարծեն,
 Երբ ամէնօրեայ բոսիկ քայլերգներ
 Գիտեն ուր կ'երգեն:
 Մայքերուն վրայ՝
 Պատմութիւն մը կայ:
 Ինծի կը բռնի,
 Թէ քեզ կոչած եմ
 Բայց չեմ յիշեր ի՞նչ:
 Մայքերուն վրայ
 Սիրուած բան մը կայ...

ՇԱՀՊԱՆ

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

Կ Ը Ր Լ Յ Ր Է Ն Տ

Հսկայ շինութիւն մըն էր, որուն մէկ սենեակնոց յարկաբաժինը վարձած էի: Հազիւ քանի մը ամիս ոնց՝ նամակ մը եկաւ շէնքին տէրերէն, որ շատ գոհ են ինձմէ, միայն՝ «քննարկութեան բարձրացման պատճառաւ, ամսական տասը արար աւելի պէտք է տաս, շնորհակալութիւն»: Արդէն սուղ էր եւ կը մտածէի վայրկեան մը առաջ ինքնաշարժ մը գընել, որ կարենամ գործատեղիէս հեռու տեղ մը տուն վարձել եւ աղատուիլ:

Օր մըն ալ գնեցի ինքնաշարժ մը: Անունը գոմէթ է, մէքքիւրիներուն ընտանիքին կը պատկանի ու նախահայրերը Փորտ անունը կը կրեն:

Ամէն ինչ սկսաւ լաւ ըլլալ, դիւրանալ: Սկսայ յարմար բնակարան մը փնտռել. բաւական թափառելէ ետք, երկրորդ յարկի վրայ սա տունը գտայ: Գեղեցիկ տուն մը. երբ տանտիրուհիին հետ կը խօսէի, ըսաւ.

— Աղջիկ մըն ալ ունիմ, քեզի աղտոք կրըլ ֆրէնտ կ'ըլլայ:

Պահպանութեան շխտակը. անմիջապէս կանխավճարը տուի:

Անշուշտ խանդավառութիւնս յայտ-

նի չըրի. այստեղ, այնտեղ նշմարուող սխալ բաները ցոյց տուի, ու սպառնացի զո՛ր շմայտու պարագային տունէն ելլել. բայց խեղճ էի. ասանկ առիթ մը ուրկէ՞ ձեռքս պիտի անցնէր: Աղտոք տուն էր. ճի՛շդ ուզած կողմս պատըզամ կար. պահն ալ բանաստեղծական էր. օրը կը մթննար. օ՛, չէ, կ'իբրիկնանա՛ր. շուքերը կ'երկարէին ու Ռոլիկ շիրիֆ բլուրներուն վրայի տուններուն լոյսերը, մէկիկ-մէկիկ, կը վառէին:

Մարմինս փուշ-փուշ եղաւ: Սկսայ մտածել: Արդեօք ի՞նչ տեսակ աղջիկ է: Մեծ հայրս միշտ կը կրկնէր ու կ'ըսէր, «եբբ առիթը ներկայանայ, խոտը քաշէ արմատին նայէ». եթէ աղջկան արմատը այս կրկն էր, դէ՛ չէր, առողջ, գեղեցիկ. յայտնի էր, որ ամէն որ կը խնամէր ու կը յարգարէր ինքզինքը:

Ուզածս ալ ասանկ աղտոք աղջիկ մըն էր:

— Ե՛րբ պիտի փոխադրուիս, — հարցուց տանտիրուհին:

— Կ'ուզեմ վազն իսկ գալ, — ըսի:

— Տունը պիտի մաքրեմ. գալ շաբաթ եկուր, — ըսաւ:

Այնքան կ'աճապարէի, որ կարծես շատ պիտի ուշանայի, կարծես մեծ առիթ մը ներկայացած էր. շատ երկար թուեցաւ մէկ շաբաթը:

— Փոխադրուելէն ետքը մաքրեցէք, — ըսի:

— Պիտի ներկեմ, — ըսաւ:

Սիրտս նեղուեցաւ, բայց համակերպեցայ:

Անհամբերութեամբ կը սպասէի, որ գալ շաբաթ ըլլայ. օրերը կը համբէի. օրացոյցին զիմաց դեռ այդչափ երկար կայնած չէի. գործի տանն ալ անդադար ժամացոյցիս կը նայէի. ի վերջոյ, օր մը ֆորմէնը ըսաւ.

— Եթէ ժամանակը հասնի, զանգը կը հնչէ, գործի՛դ նայէ:

Ես ժամացոյցին չէի նայեր, թուականին կը նայէի:

Կերեւակայէի ազջիկը, մտքովս հետը պտոյտներու կ'երթայի. նոյնիսկ մինչև Քաթայինս կղզին դացի. գեղեցիկ ճաշարանի մը տոջեւէն անցած ասանս, «հոս կը բերեմ զինքը», կ'ըսէի:

Դրամական հաշիւներս ըստ այնմ կը կարգադրէի:

Տանտիրոջս երկրորդ անգամ բսի, որ պիտի փոխադրուիմ ու նոր տանտիրուհիս ալ ըսի.

— Գալ Զորեջշարթի կու գամ: Պէտքով ընկերներուս ու այն թերթերուն, որոնց բաժանորդագրուած էի, հետադրեցի, որ այսինչ թուականին նոր տուն պիտի փոխադրուիմ, ուրեմն բարեհաճեցէ՛ք թերթը նոր հասցէին դըրկել:

Ամէն մարդ լուր ունեցաւ: Ի վերջոյ եկաւ օրը: Հարսանիքի գացողի պէս ուրախ էի:

Բայց քիչ մը դժուար եղաւ. ասանմինն կրկնի ապրանքներս, մինչդեռ քոյրերս, եղբայրներս, զարմիկս, ամէնն ալ լուր ունէին. նոյնիսկ թորէնէն Պոստոն թերթիս հետաձայնած էի, որ պիտի փոխադրուիմ. բայց ոհւէ մէկը չէր եկած. անշուշտ քեռիս չէր կրնար Պոստոնէն մինչև հոս գալ, բայց միւսները հոս

էին, մօտս. մէկը կամ միւսը կերպով մը կրնային գալ եւ օգնել:

Ես ալ ամէն ինչ բերեմ եմ հետս. դիտնայի բո՛ն մըն ալ չէի բերեր. ա՛խ կ'ըսէի. հեղ մը սա զգիտնայի բառէն ազատուէի. կեանքիս մէջ ամէնէն շատ այս բառը կ'ատեմ, ամէն առիթով կ'ըսէի.

— «Գիտնայի», կ'ընէի, «զգիտնայի», չէի ընէր. «զգիտնայի», կ'երթայի, «զգիտնայի», չէի երթար. «զգիտնայի», այսպէս կը խօսէի, «զգիտնայի», այդպէս չէի վարուեր. հիմա ալ՝ «գիտնայի», չէի բերեր:

Դժուարաւ վերջացուցի փոխադրութեան գործողութիւնը: Եունչ մը առնելու համար հագիւ նստած՝ կ'էնտէլէն քոյրս հետաձայնեց.

— Փոխադրուեցա՞ր:

— Այո, — ըսի:

Ուրախութիւնը յայտնեց, բայց ես գոցեցի հետաձայնը. շատ յոգնած կը զգայի, բայց այդ յոգնութիւնը ոչինչ էր վաղուան երջանկութեան աղջեւ: Մտածեցի մինչև աղջկան գալը շտկել տունը. ճիշդով մը սկսայ շտկել. շատ ուրախ էի. արդէն նախապէս որոշած էի ապրանքներուն տեղերը: Յարգարումը կատարուեցաւ արագ:

Իրեկունը Լոնկոյիէն միւս քոյրս եկաւ. սիրեց տունը ու միասին որոշեցինք զբաղարան մը առնել, առնել ուրիշ նոր ապրանքներ ու ինչ որ պէտք էր:

Քրոջս հետ կը խօսէինք, մինչ ականջիս ուղղութիւնը դէպի դուրսն էր. անգամ մը այս աղջիկը տեսէի՛, կ'անցընէի մտքս. կ'երեւակայէի հասակը, մարմինը:

Քոյրս գնաց. աչքս դուրսն էր. ներս գալ չէր ուզեր. ի վերջոյ շատ ուշ էր պահը. յոգնած էի. անորձակ վաղուան ձգեցի. մտայ որ, այլեւս հոս էի, պէտք չկար անպարհելու:

Գիշերը, երբ լոյսը պիտի մարէի, կնոջական սոնամայն մը առի աստիճաններուն վրայ. եկաւ, սենեակիս մօտէն անցաւ. հետացաւ քիչ մը. դիմացի դուրս

ուր բարոյեցաւ, ու «չըրփ», նորէն դոց-
ւեցաւ :

Աղջիկը եկաւ, անցուցի մաքէս :

Յաջորդ առտու կանուխ զործի դա-
ցի. անուշտ աղջիկը մշիկ-մշիկ կը քնա-
նար. իրիկունը ուշ եկած էր, կը մտածէի
այն մասին, թէ արդեօք ի՞նչպէս պի-
տի հանդիպէինք իրարու : Իրիկունը պա-
տըրուակով մը կը խօսիմ հետը, կ'ըսէի
ես ինծի :

Բայց իրիկունը նորէն չկար աղջիկը .
դրան առջեւը ի դուր սպասեցի իրեն .
մթնցաւ կատարեալ, բայց դեռ չկար,
անցած էի ներս եւ ոտքի մայրերուն կը
սպասէի. ի՞նչ կրազներ հիւսած էի : Գի-
շերը նորէն ուշ եկաւ :

Առաջին շաբաթը շտեմայ աղջիկը .
իսրը անիծածս, կ'ըսէի, ի՞նչ կ'ընէ,
ո՞ւր կ'երթայ արդեօք :

Բայց մայրը ամէն օր կը տեսնէի,
մայրը բարի, մարդամօտ կին մըն էր,
զիս շատ հաւնած էր :

Իրիկունները, երբ ամուսինը դար,
դուրսը կանանչ խոտերուն վրայ կը նըս-
տէին. զիս ալ կը կանչէին. ես ալ ան-
կեղծօրէն կը յարգէի զիրենք, իրապէս
ամէն ինչ լաւ էր. միայն աղջիկը չէր
տեսնուեր. տակաւին մէջտեղ չկար :

Կինը սուրճ կը բերէր, կը խմէինք .
ստոյիէն-անդիէն խօսակցութիւն մը կը
սկսէի, զոր դարձնելով-դարձնելով կը
բերէի աղջկան, ու կարծես նոր միտքս
եկած էր, կ'ըսէի .

— Այսօր չերեւցաւ ձեր աղջիկը :

— Այսօր չէրիին հետ դուրս ելաւ,

— կը պատասխանէր :

Երկրորդ անգամ .

— Այսօր ձէպը դուրս տարաւ զինքը :

Ուրիշ օր մը .

— Այսօր Պիլին հետ շարաթափերը
անցընելու գնաց :

Կը ջղայնանայի. երէկ այնինչին
հետ, այսօր այնինչին հետ. վաղը միւ-
սին հետ. գործը դտանք, կ'ըսէի :

Այլևս կ'ամնայի հարցնելու աղջը-
կան մասին. իրենց ալ հոգը չէր, թէ ո-
ր՞ու հետ կ'անցընէր օրը :

Օր մըն ալ տղաքը հանդիստ ձգէն,

կը մտածէի. Աստուած իսկ եօթներորդ
օրը հանդստեան օր կուից : Աղջիկը կըր-
նար զոնէ եօթներորդ օրը հանդիստ ը-
նել . բայց այնքան շա՛տ տղայ կայ, որ
շարթուան օրերը բաժնած էր անոնց մի-
ջեւ . . .

Բոլորովին յուսահատ՝ շատ-շատ
ձեռքս զիբք մը կ'առնէի, կը կարգայի .
եւ իբրեւ այրած սրտի մխիթարանք, կ'ը-
սէի .

— Գիբքն է, որ մարդուն ապագան
կը կերտէ :

Ամբասներ անցան, բայց տակաւին
չէի տեսած զինքը. ուշ ատեն կու գար.
Երբ արթուն ըլլայի՝ վարպետներին հոտ-
ւէն դաղտագողի կը նայէի : Արտու կը
ճմուռէր. պարապի էր այսքան յոգնու-
թիւն . նախկին շէնքին մէջ, զրացիներ
ուս մէջ, ատանձին ապրող աղջիկներ
կային, ամէն անգամ իրարու հանդիպել-
նուս՝ «հա՛յ», կ'ըսէինք ժպտելով. մինչ-
դեռ հոս, դեռ աղջկայ երես շտեմայ :

Կիրակի մը, կէսօրէ հտք, երբ առ-
տիճաններէն կ'իջնէի, զիմացս ելաւ յան-
կարծ . «հա՛յ», բուս, ինծի նայելով .
գեղեցիկ էր, քոտներորդ դարու վերջին
նորածեւութիւններէն. մազերը ճիշդ ու-
զած երկայնութեամբս կտրուած ու ի-
ջած էին ականջներն ի վար . կապոյտ
աչքեր ունէր, ճիշդ երեւակայած աղջիկ
էր . յոյսերս վերականգնանացան. դեռ
կեանքը առջեւ էր . ճամբաս շարունա-
կեցի. զիտնայի՝ ե՛տ կը դառնայի. յար-
մար առիթ էր. կը նշանակէ, որ այսօր
տունն էր :

Իրիկունը դացած տեղէս կանուխ
վերադարձայ, կերպով մը ծանօթանա-
լու ու տեղ մը հրաւիրելու համար, նո-
րէն չկար :

Բայց տակաւին ականջիս մէջն էր
իւր «հա՛յը» : Ի՞նչ անկեղծ, տաք բարեւ
մըն էր. կարծես շատ սերտ բարեկամ-
ներ ըլլայինք. մօրը պէս մարդամօտ կ'ե-
րեար :

Նոր տարին կը մօտենար : Կր մտա-
ծէի, թէ ինչպէ՞ս պիտի անցընեմ : Ամե-
րիկայի առաջին նոր Տարին էր. կը խոր-
հէի, որ աղջիկը առեւը կ'անցընէ, ծը-

նողքին հետ. զիտ ալ կը կանչեն, ու միտ-
սին Նոր Տարին կը դիմաւորենք. անկէ
ետեք ալ աղջկան հետ կ'ըլլա՛յի:

Բայց, դժբախտաբար, առանձին ան-
ցուցի այդ զիշերը: Քոյրս եւ եղբայրս
կանչած էին, չէի գացած, պատրուակե-
լով, որ հիւր պիտի ունենամ:

Վարիներն ալ գացած էին շեռ զի-
տեր ո՛ւր, անանկ որ, տունը առանձին
էի. Խթոտին վրայ նստած՝ սկսայ խոր-
հրդածել, յուզուած էի. ելք մը չէի
կրնար զաննլ տառապանքիս. միտքս կը
թափառէր, մանկութենէս մինչեւ Հի-
մա քնաւ ուրախ օր մը չէի անցուցած ու
միշտ ալ յոյսով էի, որ յաջորդ տարին
լաւ կ'ըլլայ, բայց ամէնն ալ նոյնն էին,
զրկանքի նոյն օրերը, տարիները:

Դեռ այսչափ առանձին չէի անցու-
ցած Նոր Տարուան զիշերը. պատկելու
որոշում տուի. վարէն ինքնաշարժի մը
ձայնը առի. ասնտէրներս եկած էին. կը
խորհէի, որ աղջիկը իրենց հետ է. բայց
անոնց հետ չէր. ամուսինը երեք անգամ
հաղոց. Եթէ ամուսինը երեք անգամ հա-
զար, կը նշանակէր, որ յոգնած են ու
պէտք է պառկին:

Ձգրցայ քնանալ. Հարցերով խնդ-
ւած էր միտքս. ուշ տտեն էր նորէն,
աղջկան քայուածքին ձայնը առի. եկաւ,
զուտը բացաւ, դոցեց, բայց գոցելէն հա-
քը դուռը կամայ մը նորէն բացուեցաւ.
արդեօք ինչո՞ւ համար նորէն բացաւ,
խորհեցայ. հագիւ այդ մտածումին մէջն
էի, աղու մեղծ քայուածքի մը ձայնը
լսեցի. տղան ուղղակի ներս մտաւ. դու-
ռը կամայ մը նորէն դոցուեցաւ. ան-
շուշտ Նոր Տարին պիտի դիմաւորեն,
անցուցի մտքէս: Քունս ամբողջովին
փախաւ: Արդեօք ինչպէ՞ս պիտի դիմա-
ւորեն Նոր Տարին, կը մտածէի: Տղան

չէր մեկներ. Ժամանակը կ'անցնէր, բայց
տղան հոն էր դեռ. մեղծ կարծիք լոյս
մը կը վառէր ներսը. արդեօք ի՞նչ կ'ը-
նէին ներսը, ձայն ալ չէր ելլեր:

Աւտուան զէ՛մ տղան մեկնեցաւ. ո՞վ
զիտէ ի՞նչ լաւ Ժամանակ անցուցին. տը-
ղան կրնար աւելի ուշ երթալ: Կ'երեւայ
ուղեց, որ մեծ մամոն արթննալուն՝
զինքը անկողնին մէջ զանէ:

Եթէ այս անգամ ալ Հարցնէի կըն-
կան, թէ ինչպէ՞ս անցուց ձեր աղջիկը
Նոր Տարին, արդեօք ի՞նչ պիտի պա-
տասխանէր:

Պատասխանելիքը միտքս եկաւ ու
բարձրաձայն ինքեցի...:

Եւ եղաւ լոյս. Նոր Տարի, ու տար-
ւան առաջին օր. ետքը ուրիշ օրեր.
բայց աղջիկը այլեւս տուն չեկաւ. առաջ
զոնէ սաղին ձայնը կը լսէի ու տոտվ կը
միտիւարուէի, միայն ոտքին ձայնը ին-
ծի՛ բաժին ինկած էր, բայց հիմա ան-
կէ ալ զրկուեցայ:

Օր մըն ալ տեսայ, որ ապրանքները
կը տեղափոխուին: Հարցուցի մօրը.

— Ամուսնացաւ, — բաւ:

Բարեւո՛նի աշտարակը կործանեցաւ.
Չղայնացայ, բայց զպեցի ինքզինքս:

— Աչքդ լոյս, — ըսի, — որո՞ւ հետ
ամուսնացաւ:

— Մայքին հետ:

Վեր ելայ Չղայնացած. երբ դուռը
դոցեցի՝ Հայհոյեցի իրե՛ն ալ, աղջկան
ալ:

Որոշեցի այստեղէն ալ փոխադրը-
ւել: Երկու օր ետք նոր տուն մը գտայ.
Երբ կը մեկնէի կրնը աղբ մը կը փակ-
ցընէր.

«Վարձու եմ երկու յարկարսփննեք
մեծերուն համար միայն, երկխոսները
չեմ ընդունուիր, շուները՝ օ քէյ»:

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

ՅԱԿՈՐ ՓԱՓԱԶԵԱՆԵ Ր Կ Ր Ա Գ Ո Ւ Ն Տ Ը...

Ե Ի

Պ Ա Ր Ա Պ Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ Ը...

...

Պիտի չգիջիմ սիրելի կոչելի քեզ, եթէ նոյնիսկ ասիկա վերջին նամակս
ըլլայ եւ դուն միակ բարեկամս...

Սպաննե՛լ... փորձա՛ծ ես ընաւ, ես յանախ երագած եմ, եւ գո՛ւ՛վ կը
կարծես երեսակայած եմ սպաննել, կեղծաւո՛րքը, օտա՛րքը, քշնամի՛ն, վա՛-
տը... ոչ, քեզ եւ միա՛յն քեզ, որովհետեւ դո՛ւն պիտի կրնայիր հասկնալ,
թէ ինչո՞ւ կը սպաննեմ... Հիմա, միայն քեզի կը գրեմ վերջին նամակս, ո-
րովհետեւ դո՛ւն պիտի հասկնաւ, թէ ինչո՞ւ կը գրեմ: Ուշադրութեամբ կար-
դա՛, թերեւ գուշակես եւ հասկնաս ելածը... Միօրինակութիւնը, ճանճոյ-
քը, առանձնութիւնը...: Որպէսզի այս վնասական վայրկեանին չզգամ, թէ
միմեկ եմ, մերկայութիւնդ, որուն ամէն վայրկեանէ աւելի պէտք ունիմ, կը
քաջալերէ զիս, որ այնչափ քաջ ըլլամ ձեռքս դիմացի երկաթին երկարելու...
Կը զգամ երկաթէ փողը, եթէ առաջինը կրակեմ... առաջինի մասին չեմ մը-
տածեք, արդեօք ուժը կամ գիտակցութիւնը պիտի ունենա՞մ երկրորդը կրա-
կելու: Անձեւ, փշրուած, արիւնոտած գլուխ մը պիտի մնայ այս բոլորէն,
ողջ ըլլալ եւ դիտել այդ դժբախտը, որ միշտ իմս եղած էր, բարձր, մարմ-
նէս վեր դրուած:

Թէեւ անիմաստ, սակայն թո՛ղ որ զգամ քեզ օգնելու գոհունակութիւ-
նը առնուազն: Եթէ գիտնամ այս բոլոր տառապանքին սկիզբը, եթէ կայ այն
գեղազոյն ուժը, քեզի անպայման կը տեղեկացնեմ: Գիտեմ արեւմտաբնակա-

նօրէն պիտի խնդաս, նոյնիսկ արհամարհուած գգայու գիտակցութիւնը գո-
նունակութիւն կը պատճառէ: Արհամարհանէ՞ք իբրեւ ընկեր, կը քաջալերէ
գիտ ձեռքս երկարելու... Միմակ չեմ, դուն չկաս, սակայն դիմացս կայ թէ՛
ընկերս, թէ՛ թշնամիս, որ ինծի համար վերջ պիտի տայ սուէն իմաստի...

ԺԻՐԱՅԻՐ

Նոյն քաղաքին մէջ ապրող բարեկամէ մը, որ նման քննութիւն չու-
նէր նամակով մը իրեն հետ խօսելու, գարնացուցած է վարդգէտը, որ անվի-
շապէս վերցուցած էր ժիրայրին անունը կրող պահարանը, կարդացած... յե-
տոյ կամաց մը ծոնով՝ հանած էր մնացեալ նամակները եւ գոցած նամա-
կատուիք: Իրագութեան մը առջեւ ըլլալու հանգամանքը շատ հանդարտ տը-
րամադրութիւն մը կու տար իրեն, տրամադրութիւն՝ յագուելու, խղճալու:
Նուազգոյն գգացումը չէր արտօներ ինքզինքին այս տղուն հանգէպ, որ
ճարմարի չորութեամբ զիտած էր մարդիկը եւ ինքզինքը. սակայն անցեալի
մը պատկերները սկսած էին իրարու յաջորդել մտքին մէջ...

Սիրոյ առեւտուրի յայտարարութիւններով լեցուն փողոցին մէջ, գի-
շեր մը, իջած էին շէնքէ մը...

Այդ շէնքը քանդուելու չափ գայրոյթ ու ատելութիւն կար ժիրայրին
մէջ... Հանոյ՞ էին այդ փողոցները մարդոց շատերուն, սակայն հանոյ՞
գգացումը չհամտեցած ժիրայրին համար բացառութիւններ չկային, երէ
նոյնիսկ այդ սեռը ըլլար: Սակայն կնոջ մը մերկ մարմնին առջեւ, միայն
պահ մը, շատ կարճ, տարուած էր... անմիջապէս վերադառնալու այն որոտ-
կերին, որ իր կեանքին առաջին ամբողջութիւնը գրկած, գարգուրացած էր վը-
րան: Ձեր կրցած դիմացը կեցող կիներ իր ունեցած պատկերէն տարբեր տես-
նել, միտը վերացած, կորսուած էր... Առանձնաբեանը մէջ իր կիրճովը ան-
սանձ տղան, կենդանիի մը անկարողութեամբ, տնջանաբեր առարկայի մը
նման դուրս դրուած էր սենեակէն՝ պռոնկիկ մը արհամարհական խօսքե-
րուն տակ...

Իջած էին եւ մէկի ազոտոտ հոտերով լեցուն փողոցին մէջ կեցած պահ
մը: Մօր մը պատկերը խնորհի վրայ չէր դրաշմուած, որ դիւրութեամբ կա-
րելի ըլլար աներեւութացնել... Ժիրայրին համար բոլոր հարցերը անոր կը
նմանէին, եւ ան դուրս կը վազէր ինքզինքէն՝ միւսները տեսնելու համար:
Մարդոց դէմքերուն վրայ փնտռումէ մը սկսած էր... Անոնք այդ փողոց-
ներուն մէջ բազի մը չափ իրական էին, պէտք էր պատուի գանձի, փնտռել
աւելի իրականը հոն... եւ փնտցնել: Մօտը. սրճարանէն եկած նարթի ծայ-
ները, դեղին մագերով, շպարուած բոզի մը անցքը, եւ անկուշտ աչքեր, մէկի
ազոտոտ հոտը դարձեալ եւ վարդգէտը, որ պարզապէս կեցած էր: Ժիրայր
զարձու անոր.

— Լիաթաք շնչէ՛, թող այս հոտը լեցուի թոքերուդ մէջ, բոլոր ազ-
ոտոտ մարդոց եւ կեդրոններդ վրայ լեցուի այս պժգալի հոտն ալ: Լա՛ւ շնչէ,
մեզի պէտ մարդերը միգած են հոս... Շնչէ՛, մարդոց միջեւ տարբերութիւն
չկայ հոս, նոյն կիրքերն են, որ հոս բերած են գիրենք, եւ նոյն գահուճա-
կութիւնն է, որ կը դրկէ գիրենք հոսկէ: Բայց ես, մարդկային ո՞ր դասա-
կարգին պիտի դասուս գիտ, երբ հաս նոյնիսկ չկրցայ նոյննալ բաշարին հետ...
Կարգին պիտի դասուս գիտ, երբ հաս նոյնիսկ չկրցայ նոյննալ բաշարին հետ...
Կարգին պիտի դասուս գիտ, երբ հաս նոյնիսկ չկրցայ նոյննալ բաշարին հետ...
Կարգին պիտի դասուս գիտ, երբ հաս նոյնիսկ չկրցայ նոյննալ բաշարին հետ...
Կարգին պիտի դասուս գիտ, երբ հաս նոյնիսկ չկրցայ նոյննալ բաշարին հետ...

Ձեռքերը գրպաններուն մէջ. քարացած աչքերը կարծես պիտի ուռէին եւ պայթեցնէին փոքրիկ գանկը. կզակը կը դողար. պահ մը լռեց ինքզինք հաւաքելու եւ հազիւ կրցաւ ըսել.

Ձեմ ուզեր Անկախութիւնդ, քեզի համար գնա՛, կ'ազաշեմ գնա՛, դուն չըլլաս այդ գոհը...

— Ես ընկերդ չեմ այս պահուն, սնցորդ մը, որ պարզապէս քաղկէ կը քալէ, — պատասխանեց վարդգէս:

— Ըսէ, թէ չես ուզեր զիս մինակ ձգել, այդչափ...: Տքամարանութեանդ ոչինչ կ'ըսես: Կը մեղմնաւ վրաս, կ'ուզես օգնել՝ միտքարեղով կամ քանի մը անպէտք խօսեցրով: Միտքարեղ սրամազդութեան մը մէջ, որ ոչինչ կ'ընդունի:

Ժիրայր կեցաւ պահ մը, վարդգէս տակաւին կը մնար մօտը, չէր հասկնար զինք, եղածը պարզ պատթկում մը կը ճկատէր: Առանձին էր ինք, ոչ իսկ վարդգէս մասնաւոր իմաստ մը ունէր: Բան մը, որեւէ բան, որ ինք կարենար քանդել... հապա երբ մարդկային ձեւ ունեցող մտակո՞յտ մըն էր այդ: Այդ պահուն իր խորձակները կը կրկնասպասուէին եւ ձեռքերը զըրպաններուն մէջ կը դնէր՝ ինքզինք գտպելու համար:

— վարդգէս, յստակ ըսէ, թէ կ'ուզե՞ս սպաննուիլ:

— Եթէ կրնաս, այո՛, պիտի դիմագրեմ, եթէ յաղթես, ոչինչ, կը մեռնիմ, այլապէս դուն չըլլաս գոհը:

Քրտնեցնելու վարժուած ժիրայրը իր կորուստներու ցանկին վրայ նար մը կ'աւելցնէր, չէր տազնապար անով, իր սովորական ապրումներն էին անոնք: Իսկ վարդգէս ամբողջ ուժգնութեամբ կ'ապրէր ընկերոջ տագնապը: Մանր կեանքով ապրած այս սղաքը, դէմ դիմաց, իրաւաբանիւրը միւսին նակտին կայար մը ստանաւորութեան գամելու քաջութիւնը ունէին, կրնային, պարզապէս կ'ընէին: Իրենց պատանեկութենէն մինչեւ երիտասարդ տարիքին իրական պատկերը կը տեսնուէր հիմա: Քով քովի կը քալէին, լուռ, գլխահակ, ձեռքերը գրպաններուն, անտարբեր անցորդներուն: Իրենց մշտնադաւաններուն մէջ, երբեմն, յանկարծ բարձրաձայն վիճարանութեան մը կը սկսէին, կը լռէին՝ իրարմէ ձանձրացած ըլլալու համաձայնութեամբ:

Հասած էին քաղաքի հրապարակը:

Անցնող աղջիկները գլխապտոյտ կը պատճառէին ժիրայրին: Անոնցմէ իրաւաբանիւրը իր կիրքերը հաստատելու իբրեւ փաստ կրնային ծառայել: Այս երկրին ամենամեծ հրապարակին վրայ կրնար մերկացնել անոնցմէ մէկը, թող մարդիկ հաւաքուէին, պիտի չձգէր գայն, իրմէ մաս մը պիտի ըլլար: Հոն, բաց երկնքին տակ, շղատութեան արձանքին մօտ, անոր նշանաբանին իսկական ուժգնութեամբը, աղջկան եւ իր մարմիններով, գոնէ այդ վայրկեաններուն իմաստաւորէին պրոնզէ կառոյցը: Ժիրայր մատուցել ջանք բռնազ արձանը ցոյց տուաւ:

— Գեղեցիկ է...

— Փայտիւն ունի, սակայն...

— Թաճախ ծաղիկապակներ կը բերեն հոս:

— Մեռելի ծաղիկապակներ, անոր մանր հաստատելու եւ յիշատակը յարգելու:

Արձանը կայուն կը մնար, ամենաուրեշան ջանք՝ բարձր, գայն բռնազը հպարտութեամբ կեցած էր, ու՛յնքան հպարտ, որ իրական մարդը ճոյն հըպարտութիւնը չէր կրնար արտայայտել... Եւ մտածել, որ մարդ մըն էր

որոշած էր գայն իւր ընկել: Եւստի գզացում մը երբեք չէր ունեցած, ոչ ոքէրան մը ուզած էր եւ ոչ ոքի բան մը տուած: Որոշած էր քանդել այս ասանդափիւնը, հասկնալու սա մարդիկը, որոնց շուքերուն ծանօթ էր միայն: Կիրակի դարձեալ սկստի տեսնէր գայն եւ գրկէր ուժգին, մատնեղան վզար անոթ կարծր մորթը, կզակը. պիտի առնէր դէմքը արհեստագործ մէջ, շեշտակի նայէր աչքերուն, տեսնելու որ ինքն ալ ներկայ էր անոր աչքերուն մէջ եւ զգար, թէ իրական էր իր արհեստագործ մէջ եղածը: Յանկարծ ծանրութիւն մը զգաց... Իրական էին այդ մարդիկը, իրական էր ժողովինը... Սակայն ինք հայելիին առջեւ միայն կրցած էր ինքզինք տեսնել եւ ուզած էր բռնել, սակայն հայելին ջարդուած էր եւ ինք չէր կրցած ինքզինք տեսնել այլեւս, հաշմանած էին իր քայլերը, քաղցրաւ տաղանգք մը... Ժիրաւորն ալ իրական էր օր մը. թերեւս երկու օր առաջ, այսօր... Գրասենտինին վրայէն քաղցր թուղք մը...

...

Առտու նամակ մը ստացայ: Հեղինակը չէր գիշեր զիս սիրելի կռիւն... Անպէտք մըն է ան միայն: Ինչու կը գրեմ՝ չեմ գիտեր, չեմ ալ ուզեր գիտնալ. այս մէկն ալ թող առանց պատճառի ըլլայ: Խենթ բան մը միայն... Կը յիշե՞ս, ժպտացի եւ խենթ է ըսին, վիրտուտեցի քեզ՝ «խենթ ես» ըսիր: Առանց պատճառի ալ խենթ է ըսին: Սակայն այս վերջինը պիտի չըլլայ, քիչ ետք ընկելու պիտի ըլլայ վերջինը...

Ձէ այդ ապուշ գազափար է. սակայն որոշել է ետք չգործադրե՞լը... յետագոյն որոշումիս գործադրութիւնը... միջոցը չեմ նշած:

Պը հաւատաս, թէ միայն կ'արեւմտարեմէն քեզ, չէ՞, սակայն մէկ ձեւ չկայ սիրելու. ես չեմ կրնար պաշտել...

Օ՛հ, յիշեցի, արդէն չկամ... մեռած է մէջս որոշելու կարողութիւնը, մտածելու ուժը, ջարդ մը եղած է մէջս, մնացած թեկոններուն ինչ ըլլալը չեմ գիտեր, բացի մարմնէս, որ կը շարժի առնուազն... մեռած է մէջս նոյնիսկ սպաննելու կարողութիւնը... դարձեալ կ'ըլլամ չարարելու համար... քերես անմահ եմ, հա՞, մեռած ըլլալ եւ ապրի՞լ...

Ինչ որ չեմ սիրեր այն է, որ միշտ բացատրութիւն կը պահանջես, եւ այնպիսի լուրջքեամբ, որ կը շուարիմ առջեւ, որովհետեւ լուրջութիւնը պատասխանատուութիւն կու տայ ինծի...

Որոշեցի՝

Այս բոլորին մէջ խենթ բան մը, յիշէ՛, խենթ բան մը, չմտնաս, խենթ բան մը...

...

Վարդգէս գրածը ջղայնօրէն ծայեց, դրաւ պահարանին մէջ եւ ելաւ գրասենեակէն:

Բարձր շէնք մըն էր, կեցաւ, դիտեց անտարբեր: Մտաւ եւ պատի յարկն ինքն արեւմտեան կողմէն վրայ՝ ժողովին անունը փնտռեց ու պահարանը ձգեց:

«Ժիրաւորը չկայ... պէտք է իրեն հանդիպիմ հիմա»:

Այս եղաւ իր առաջին մտածումը, երբ փոքրց ելաւ: Շատ հանգարտ կը քայլէր: Վաղը շունի մը պէս պիտի թաղէին զինք, այնպէս՝ ինչպէս ուզած էր, գերծ ձեւակերպութիւններէ եւ արարողութիւններէ: Ամբողջ վրէժ-թեղութիւն մը կը կեդրոնանար արեւմտեանի մը ըլլալին վրայ, որ ոչինչ ըլլած էր իրեն, թերեւս ոչ ոք բան մը ըրած էր, ոչ ալ ինքը՝ ինքզինքին... Հասաւ ժիրաւորին տան փողոցին սկիզբը, կեցաւ պահ մը: Խռպուտ

չկար անոնց դրամ առջեւ: Արդէն մարդիկը չէին սիրեր զինքը, իր պարագային, հայնիսկ յետ մահու սէր չէին ունենար իրեն հանդէպ... Դրան առջեւ շնչառութիւնը սկսաւ դժուարանալ, թեթեւ դող մը զգաց, կոկորդը կը տեղ-մըլէր, կ'երեւակայէր ժիրայրի անշարժ, սառն, վրէժխնդիր դէմքը, որով շնչած էր եւ որ նայն ձեռով կը մեկնէր... Զգացած անհամբերութիւնը չիզերր կը թրթռացնէին: Ինքզինք հաւաքեց, քայլ մը առաւ, բայց չկրցաւ շարունակել, ապա յանկարծ խուժեց առաջին յարկը, կոխեց գանգակը: Ժիրայրին մայրը սովորականին պէս բացաւ դուռը, ճնայնն ալ միւսներուն պէտք մտածեց: Բայց դրան մօտ, տիւտնին վրայ տեսաւ ժիրայրը երկնցած վիճակի մէջ, որ գլուխը բարձրացուցած՝ նայելէ ետք կ'իջեցնէր: Վարդգէսը եղբնեցաւ, շփոթեցաւ, քանի մը անիմաստ խօսքեր քոթովեց՝ ժիրայրին մօտը ներկայութենէն խուսափելու համար, որ վերջապէս խոհանոց գնաց: Ժիրայր անձնասպաս չէր եղած... Վարդգէս անմիջապէս... գայն խեղդելու չափ գայրայթ մը զգաց... սակայն բան մը կար, սկսաւ կանգնածիլ ինքզինքին վրայ... Ինք վստահ կը տեսնէր ժիրայրի ողբաբերութիւնը...: Զղայնալիքները առաւ մը քաշեց տիւտնին մօտ, առաւ ժիրայրի դատարկը փակուան մէջ, սեղմեց, չիզերուն մէջ արիւնին շարժումը զգաց, կարծէր կը բարձրանար-կ'իջնէր, դէմքը մահաւրնէն կը վերադառնար, մահն իսկ էր թերեւս... մուտք, անհասկնալի... մէկ բանի վստահ էր միայն, թէ մահը շատ հեռու էր իր բնկերտումէն, սակայն ահար չափ ծանր բան մը կար ժիրայրին մէջ, որ չէր արտօսեր Վարդգէսին այս խաղը հնարող գլուխը հզօնիլ: Ժիրայր դժուարութեամբ ժպիտ մը կը շարժէր դէմքին վրայ, զգաճօրէն կը պոթկար եւ կը վերադառնար իր գաղտնիքին:

Չակասը ջերմ ունէր... Մտանքը թեթեւօրէն կը դադային:
 Կեանքի եւ մահուան միջեւ եզրը ջերմ էր, կը նետուէր մահուան վերայ, կը բռնկէր, յանկարծ կը մոխրանար: Կ'անցնէր կեանքին, կը ժայթքէր, կը քանդէր անէտնայու չափ, եւ կրակ կ'ըլլար...

Ժիրայրին դատարկը տակաւին Վարդգէսին փակուան մէջն էր, ձգեց, ինչպէս տիւտնին վրայ: Ելաւ ստիքի, հանդարտ բացաւ դուռը, սկսաւ իջնիլ աստիճաններէն մէկ առ մէկ, վերջին անգամ դարձաւ ետեւ, ժիրայր դրամ երկաթներուն ետեւէն անշարժ զինք կը դիտէր, դէմքին կծու, ծաղրական ժպիտ մը...: Ցանկարծ բարձրաձայն.

— Վարդգէս, լսէ զիս վայրկեան մը, երկրագունդը եւ անոր վրայի մարդիկը տէր ունի՞ն կ'ըսես...

— ...
 — Մի՞թէ այդչափ դժուար է ատոր դատաստանը, որ խոճուներ ես: Թերեւս անտէր եմ, երկուսն ալ արթնը: Մարդիկ կը կարծեն իրարու պաշտպան ըլլալ, իսկ ես գուրկ էի ատկէ: Ցանձրոյթը, միօրինակութիւնը, տանձնութիւնը կը սարսափեցնէին զիս, եկար դուն այսօր, դժբանձ, շփոթած, եկար դուն ինծի համար, եւ երկրագունդը իր բնական ընթացքը գտաւ, ես, ես, տէ՛ր ունեցայ, ինծի դրացի մարդոց մօտ, հողին վրայ փռքիկ սեղ մը ունեցայ, եւ դուն տուիր ինձ...

Վարդգէս սպառնալից ձեռքը բարձրացուց՝ լռեցնելու համար ժիրայրը... ճիշտ քաւ այդ պահուն գայն հասկնալու. միւս կողմէ՝ անոր հանդէպ զգացած աստիճանները ժայթքեցնելու մտածումները անվերջ հոտանքներու մեծան սեղ չէին գտնէր իր ընտանեացու ուղեղին մէջ: Բռունցքը ժիրայրի կարծիքը սակարկեցը կը փնտտէին... Մինչ ժիրայրի կծկուած դէմքը մտիքացած խեղճութիւն մը կ'արտայայտէր: Այնքուն մէջ բարձր մարդոց դժբախտու-

քիւնները կը տեսնուէին, մէջքը կ'աճ՝ պիտի իյնար: Վարդգէս չէր կրնար այլեւս հոն մնալ, ոտքերը վազել կ'ուզէին. յանկարծ վազեց վար, փռոցին մէջ փայլերը արագացուց. ժազլինեց փողոցին սկիզբը վազել սկսաւ. անգոհանիք մը. ժիրայրին դէմքը կը հալածէր զինք, սրունքներուն արագութիւնը չէր գգար, դիմացը տուփ մը կը տեսնէր միայն... կը գարնուէր մարդոց, որոնք տպաստար գինք կը դիտէին: Հասաւ շէնքը, դուռնէն ներս, գորտոր ըտունց մը տուաւ ժազլինի անունը կրող տուփին... անշարժ մնաց փշրուած տուփին առջեւ. փայտի կտոր մը ինկաւ, միւսները ինքը ձգեց, գգաց տուփին պարապուրիւնը... վոտահ ըլլալու համար՝ ձեռքը պահ մը ձգեց պարապուրեան մէջ եւ կարծես ամբողջ մարմինն ալ տեղաւորած էր նեղ տուփին մէջ, քր աւելի եւ աւելի կը փոքրանար զինք խեղդելու... եւ ինք գլխապտոյտ կ'ունենար այդ տեսնելով:

Ելաւ դուրս:

Ճամբուն կողմերը շարունակ շէնքերու աւելի բարձրացան, երկար փողոցները իրենց տուներով սկսան վրտն խուծել: Դէմքեր — այլասերած, ընդարձակ այգիի խամանիկներու նման սկսան պարել, երգել, ծաղրել: Վարդգէս գլուխը բռնեց ամուր, կարծես պիտի իյնար... Ինքնաշարժները մէկ անիւն վրայ կը սուրային. մարդիկ իրենց ձեռքերուն վրայ արտասուլոր արագութեամբ կը փախէին... Եւ վարագոյր մը կը գոցուէր...

ՅԱԿՈՒ ՓԱՓԱՋԵԱՆ



Իմացական Էարժույթ



«Ձուսն հայկական գիտնի վրայ, այս առթիւ
Թող թույլ արուի մեզի ըսելու, թէ արուած վը-
նիսը համայն աշխարհի հայութեան առջեւ բա-
ցու ամէն շնորհակալ, որպէսզի զե՛մէ պահան-
ջելով իր արդար իրաւունքները եւ հայկական
հարցը, իր ամբողջ ասարզութեամբ եւ Եանրու-
թեամբ, զնկու. միջազգային հանրային հարե՛-
զին առնու»:

Յրօճական իշխանութիւններու պահանջով «Երզնէ» եւ «Ձարթօճ» օրաթերթերուն
գէ՛մ բացուած ծանօթ դասին երկրորդ միտար տեղի ունեցաւ Յուլիս 1-ին. Արարութեան
Փալատին մէջ, ուր Մեքր Մանուէ Սիւմ խօսեցաւ անիի քան մէկ ժամ տնուղ պաշտպան-
դական հիմնադի հետ մը, իրաւաբանի փայլուն իր կարողութեան նետ յայտնաբերելով հետ
մարդկային հիմնական արժէքներու պաշտպանութեան նուիրած մարդու հարգաւարտու աւ
կար արժանիներ:

Մտօրական մեզարքանէի մը բերուած բացուած սփարակում դատ մը չէր այս դա-
տը. ու՛մէր անսովոր գոյն մը, բացուած էր իրաւայեցիք հայ մասուլը յեցնելու եւ գը-
ծուած ցեղապանութիւնը ծածկելու հազախակում շարժախթներով, մե՛ծ էր ասարգութիւնը
ու անոր պաշտպանութիւնը ինչի շարի խղճմամբ չէր պահանջէր, մարդ կանին արժէք տը-
ւաղ, պատուութեան գին վճարող բացառիկ մարդու բացառիկ մշակոյթ կը պահանջէր, ու
սակաւին անկաշտութիւն եւ իր մտածումները բարձրագոյն պատշաճ աստիճաններէն,
որո՛մէ՛ դատարարութեանց ընթացքին թէ զատարարութենէն նո՛ս՛ երջե՛ք շղակեցան մե-
ծանուն այս իրաւաբանին:

Մեզարքանի մեր երկու թերթերուն համար իր պահանջած անպարտութեան վճիռը
(Յուլիս 10) իմանալէ հա՛տ, Մանուէ Սիւմ հոյն օրն իսկ մասնուին տուաւ յայտարարութիւն
մը, որմէ արտագրուած վերի հասուածին հետ՝ կ'ազէինք ընթերցողին ուշադրութեան
յաճածնի ազնուական այս անձնարարութեան վրայ յոյս հետող հետեւեալ հատուածը եւս.

«Այս պատմական հարցին մէջ կիրանհեան մարդութեան աւուած անպարտութեան
ճե՛րք անվիճելիօրէն կը հաստատուէ այն իրողութիւնը, թէ կիրանհեան դարձած է միջազգային
խօսական առանհ մը, ուր կրնան արձարթուիլ բոլոր արդար եւ օրինաւոր գտուէրը ու պաշտ-
պանութիւն աշխատէ՛ք՝ ինչպէս կը պաշտպանուին մէ՛ծ դատերը, Միջազգային Առանհներու
առջեւ»:

Ճետտգայ էջերուն հու տանք Մանուէ Սիւմի պաշտպանողական հետին անբողո-
բութիւնը, իսկն առիքով խօսք առած փաստարաններուն հիմնական մտքերը, ինչպէս հետեւ Մամ-
ուլ Դատարանին արձակած անպարտութեան վճիռը:

«ԱԶԴԱԿ»-Ի ԵՒ «ԶԱՐԹՈՒՔ»-Ի ԴԱՏԸ

Մ Ե Թ Ր Մ Ո Յ Ս Է Ն Ս Լ Ի Մ Ի
Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ղ Ա Կ Ա Ն Ը (ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՃԵՆ)

Յարգելի նախագահ եւ խորհրդականներ,

Հակառակ այն իրողութեան, թէ Ընդհանուր Դատախազը կը ներկայացնէ ամբաստանող կողմը, բայց մենք վստահ էինք, որ երբ գտնուինք իրանական Գերագոյն Դատարանի մը առջեւ, Ընդհանուր Դատախազութիւնը մեր դատը մանրամասնօրէն քննելէ ետք, ղէպքերու եւ իրողութեանց լոյսին տակ, պիտի ունենայ այն դիրքը, որ խիզախօրէն ցուցաբերեց այս առաւօտ՝ Հասաստելով իրաւունքը: Այս խիզախութիւնը ծանօթ է մեզի լիբանանեան դատարաններու մէջ:

Ընդհանուր Դատախազութիւնը եւ վճիռ արձակող դատական կազմը լրացուցիչներ են իրարու: Դատարանը անբաժանելի ամբողջութիւն մըն է: Այս առաւօտ, մեր յոյսը իրականացաւ: Ծնորհակալութիւն Ընդհանուր Դատախազին՝ իր ցուցաբերած զիրքին համար, որուն մէջ կայ թէ՛ հպարտութիւն, թէ՛ քաջութիւն եւ թէ՛ օրէնքի իմացում եւ արդարութեան յուսադրում: Այս դիրքը պատիւ կը բերէ Լիբանանեան Դատարանին, որ իր ամբողջի վերայ ամբողջութեան մը եւս աւելցուց եւ փառաւորեց նախնեաց գեղեցիկ կառուցները, որպէսզի անգամ մը եւս ըսուի, թէ Լիբանան Դատարան ունի, գատաւորներ եւ Արդարութիւն:

Յարգելի Տեարք,

Նախորդ նիստին դուք տեսաք մեծ բազմութիւն մը դատարանէն ներս թէ դուրս: Այնքան խուռներամ էր բազմութիւնը, որ ըսուեցաւ, լիբանանցի հայերը գրաւած են Արդարութեան Պալատը՝ ազդելու եւ օտնձգութիւններ բնելու համար դատարանի սրբութեանց ղէմ: Մինչդեռ, մենք եկանք հանդարտեցնելու բոլորը, թէ հաւաքուած բազմութիւնը եկած չէր խուզութիւններ ստեղծելու, ալ պարզապէս պատուելու Լիբանանի Դատարանը, Համադործակցելով լիբանանեան մամուլին, Դատարան եւ մամուլ մէկ ամբողջութիւն են ու անկարելի է անոնց բաժանումը: Դուք այս նիստին չէք դատարարներ հայ թերթ մը, ալ ամբողջ լիբանանեան մամուլը, իր լրիւ կազմով եւ սարքով: Մամուլը Սենտիքայի նախագահին ներկայութիւնը հոս՝ հայ մամուլին ձայնակցելու եւ զայն պաշտպանելու համար է:

Այս միասնակցութիւնը յստակօրէն ցոյց կու տայ դատարանին գերը՝ ընկերային եւ քաղաքական պետի վրայ: Դատարան, մամուլ եւ պաշտպան փաստարաններ երբ միացած են, ալ վախ չունի Լիբանան՝ վախ չկայ

Լիբանանի կոչումին համար, մանաւանդ այն դասերուն մէջ, ուր ազատութեան դէմ ոտնձգութիւններ կ'ըլլան, ուղղակի կամ ոնուղղակի:

Գուք այսօր չէք դատար մամուլը, այլ կը դատէք ազատութիւնները, որոնք ի պաշտպանութիւն, միասնաբար կը ծառանան մամուլը, փաստարանները եւ հանրային կարծիքը: Ուստի, պարզ ու մեկին կը յայտարարենք, թէ հոս ու նաեւ այս սահմաններէն անդին, Լիբանանը մէկ է իր տարրերով, անբաժանելի՝ իր միութեամբ:

Յարգելի Տեարք,

Այս դատը մամուլ օրինադոնցութեան դատ մը չէ: Նախորդ նիստին տեսք հոս հաւաքուած բազմութիւնները, տեսք մտաւորականները, փաստարանները, երեսփոխանները, լրագրողները եւ երեւելի անձնաւորութիւններ, որոնք եկած չէին զբաղութիւն ստեղծելու, այլ պատուելու ազատութեան սկզբունքի, որ նաեւ ձերն է ու բոլոր լիբանանցիներուն, — ազատութիւն՝ դաշափարի, ազատութիւն՝ արտայայտութեան, ազատութիւն՝ տեսակէտներու եւ անոնց շուրջ պայքարի՝ օրէնքի սահմաններուն մէջ: Եթէ չընենք տեսակէտները եւ եթէ չպայքարինք ու չվճռենք օրէնքի սահմաններուն մէջ, այն ատեն կը դադրինք լիբանանցի ըլլալէ, որովհետեւ սխալին դէմ լուռ մնալը ոճիւր է:

Մամուլ այս դատը քաղաքական հարց է, իսկ քաղաքական այս հարցը՝ հայկական հարցն է, որ ունի 55 տարուան կեանք, 1915էն սկսեալ: Այդ թուականին սկսաւ շարժը հայոց դէմ, քաղաքակրթեալ աղբի մը դէմ, որ փռուաւր էջեր տուաւ մարդկային պատմութեան:

Այս ազգը ունի իր աշխարհագրական, ընկերային, քաղաքական եւ տնտեսական ուրոյն դիրքը: Այս ազգը աշխարհին տուած է մեծ մարդիկ, իրաւաբաններ, գաղափարներ, փիլիսոփաներ, բանաստեղծներ, մտքի ու դրչի մարդիկ ու հանճարներ:

Այս ազգը մորթուեցաւ, իսկ մնացորդացը, փոքր մաս մը, կ'ապրի զանազան երկիրներու մէջ: Այս ազգը, որուն երկու միլիոնը կոտորուեցաւ, այս ազգը, որ աշխարհին շատ բան տուաւ, արդարօրէն իրաւունք ունի, պարտականութիւն ունի արծարծելու իր դատը, ամէնուրեք, հանրային կարծիքին պարզելու իր հարցը, հայկական հարցը եւ դայն փոխանցելու միջադատին ստեան:

Այս երկրին մէջ, ուր հայերը դարձած են լիբանանցի քաղաքացիներ, իրաւունք ունին ներկայացնելու իրենց դատը, որ չէ ներկայացուած միջադատին դատարանին: Միջադատին դատարանը պէտք է դատէ յանցաւորները եւ պատժէ զանոնք: Նիւթական եւ բարոյական հատուցում պէտք է վճարել տայ յանցաւորներուն: Միջադատին դատարանին միջոցաւ պէտք է արթնցնել աշխարհի իրողը, որպէսզի հայկական դատը զտնէ իր արդար լուծումը: Արդարեւ, այս ոճիւրը մարդկութեան դէմ, ընկերային արգարութեան դէմ եւ մարդկային խղճին դէմ դործուած ոճիւր մըն է:

Միջադատին դատարանը պարտաւոր է կատարելու իր մարդկային պարտականութիւնը, որովհետեւ, հայկական դատը մարդկութեան դատն է, դայն պաշտպանելու համար պէտք է զինուորագրուին աշխարհի բոլոր ազատ մարդիկը, որպէսզի այս դատը աշխարհի խղճին վրայ դրուի իր ուղիղ տեղը:

Այս դատը ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՏՆ է: Ատոր նման ուրիշ ցեղասպանութիւն մը եւս գործուեցաւ երկրորդ աշխարհամարտին, նազիական Իւպանութիւն մը եւս գործուեցաւ երկրորդ աշխարհամարտին, նազիական Իւպանութեանց կողմէ: Պատեալազմը վերջացաւ նազիներու պարտութեամբ ու խանութեանց կողմէ: Պատեալազմը վերջացաւ նազիական տեսանք, որ նայի ղեկաւորութեան պարտութեան նիւթնապերկի դատական տեսանք, որ նայի ղեկա-

վարները դատեց իբրև միջազգային ոճրադործներ։ Նխերհնպերկի Ատենը տուաւ իր վճիռը՝ հաւաքականութեան մը հետքը ջնջելու եւ անցեալով ժառանգիր քանդելու անմարդկային ոճիրին մասին։ Կատարուած ոճիրը հաւաքական էր, անհատական չէր։

Այս դատը արծարծող կողմը հետամուտ էր ջնջելու մարդկութեան պատկանող յիշատակները, հետամուտ էր բնաջնջելու ամբողջ ժողովուրդ մը եւ գրուելու, իւրացնելու ամէն բան, որ այդ ժողովուրդին կը պատկանի, անոր առհասարակ ժառանգութիւնը կը կազմէ։

Թրջական ոճիրները չեն զաղրած, այլ կը շարունակուին։ Անոնք ժամանակաւոր ոճրագործութիւններ չեն։ Արդարեւ, ոճիրներ կան, որոնք կը յարատուեն։ Այդ պիտիները հակամարդկային ոճիրներ են։ Բոլոր օրէնսդիրները եւ օրէնքի տիտանները, ինչպէս նաեւ միջազգային կայմակերպութիւնները համաձայն են ընդունելու՝ որ այդ ոճիրները անժամանցելի են, որքան ալ երկարի ժամանակը։ Ժամանցելի են միայն այն ոճիրները, որոնք գործըւած են քսան, տասը կամ երեք տարիներու ընթացքին, ռսկայն բնաջնջուածի եւ ցեղասպանութեան ոճիրները ժամանցելի չեն։

Ժամանակը երբեք չի կրնար մոռցնել տալ մարդկութեան զէմ գործըւած ոճիրները։ Ձրանսա, որմէ կը ստանանք օրէնքները, տարիներէ ի վեր հաստատած է, թէ բնաջնջուած ոճիրը անժամանցելի է։

Ինչո՞ւ եղածը չկոչենք յարասեւող ոճիր, քանի թշնամին կը շարունակէ իր ոճրագործութիւնները եւ իշխանութիւնները չեն պատժեր յանցաւորները։ Այսօրինակ ոճիրները պէտք չէ անպատիժ մնան։

Գերման ժողովուրդը իր նոր վարչաձեւին զեկամ վարներով ու զխաւորութեամբ վարչապետ Ատենաուրերի, հրատարակով յայտարարեց, թէ կը գատապարտէ նախորդ վարչակարգին գործած ոճիրները։ Ո՛չ միայն կը գատապարտէ, այլեւ պատրաստ է հատուցուած վճարելու բռնակալ իշխանութեան պատճառած վնասներուն համար։

Սակայն, Թուրքիոյ մէջ, ուր առաջին աշխարհամարտէն ետք քանի մը վարչաձեւ փոխուեցաւ, մինչեւ այսօր չգտնուեցաւ նախագահ մը, չգտնուեցաւ պատասխանատու անձնաւորութիւն մը, չգտնուեցաւ թուրք մարդ մը, որ բնութենէր կատարուած անարդարութիւնը եւ գատապարտէր նախորդ վարչաձեւին ոճրային ուրարքները։ Չգտնուեցաւ թուրք ռեւէ պատասխանատու մարդ, որ յայտարարէր, թէ հայ ժողովուրդը իբրևունք ունի պոռթկալու, իբրևունք ունի բողոքելու։ Չգտնուեցաւ թուրք մը, որ ներողութիւն խնդրէր եւ ցաւակցութիւն յայտնէր այն ժողովուրդին, որ զոհուեցաւ եւ դժբախտացաւ։

Հայ ժողովուրդը այսօր կ'ապրի Լիբանանի մէջ եւ աշխարհի բոլոր անկիւնները։ Անոնց մէջ կան մեծ սպանդէն վերապրողներ, որոնք ախանատես եղած են այդ քսամենի ոճիրներուն։ Այդ վիաները, եթէ առիթ ունենաք լսելու, պիտի իմանաք, թէ ինչպէս մորթուեցաւ, խողխողուեցաւ ու խալուեցաւ այս ժողովուրդը։ Պիտի իմանաք, թէ ինչպէս քաշկոտուեցաւ եղեռնի ճամբաներուն վրայ։ Պիտի տեսնէք, թէ թուրքը ի՞նչ անմարդկային վերարքերու մը ցոյց տուած է հայոց հանդէպ։ Պատմութեան դիրքերը վիհայ են ու կը դատապարտեն թուրք ժողովուրդը, իր անմարդկային ոճիրներուն համար։

Երբ կը խօսինք բնաջնջուածի մասին, կը վերջիւնած արար ժողովուրդին հանդէպ կատարուածը եւս։ Չէ Ապրիլը նահատակաց տօնը է հայ ժողովուրդին, իսկ Մայիս Ե-ը արար ժողովուրդի նահատակաց տօնը։ Երկու տօները մէկ են, հետեւանք՝ նոյն քաղաքականութեան, որ կիրարկուեցաւ արար եւ

Հայ ժողովուրդներու վրայ, բնաջնջումով, կախազանով, եւ ստրկացումի ա-
րարքներով: Թուրք ժողովուրդը ստոր եւ քստմենի միջոցներու դիմեց՝ խող-
խողումի, սպանդի եւ սովամահութեան անմարդկային արարքներով: Միա-
ժամանակ փորձեց ի սպառ ջնջել Հայ ժողովուրդին քաղաքակրթութեան հետ-
քեր: Ուղեց թրջական հալոցին մէջ հայեցին արտական հարուստ ժուան-
դը, ինչպէս որ ուղեց որբել Հայոց ժառանգը փառաւոր: Պաշտօնակիցներս՝
Իրաւօրաններ Նասրի Մասլուֆ եւ Յուստ Պութրոս պիտի խօսին թրջացե-
լու եւ ստրկացնելու թրջական քաղաքականութեան մասին, որ կիրարկուե-
ցաւ արաբ ժողովուրդին հանդէպ: Թրջական քաղաքականութիւնը նոյնն է
արաբին ու Հայուն նկատմամբ:

Ուրեմն, թրջական քաղաքականութիւնը մէկ է. ցեղասպանութիւն՝
կանխամտարածուած եւ ծրագրուած: Այս ցեղասպանութեան դործադրութիւնը
Հասաստուած է դրաւոր փառասիրողներով:

Թոյլ տուէ՛ք, որ ձեզի կարգած 16 Սեպտեմբեր 1915 թուակիր այն հե-
ռադիբը, որ Թուրքիոյ ներքին նախարար Թալատի փառա զրկած է Հալւպի
կոնսակալին՝ հրահանգելով անխնայ բնաջնջել Հայ ժողովուրդը մեծով ու
պոստիկով, այր թէ կին:

«Ձեզի հաղորդուեցաւ, թէ «ձեմիյէթ»-ի երանգով, կառավարու-
քիւնը որաշած է ԱՄԲՈՎՋՈՒԹԵԱՄԲ ԲՆԱՋՆՋԵԼ Թուրքիոյ նայերը... Ա-
նոց ԳՈՅՈՒԹԻՆԵԼ պէտք է ՎԵՐՋ ԳՏՆԷ: Որեան ալ ՈՏԲԱՅԻՆ ըլլան ձեռք
առնուած միջոցները, ՏԱՐԻՔԻ, ՍԵՌԻ ԵՒ ԽՂՃՄՏԱՆՔԻ ՈՉ ՄԷԿ ՆԿԱՏՈՒՄ
ՊԵՏՔ Է ԸԼԼԱՍՅ»:

Այս հեռագիրը կանխամտածուած ու ծրագրուած ոճիբի մը, ժողո-
վուրդ մը բնաջնջելու եւ անոր հետքը որբելու ակնյայտ փաստ մըն է:

Ահաւասիկ ա՛յս էր Թուրքիոյ քաղաքականութիւնը:

Հոս հարց կու տամ, ինչպէս հարց կրնայ տալ սեւեւ անհատ, թէ ի՞նչ
էր նպատակը Պէյրուսի Թուրք դեսպանատան որ, կեդրոնէն ստացած հրա-
հանգի մը վրայ, բողոքի նամակ մը ներկայացուցած է Լիբանանի արտաքին
դործոց նախարարութեան: (Մեքր Սլիմ հանց այս նամակին պատճենը եւ
կարդաց զայն: Նամակը գրուած էր ֆրանսերէն ու կը թելադրէր դադրեցնել
տալ մամուլի յարձակումները Թուրքիոյ դէմ):

Թրջական իշխանութիւնները կրնային դիմել մամուլ սենտիքային, ո-
րուն սիրտն ու զուտը միշտ բաց են ամէն դիմումի առջեւ: Թրջական իշխա-
նութիւնները կրնային դիմել այլ միջոցներու: Լիբանանի արտաքին դործոց
նախարարութեան դիմելը կը նշանակէ միջամտել ըլլալ Լիբանանի ներքին
գործերուն, մանաւանդ ա՛յն գործերուն, որոնք կապ սնին զազափաբի եւ
հուաքականութեան ազատութեան հետ:

Ձեռք կրնար լուռ անցնիլ նաեւ այն իրողութեան վրայէն, որ Թուրքը
կ'ուզէ Հայ ժողովուրդին հանդէպ որդեգրած իր քաղաքականութիւնը կիրառ-
ել լիբանանեան դատարանին խողովակով:

Մենք չենք կրնար թոյլ տալ եւ թոյլ պիտի չտանք թրջական իշխա-
նութեանց՝ կամ սեւեւ՝ այլ իշխանութեան, որ իր ծրագրերը եւ դիտարու-
թիւնները ուզէ դործադրել լիբանանեան դատարանին խողովակով: Լիբանան-
թիւնները ուզէ դործադրել լիբանանեան դատարանին խողովակով: Լիբանան-
եան դատարանին դիմադրական ուժը թոյլ չի տար նման արարքներու կի-
րարումին: Մենք դիտենք, որ զուրք արդարապատ էք, դուք ճշմարիտը կը
պաշտպանէք: Ձեզ կը ճանչնանք իբրեւ լիբանանցիներ, որոնք բնաւ չեն չե-
ղիբ արդարութեան եւ ազատութեան ուղիէն:

Եւ կը մերժեմ այս դատը ու կը պահանջեմ, որ դուք ալ մերժէք զայն:

Երբորդ նպատակ ժը եւս կ'ուզէին դործագրել թուրքերը այս դատին միջոցաւ, բայց ճարտղեցան: Թուրք կեդրոնական կառավարութիւնը նկատած էր, որ հայերը դարձած են լիբանանցի քաղաքացիներ եւ ամէն պետի վրայ սկսած են օգտակար հանդիսանալ Լիբանանի:

Այս դատին միջոցաւ, թուրքերը ուզեցին ճնշում բանեցնել Լիբանանի հայոց վրայ: Բողոքեցին հայոց դէմ, որովհետեւ լիբանահայութիւնը, պայծառ գէմբով, ժրջանութեամբ եւ զոհարեութեամբ կը կատարէ իր պարտականութիւնը Լիբանանի հանդէպ: Լիբանանի մէջ կ'ապրին 200 հազար հայեր, որոնք հարուածող ուժ են՝ ի պաշտպանութիւն Լիբանանի ազատութեան եւ ժողովրդավար կարգերուն:

Այս ուժը ա'յն ուժն է, որ քաղեց դէպի Արդարութեան Պալատ՝ յարգելու եւ մեծարելու համար ազատութիւնը եւ լիբանանեան մամուլը: Այս ժողովուրդը արժանի է ամէն յարգանքի եւ մեծարանքի: Ան անկեղծ ու զոհարեող է Լիբանանին եւ արարական դատին հանդէպ:

Թոյլ տուէք ինձի ըսելու, որ բազմաթիւ հայեր Փետտայական կազմակերպութիւններու անդամ են Լիբանանի եւ Սուրիոյ մէջ: Օժանդակած են ու կ'օժանդակեն՝ վերստանալու համար գրուեալ հոգերը: Հայ ժողովուրդը երբեք չէ թերացած իր պարտականութեան մէջ: Հայերը, իբրեւ լիբանանցիներ և արար քաղաքացիներ, պատրաստակամ են, պատրա'ստ՝ մասնակցելու արարական ամէն պայքարի, ի խնդիր արարներու գերագոյն շահերուն:

Ուրեմն, թրքական այս ծրագիրները շրջողեցան ու պիտի շրջողին: Փա'ռք Աստուծոյ, որ շրջողեցան:

Յարգելի Տեա'րք,

Տեղին է, որ լիշատակենք, թէ հայերը, հո'ս, Լիբանանի մէջ, կարեւոր աշխատանքներ կատարեցին ու մասնակցեցան արարական բոլոր հարցերուն: Մասնակցեցան նաեւ Պաղեստինի ազատագրութեան:

Ձեր ուշադրութեանը կը հրահրեմ, որ նախորդ նիստին, բազմութիւններու բարձրացուցած պատասաններուն մէջ կար մեծ պատաստ մը, զոր բարձրացուցած էր Ճաթհ պաղեստինեան կազմակերպութիւնը: Ան հրապարակաւ լլաւ յայտարարելու. — Ճաթհը որ Փետտայական մեծագոյն կազմակերպութիւնն է —, թէ զօրավիւ է հայկական դատին եւ զօրավիւ ազատութեանց՝ Լիբանանի մէջ:

Իսկ թուրքերը, ի'նչ էր իրենց գիրքը, որուն մասին դրուած էր «Նախարար» թերթին մէջ, թէ թուրքերը սկսած են հալածել թրքական վարժարաններու եւ համալսարաններու արար եւ պաղեստինցի ուսանողները, զանոնք ամբաստանելով իբրեւ ընդհանուր ապահովութիւնը խանդարողներ: Թուրքերը ձերբակալած են շատ մը արար եւ պաղեստինցի ուսանողներ եւ զանոնք ենթարկած են շարժարաններու եւ հաւաքական պատիժներու: «Նախարար» թերթը դատապարտած էր թուրքերուն անարդար եւ բռնատիրական արարքները:

Յարգելի Տեա'րք,

Աչքիս առջեւ ունիմ թրքական «Նեմի Կազմ» թերթին մէջ վերջերս հրատարակուած յօդուած մը: Կարելի չէ լուռ անցնիլ այդ յօդուածին վրայէն, անոր մէջ կայ պարբերութիւն մը, որ Լիբանանի դատարաններուն դէմ է: Պատասխանատուներէն կը պահանջեմ արծարծել այս հարցը:

Ահաւասիկ այդ յօդուածին մէջ լիբանանեան դատարաններուն հասցէին ուղղուած ակնարկութիւնը.

«...Լիբանանեան դատական աշխարհին սէշ, դժբախտաբար, շատ մը

հայ դատաւորներ կան, խորհրդարանին մէջ ալ ճանի մը հայ երեսփոխաններ, ինչպէս նաեւ հայ փաստաբաններ եւ, մամուաճղ՝ հայ պանֆլերներ, որոնք կրնան կաշառել բազմաթիւ արարներ»:

Թոյլ տուէք ինծի, որ առարկեմ այս յօդուածին դէմ, իբրեւ արաք մարդ, իբրեւ պաշտպան փաստաբան, թէ լիբանանեան դատարանը շատ հեռու է կաշառքէ: Անմնասպէս նախնիներ պիտի դրկեմ վարչապետին, արտաքին եւ ներքին նախարարներուն, որպէսզի կատարեն պարտն ու պատշաճը, յայտնելով, որ մեր դատարանը ամէնէն արդար դատարանն է, եւ մեր դատարանները ցոյց տուին, թէ դատարաններ են:

Ուշագրաւ կէտ մըն ալ կայ թրքական թերթին յօդուածին մէջ: Պաղատիկեան Ծաթ՛ հա ազատագրական կազմակերպութիւնները, ըստ յօդուածաւրին, ի վերջոյ, փորձանք պիտի դառնան Լիբանանի գլխուն:

Կ'ուզեմ, որ հետաքրքրուիք այս յօդուածին բովանդակութեամբ, որովհետեւ կ'անարդեն Լիբանանի կառավարութիւնը եւ էլ-Ծաթ՛ կազմակերպութիւնը, որ պաշտպանն է Լիբանանի դոյութեան, ազատութեան եւ անկախութեան, իսկ թուրքերը, միայն իրենք հրեաներուն հետն են՝ արաքներուն դէմ: Կը յայտարարեմ, թէ այս պետութեան մէջ կայ թրքական դեսպանատուն, որ կը դործակցի հրեական կառավարութեան հետ:

Իբրեւ եղբակցութիւն, այս պետութիւնը բարեկամ է իւրայնի:

Ասիկա հարց մըն է, զոր չէք կրնար ընդունել զուգ եւ չենք կրնար ընդունել մենք:

Այսօր հետս բերած եմ այս գիրքը, որուն զուցէ պէտք ունենայի այս դատաւարութեան ընթացքին: Գիրքը հրատարակած է պատմականիցս՝ Իրաւաբան Մուսա Բրենս: Տրանսերէն լեզուով պատրաստուած այս գիրքը, որ հազիւ շարաթ մը առաջ լոյս տեսած է, սպառիչ կերպով կը նկարագրէ եւ կը վերլուծէ հայոց եղեռները, ջարդերն ու ցեղասպանութիւնը, բոլոր ծալքերով, պատճառներով եւ նպատակներով: Հեղինակը նիւթը կը գծէ միջադատի օրէնքի լոյսին տակ եւ հայկական հարցը կը քննարկէ նիւրեկերի տեսանկիւն արձակած վճիռներուն վրայ:

Ահաւասիկ պարբերութիւններ (կարգաց Քրանսերէն լեզուով): Տեղապանութեան ոճիրին համար Հիթլէրին արձակած հրահանգները յար եւ նրձան են հայերը ընաջնջելու համար թուրքերուն արձակած հրահանգներուն: Երկուքն ալ կը հրահանգեն ջարդել, ուզաննել եւ ընաջնջել առանց պիտութեան, առանց խղճահարութեան եւ առանց դոյն կարեկցութեան...

(Կարդաց հատուածներ, որոնք անհերքելիօրէն կը հաստատեն ցեղասպանութիւնը):

Յարգելի Տեսրք,

Շնորհակալ եմ, որ լայնասիրտ եղաք, առիթ ընծայեցիք, որ խօսիմ այս հարցին շուրջ եւ տա՛մ պէտք եղած շուտարանութիւնը:

Շնորհակալութիւն բոլոր պատմականիցներուս եւ մամլոյ ներկայացուցիչներուն, որոնք մասնակցեցան մեր դատին եւ զօրավիչ կանգնեցան դապարի եւ խօսքի ազատութեան պահպանումին:

Ազատութիւնը Լիբանանի մէջ՝ պէ՛տք է մնայ անհպելի: Լիբանանցիներս ամէնքս զինուոր ենք եւ դո՛ւք, տէ՛ր դատաւոր, առաջինն էք, որ կը շինուորազրուիք ազատութեան պաշտպանութեան համար:

Մեթր ՄՈՂՍԷՆ ՍԼԻՄ

ՄԵԹՐ ՀՐԱՉԵԱՅ ԸԱՄԼԵԱՆԻ ԽՕՍԲԸ

Յարգելի Տեսաբն,

Դատին ճիշտ եզրով երկու յօդուածները լոյս տեսած են 24 Ապրիլ 1969-ին եւ կը շօշափեն հասարակական ընկալչութիւնը եւ ցեղասպանութեան արարները: Այս մասին, արդէն լայնօրէն անդրադարձաւ պաշտօնակիցս եւ քարեկանս Մանսէն Սիմ:

Կը հարցուի, թէ ինչո՞ւ Ապրիլ 24-ը նշանակուեցաւ ճահատակաց յիշատակը օգեկոչելու համար: Ինչո՞ւ ընտրուեցաւ այս քուակնը: 1915 Ապրիլ 24-ին, քրեական իշխանութիւնները ձերբակալեցին բոլոր հայ երեւելիները, իրագրագներ, ռուսացիներ, փաստաբաններ, բանաստեղծներ, բժիշկներ եւ մտքի մարդիկ: Անոնց մէջն էր մեծ իրաւագէտ Գրիգոր Զօհրապը: Իրմով կը հարարանային իր աշակերտները՝ հանգուցեալ վարչապետներ Ռիստ Սելի եւ Սամի Սալի:

Զօհրապ, այս մեծ մարդը, որ մեծաւարձաբար իրաւագէտ մըն էր, մեծանուն հեղինակ մը, երեսփոխան էր օսմանեան խորհրդարանին եւ տեսուչ՝ իրաւաբանական փառիկութիւն: Ձերբակալուեցաւ իր երեսփոխան ընկերոջ՝ վարդգէսի հետ, եւ, ո՞վ սարսափ, Ուրփայի ճամբուն վրայ թուրք անտրգ գապիւն մը անոր գանկը ճգմեց:

24 Ապրիլը, Պոլսոյ մէջ, հայ երեւելիներու ձերբակալութեան առաջին օրն է, որմէ քիչ ետք, սկսան ցեղասպանութեան անմարդկային եւ անպատմելի ռմիրները՝ Թուրքիայ ամբողջ տարածքին վրայ: Հայերը բռնութեամբ վտարուեցան իրենց հայրենի օճախներէն, էջուեցան հոս ու հոն, դուրս հանւելով աւիաներու սպառնալիքին տակ, իրենց պայեճական տուններէն և դարաւոր հայրենիքէն: Քշուեցան դէպի անապատները՝ խուլ ու ամաշի: Քայեցին անօթի ու անուաղ, հագարաւոր քիւմեթր ճամբայ: Անօթութիւնը գգետնեց անոնց մէկ մասը: Քիչեր միայն կըրցան փրկուիլ ստոյգ մահէ, պահուրտելով արար եղբայրներու տուներուն մէջ:

Նահատակաց յիշատակը կ'օգեկոչուի ամէն տարի: Այս առիթով, կը գրուին յօդուածներ, կը հրատարակուին գիրքեր եւ գրքոյկներ՝ բացատրելու համար տօնին իմաստը եւ Մեծ Եղեռնը, որուն գոհը եղաւ հայ ժողովուրդը:

Թրքական կառավարութիւնը բացաւ այս դատը, առարկելով, թէ իր նախադասին հանդէպ պարտաւ եւ անարգանք կայ: Բայց լոյս տեսած յօդուածներուն մէջ, ոչ մօտէն եւ ոչ ալ հեռուէն նման բան չկայ:

Պարտան ու անարգանքը ակնբեր չե՞ն հայ ժողովուրդին հանդէպ կատարուած անմարդկային ցեղասպանութեան մէջ:

Կը պահանջեմ ամբաստանականներուն անպարտ յայտարարութիւնը:

ՖՈՒԱՏ ՊՈՒԹՐՈՍԻ ԽՕՍՔԸ



Ես շնորհակալութիւն կը յայտնեմ պաշտօնակցիս՝ Մոհակն Ալիմին որ, իր պաշտպանողական նստին մէջ, պարզեց հարցին բոլոր ծալքերը, սպառիչ կերպով: Լիրանանի մէջ խօսքի եւ զաղափարի պատուութիւնը անխախտ պէտք է մնայ: Հայ ժողովուրդը Լիրանանի մէջ իր կատարած գեղեցիկ աշխատանքներով եւ օգտակար դրժուներէութեամբ, դարձած է բնիկ քաղաքացի եւ իր արդար դատը արժանի մեր պաշտպանութեան:

Խնչպէս կարելի է զտապարտել ժողովուրդ մը, երբ կ'ուզէ յարգել իր նահատակները եւ ուրեկոչել անոնց յիշատակը:

ՖԱՈՒՋԻ ՂԱՋԻԻ ԽՕՍՔԸ



Երբ հաս կը տեսնենք բազմաթիւ փաստարաններ, որոնք կամաւորագրուած են այսպիսի դատ մը պաշտպանելու համար, այդ ցոյց կու տայ, որ այդ դատը կը շօշափէ համամարդկային հարց մը: Հարց մը, որ չի պատկանիր միայն մեր հայ եղբայրներուն, այլ կը պատկանի արար աշխարհին: Հարց մը, որուն հետեւ կար ցեղասպանութեան ռճիրը:

Կը պահանջենք միանմաբար, որ վերջ տրուի մարդասէր երկու ցրացեալներու դատական հետապնդումին:



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԱՏԵՄՆԸ

Զայն ֆննարկելի ետֆ,

Թուրքիոյ Հանրապետութեան նախագահը անարգած ըլլալու յանցանքով ամբաստանուած «Ազդակ» եւ «Զարթօնք» հայկական երկու օրաթերթերուն դէմ հետապնդումին տուեալները,

Եւ տայէ ետֆ Ընդհանուր Դատախազութեան եզրակացութեանց մէկ ամփոփումը,

Կը երահանգէ հայկական երկու օրաթերթերուն դէմ հետապնդումներուն դադրեցումը, որ կը համապատասխանէ անվերապահ անպարտ հռչակման:

Ամբապնդելու համար իր եզրակացութիւնները, Ատեանը կու տայ հետեւեալ վերլուծումը, —

Նկատի ունենալով, որ երկու ամբաստանեալները հերքեցին իրենց դէմ ուղղուած ամբաստանութիւնները, յայտարարելով, թէ մեղադրեալ յօդուածները ո՛չ մէկ անուանարկում եւ ո՛չ մէկ նախատինք կը պարունակեն Թուրքիոյ Պետութեան Գլխաւորին դէմ, եւ ձեռամբ իրենց պաշտպաններուն ներկայացուցին՝ ներկայ հետապնդումին առարկայ մեղադրեալ յօդուածներուն համապատասխան Քարգմանութիւնը,

Պաշտպանութիւնը, հետեւաբար, կը պահանջէ հետապնդումներուն դադրեցումը եւ ամբաստանեալներուն անպարտ արձակումը, հիմնուելով այն տուեալին վրայ, թէ անուանարկումի յանցանքին բաղկացուցիչ պայմանները չեն լրացուած:

Ընդհանուր Դատախազութիւնը ի՛նք եւս պահանջեց հետապնդումներուն դադրեցումը, տրուած ըլլալով, որ Մամլոյ թիւ 62 Յօդուածին բաղկացուցիչ պայմանները եւս լրացուած չեն:

Նկատի ունենալով, որ ներկայ հարցին ա-

Վ Ճ Ի Ռ Ը

առկայ մեղադրեալ յօդուածէն ի յայտ կու գայ. թէ խնդրոյ առարկան իրականութեան մէջ պատմական տեղեկագրումն է արիւնայի քարդերուն, որոնց առարկայ եղաւ հայ ժողովուրդը օտմանեան տիրապետութեան տակ եւ պատմութեան ընդմէջէն,

Նկատի ունենալով, որ մեղադրեալ յօդուածներուն մէջ արձանագրուած արտայայտութիւնները իրենց ամբողջութեան եւ մասնաշատկութեան մէջ Թրքական Պետութեան Գլխաւորին ո՛չ մէկ վարկաբեկում կ'ուղղեն, այլ նպատակադրած էին միայն քննադատել Թրքական Իշխանութեանց քաղաքականութիւնը.

Նկատի ունենալով, որ Մամլոյ Օրինագրքին թիւ 62 Յօդուածը բացայայտօրէն կը նախատեսէ դատապարտում մը օրաթերթի դէմ միայն այն պարագային, երբ անիկա անուանարկումի յանցանք մը կը գործէ օտար Ազգի մը Հանրապետութեան Նախագահի մը անձին դէմ,

Նկատի ունենալով, որ մեղադրեալ յօդուածներուն մէջ գոյութիւն չունի որեւէ յիշատակութիւն, որ Թրքական Պետութեան Գլխաւորին դէմ անուանարկում կամ վարկաբեկում պարունակէր.

Հետեւաբար, այս ներկայ հարցին մէջ վերոյիշեալ յօդուածի նբողկացուցիչ պայմանները չեն լրացուած, եւ թէ տեղին է հրահանգել երկու ամբաստանեալներուն դէմ բացուած հետապնդումներուն դադրեցումը:

ԱՅՍ ՊԱՃԱՌՆԵՐՈՎ

Լսելէ ետք Ընդհանուր Գատայտագութեան եզրակացութիւնները.

Ատեանը կը հրահանգէ երկու ամբաստանեալներուն, ՀԱՅԿ ՊԱԼԵԱՆԻ եւ ԲԱՐՈՒՆԱԿ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ դէմ բացուած հետապնդումներուն դադրեցումը, տրուած ըլլալով, որ իրենց վերագրուած յանցանքը հիմնաւորուած չէ:

ԼԻԲԱՆԱՆՑԻՔ ԴԱՍ ՊԻՏԻ ԱՌՆԵ՞Ն ԱՅՍ ՀՈՅԱԿԱՊ ՊԱՏԿԵՐԵՆ

«Ազգակց»-ի եւ «Ջարթովեք»-ի զէժ բացուած դատին սու
սիժով, արարական թերթերու մէջ արար ժողովորդան-
կերէ ստորագրուած շարք մը ասպետութիւններ երևցան,
որոնց մէջ մասը տուրք զՅազիւն-ի հարկող թիւով: Ստո-
րիս հոյս սուիժով գրուած զեղծիքն ուրիշ էջ մը:

Լիբանան ներկայիս կ'ապրի ներքին պառակ-
տումներով: Ամէն ոք կը ցաւի ասոր համար ու կը
տառապի: Այս կացութենէն փրկուելու միակ նամ-
բան շարքերու միութիւնն է, միութիւնն է յօսքի
եւ գործի, միութիւնն է մէկ տեսակէտի եւ սկզբ-
բունքի շուրջ: Հայրենիքի պաշտպանութեան, ա-
նոր ասիաններուն պահպանման, անոր արժանա-
պատուութեան, ինքնիշխանութեան եւ անկախու-
թեան պաշտպանութեան միակ միջոցն է այդ:

Սահմաններու պաշտպանութիւն՝ օտար միջա-
մբտութիւններու եւ դաւերու դէմ, ո՛ր կողմէ ալ
գան անոնք:

Լիբանանցիք մէկ օրէն միւսը կրնա՞ն հասնիլ
այս մակարդակին: Պիտի գգա՞ն ազգային արժա-
նապատուութեան պատասխանատուութիւնը, որ-
պէսցի բլլան ամբակուտ խարխիւ՝ մոռնալով իրենց
կուսակցական հակումները եւ փոքր շահերը՝ ի
պաշտպանութիւն հայրենիքին: Ետքը կրնան վերա-
դառնալ քաղաքական եւ կուսակցական հակամար-
տութիւններու:

Մեր առջեւ ունինք փոքր, բայց հոյակապ օրի-
նակ մը, որ կը ցուցաբերուի լիբանանահայութեան
կողմէ: Կ'արժէ որ այդ օրինակը մեծ դաս մը ըլլայ
ամէն քաղաքացիի եւ հոյակապ յորդոր մը՝ իրա-
քանչիւր լիբանանցիի:

Հայ համայնքը բաժնուած է կուսակցութիւն-
ներու, զանազան հակումներու եւ յարանուանու-
թեանց: Ինչպէս լիբանանեան բոլոր համայնքները,
հայերը եւս իրենց զգացումներով եւ նախասիրու-
թիւններով կը հետեւին քաղաքական գանձան
սկզբունքներու: Սակայն կան երկու մեծ կուսակ-
ցութիւններ, մէկը աջակողմեան, որ ծանօթ է Դաշ-

նակցութիւն անունով, միւսը՝ ճախակողմեան, որ ծանօթ է Հնչակ կուսակցութիւն անունով: Լիբանանի կուսակցական կեանքին հետեւող իւրաքանչիւր անձ գիտէ, թէ այս երկու կուսակցութեանց միջեւ պայքարը շատ սաստիկ է: Քառասուն տարի է ի վեր կը պահէ իր սաստկութիւնը: Անոնց միջեւ տեղի ունեցան արիւնալի բախումներ, որոնք ցայց տուին, թէ քաղաքական գետնի վրայ խոր տարակարծութիւններ կան:

Սակայն, հիմա հրաշք պատահեցաւ: Երկու կուսակցութիւնները մտոցան իրենց տարակարծութիւնները, հասած արիւնը եւ պայքարը: Մտոցան ու ամբողջ համայնքը ի մի հաւաքեցին՝ ի պաշտպանութիւն հայկական դատին: Ամէն հայ, ինչ գաղափարի, ինչ հոսանքի եւ ինչ կուսակցութեան ալ պատկանի, չունի տարակարծութիւն այս հարցին հանդէպ:

Թուրքիոյ մէջ հայոց ջարդը ծանօթ է բոլորին... Ոչ ոք կրնայ մտնալ այդ եղեռնին պատմութիւնը: Եւ ինչպէ՞ս մտնան հայերը:

Մօտիկ անցեալին, հայոց արիւնատ եղեռնի յիշատակին կատարուած հանդիսութեանց առիթով, փոքր տարակարծութիւն մը ստեղծուեցաւ յիբանանեան իշխանութեանց եւ հայ համայնքին միջեւ, թրքական կառավարութեան ներկայացուցած բողոքներուն պատճառով: Այդ բողոքին հետեւանով, հայկական երկու թերթերու դէմ դատ բացուեցաւ: Հաւանական է որ այդ պատիկ դատավարութիւնը ընդլայնի եւ աւելի ծանր հանգամանք ստանայ:

Հայերը կայծակի արագութեամբ մտոցան իրենց կուսակցական եւ քաղաքական հակամարտութիւնները, եզան մէկ սիրտ եւ մէկ եռոյ՝ ի պաշտպանութիւն հասարակաց հայ դատին, որուն հանդէպ չկայ հայ մը, որ ինքզինք պարտական չզգայ: Եւ այսպէս, միութիւն ստեղծեցին դաշնակցականները եւ հնչակեանները, կազմեցին մէկ թակատ, քառասուն տարուան հակամարտութիւններէն ետք:

Շատ փոքր պատկեր մըն է այս: Սակայն, ազգային պարտականութեան ըմբռնումի տեսակէտէն՝ իմաստը շատ մեծ է...

Լիբանանցիները դաս պիտի առնեն հայ համայնքի գաւակներէն, մեր եզբայրներէն:

26 Յունիս

«Նիտա ալ վաթան»

ԱՐԹԻՐ ԱՂԱՄՈԿ

ԲՈՒԺԵԼԻՆ ԵՒ ԱՆԲՈՒԺԵԼԻՆ

ԳՐԵՅ՝

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻ



«Ենդիպոսակութիւն» (La parodie) անունով Աղամոփի առաջին թատերգութիւնը պտուղն է վերեւ յիշուած դաղափարին: Թրարու արագօրէն յաջորդող տեսարաններուն մէջ, անիկա կը ներկայացնէ երկու մարդեր եւ իրենց հետ՝ իրենց նմանող յիմարացած ու դատարկամիտ եւ հասարակ աղջիկ մը, Լիլի: Անոնցմէ մէկը, զործակատարը, վառվրոտուն է վանատականի խառնուածք ունի եւ միշտ լուստես է, մինչ միւսը N-ը կրաւորական է, յուսաբեկ եւ անօգնական: Գործակատարը, որ դիպուածով մը ունեցած է այն թիւը կարծիքը, թէ ինք Լիլիին հետ ժամադրութիւն մը ունի, երբեք չի յուսահատիր եւ տեսարար կը մտածէ երեւակայական այդ ժամադրութեան մասին: Միւս կողմէ՝ N-ը իր ժամանակը կը վատէ փողոցները պտակելով, սպասելով Լիլիին, որ կրնար պատահաբար անցնիլ անկէ: Վերջաւորութեան՝ ե՛ւ վառվրոտն կեցուածքը դործակատարին, ե՛ւ միւս կողմէ՝ նուազատ կրաւորականութիւնը N-ին, ճշգրտօրէն

կը յանգին միեւնոյն հետեւանքին՝ ուշիւշին: Լիլիին նոյնիսկ չի կրնար իր երկու սիրամբոցորդներուն առանձին-առանձին խօսիլ: Գործակատարը բանտ կը նետուի, ուր կը շարունակէ սպազայ ծրարիքներ որոնել եւ տակաւին կը յուսայ պահել իր դիրքը, հակոտակ անոր որ կուրցած է արդէն: N-ը կը կրտսկուտի ինքնաշարժէ մը եւ աւելածունքու կողմէ կը նետուի աղբահաւաք-կառքը: Լիլիին կը կապուի յարաբերաբար յայտնաբերած մարդու մը՝ լրագրողի մը, որուն կը կարծէ սիրահարած ըլլալ եւ որ երկար կը սպասցնէ զինք իրենց ժամադրութիւններուն, մինչդեռ թերթին խմբագրիչը Լիլիին հետ կը վարուի իրբե իր համանունին: Իր պաշտօնէն դատ, խմբագրիչը, պարսպաներու համեմատ ինքզինք կու տար ուրիշ շարք մը հնդկանակաւոր անձնաւորութիւններու յատուկ հովեր, ինչպէս ճաշարաննայետի մը, հաստատութեան տնօրէնի մը եւայլն: Այս հաստատութեան մէջ իրեն եւթսուկայ դործակատարը կ'աշխատի իրբե

մտադրող, իբրև հիւրընկալ պանդոկի մը, ուր սակայն չի կրնար իրեն համար սենեակ մը ճարել: Ուր է գործակատարը կ'երևան այնպէս՝ ինչպէս որ են, մինչ լրացրողը եւ խմբադիրը ամբողջութեամբ զուրկն զիտուած են իբրև լաւ միւս մարդիկը, որոնք անբացատրելիօրէն մարդկային կացութեան տիրապետելու կարողութիւնը կը թուին ունենալ եւ որոնց կործանելը ոչինչ կը պատահի: Թատերգութեան մէջ իբրարու նմանող եւ զիրար փոխարինող զոյգեր կը գործեն իբրև երգչախումբ մը, որ մեզ շրջապատող անգիմաղկիմ ամբողջ մըն է. անոնք թատերգութեան զարգացման հետ կը ծերանան եւ կը մնան անանուն եւ գործողութեան ընդմէջէն զիրար փոխարինող մարդեր:

Ժամանակի հարցը միշտ մէջտեղ կը դրուի: Տիպարները շարունակ կը հարցնեն իրարու ժամանակի մասին, տուած պատասխանն էր ստանալու: Անարլաբ ժամացոյց մը տեղորին հետ տեսական ներկայութիւն մըն է: Ժամանակի գործողութիւնը եւս ցոյց տրուած է միջոցի ստորհանակաւ կրճատումով: Անուշիկ արարի երկրորդ տեսարանին մէջ երեւոյթ պարասրահ գործողութեան ընթացքին հետզհետէ կը փոքրանայ:

Տեղ մը, Ուր կ'երևայ պոռնիկի մը հետ, որմէ կը խնդրէ զինք նուստացրնել: Ինչպէս Ազամով ինքը կը մատնանէ, «հեղկատակութիւն»-ը նպաստեց իրեն, արդարացնելու համար իր սեփական կեցուածքը: «Եթէ Յոյնիսկ եւ Ուին պէս եմ, պիտի չպատժուիմ աւելի, քան գործակատարը»: Բազմաանոց գործունէութիւնը այնքան յուսահատական է, որքան անտարբերութիւնը եւ ինքնանուստացումը:

«Ենդկատակութիւն»-ը փորձ մըն է լեզու գտնելու ջնարարութեան հետ, որ հողերանակաւ վիճակները շօշափելի կ'ընծայէ: Ինչպէս Ազամով կը սահմանէ առաջին հրատարակութեան նախարանին մէջ, այս կարգի թատերգութեան մը բնագործութիւնը «եղկատակութեան» էր պի գգայնութիւններու աշխարհը, դէպի

մտային վիճակները եւ պատկերները, որոնք կը կազմեն իր թափուն ուժակաւուքիւնը: Բնագործութիւնը պէտք է ըլլայ տեսանելի եւ անտեսանելի աշխարհներուն հանդիպման կէտը. այլ խօսքով՝ գրանարուը ներքին երեւոյթներու, որոնք կը կազմեն շրջանակը թատերգութեան կորիզին:

Ի նպաստ դադարապաշտ տիրապետութեան՝ անհատապատկերան իր մտապահ մերժումով — որուն մէջ ան կը նմանի գերման արտայայտապաշտ թատերգութեան — «հեղկատակութիւն»-ը կը ներկայացնէ ըմբոստութիւն մը՝ հոգեբանական թատերի բարդ ոյթներուն դէմ: Ասիկա կանխամտածուած վերագործ մըն է դէպի նախնականութիւն: Ազամով չ'ուզեր ներկայացնել աշխարհը, կ'ուզէ հեղինակ զայն: «Երբ կ'անբաստանիմ զիս շրջապատող աշխարհը. յաճախ կը մտնեմ անոր իբրև խեղկատակութիւն մը միայն: Բայց հիւանդութիւնը, որ կ'ընդունիմ, աւելի քան մը կ'արժէ արդեօք. քան խեղկատակութիւնը»: Ենդկատակութիւնը ուղղակի է, թերտ եւ պարզաբանուած: «Ենդկատակութիւն»-ը կանխամտածուած կերպով կը խուսափի կատարելի բարդութիւններէն, տիպարներու կերտումէն կամ լեզուէն: Ասիկա համար թատերան է — ճամբուն վրայ պատկող Ուր, անխմաստ շարժումները ընող գործակատարը, իբրարու նմանող եւ զիրար փոխարինող զոյգերը կ'անցնին մարդկային գոյութեան շարժումներուն ընդմէջէն, առանց ճանաչելու ունակականութիւններ ըլլալու:

Այսպիսի սովորական տուեաններով հեղինակը ետք աշխարհը, Ազամով կը գգայ, թէ կը յանդի անելի մը: Իր յարդրութեան թատերախաղին մէջ, որ կը կրէ «Ենդկատակութեան» (L'invasion) խորագրերը, ան կ'աննէ առաջին քայլերը նկարելու համար իրական նկարագրերներու մարդկային իրար յարաբերութիւններուն մէջ: «Ենդկատակութիւն» թատերախաղին մեկուսացած, մեկուկեաց անհատները փոխարինուած են հոս բնատնկով մը: Ընտանիք մը, սակայն, որ բազկա-

ցած է դարձեալ մենակեաց անհատներով, անկարող իրարու հետ հաղորդակցութեան մէջ մտնելու, այսուհանդերձ անոնք իրարու կապուած են զօրաւոր կերպով, շաղկապ ունենալով մեռած հերոս մը:

Այս հերոսը մեռած գրաչէտ մըն է, Ժանը, որ իր բարեկամին եւ ոչակերտին՝ Փիէրին, որ նոյն ատեն իր զբո՞ղ՝ Ակնէսի ամուսինն է, ձգած է անընթեռնելի թուղթերու հսկայ կոյտ մը: Յարկարածինը, ուր անոնք կ'ապրին Փիէրի մօր հետ, կատարեալ լարիւրինթոս մըն է, որ կ'արտայայտէ տիպարներուն մտքին մէջ տիրող քառար: Ժանի ձգած գրարական ժառանգութեան վերժանուած անկարելի է: Անիկա ո՛չ միայն անընթեռնելի է, այլև հոն նկարագրուած տիպարները աղօտած են: Մարդ երբեք չի կրնար իրապէս գիտնալ, թէ իրապէս ի՞նչ զրած է մեռած գրաչէտը եւ կայ այն տեւական վտանգը, որ հետագայ վերժանուող պարզապէս իր մտքէն պիտի հնարէ զայդպէս զրոյս կր կարծէք, թէ վարպետը զրած էր: Նոյնիսկ եթէ էջի մը մէկ մասը, կամ նախադասութիւն մը կարելի ըլլայ ընթեռնելի դարձնել, տակաւին պէտք պիտի ըլլայ իմաստային ներդաշնակութիւն մը գտնել թուղթերու այդ հսկայ զանգուածին մէջ:

Ժան ունի ուրիշ աշակերտ մը, Թրատէլ, որ կը փորձէ օգնութեան հասնել, սակայն իր օժանդակութիւնը խիստ կասկածելի է, որովհետեւ ան կը ջանայ իր կողմէ մտքեր աւելցնել վարպետին գրութեանց մէջ: Անեանկին այս անկանոնութիւնը կը ներդաշնակուի ամբողջ երկրին վրայ տիրող տակնուվրայութեան հետ: Գաղթականներ կը խուժեն սասմաններէն ներս եւ ընկերային կառոյցը կը խախտի:

Երկրորդ արարին մէջ՝ սենեակին անկանոնութեան վրայ կը բարդուի առտնին առարկաներու խճողումը: Փիէրին համար աւելի կը դժուարանայ թուղթերուն ընթերցումը: Մարդ մը, որ քովի յարկարածինն մէջ մէկը կը

գիտուէ, խօսակցութեան կը բռնուի Ակնէսին հետ: Հոգ հանդիպող զառաջին մարդն էր ան», որուն հետ Ակնէս պիտի փախչի:

Երրորդ արարին մէջ՝ այդ նոյն մարդը կը դառնայ սենեակին մնացուն ներկայութիւններէն մէկը, մինչ Փիէր կ'ուզէ քաշուիլ իր գետնայարկ խուցը, հանդարտութեան մէջ աշխատելու համար: Ակնէս, յարմար ժամանակին, կը ձգէ դիմք եւ կը փախչի «հանդիպած առաջին մարդուն հետ»:

Չորրորդ արարին մէջ՝ սենեակը մաքրուած է, թուղթերը կողկի կերպով փակցուած են պատին, կարգն ու կանոնը դարձեալ վերահաստատուած են երկրին մէջ: Փիէր որոշած է լքել իր դրօշը եւ սկսած է պատեղ-փճագնիլ ձեռագիրները: Ակնէս դարձեալ կ'երեւայ, կ'ուզէ փոխ առնել դրամեքան: Իր սիրահարը հիւանդ է եւ ինք անկարող է կարգի դնել անոր գործերը: Փիէր, որ իր գետնայարկ խուցը քաշուած էր՝ մեռած կը գտնուի Թրատէլի կողմէ:

«Ներխուժոււմը» Թատերգութիւն մըն է իմաստի անյոյս որոնումի: Պատգամի մը հարցն է, որ պիտի իմաստաւորէ անընթեռնելի թուղթերու կոյտը, սակայն անիկա կապ ունի ընտանիքին եւ շնկերութեան մէջ եղած թէ՛ կանոնաւորութեան եւ թէ՛ խառնիճազանճին հետ: Գրեթէ այնպէս կը թուի, որ Ակնէս կը խորհրդանշէ խառնիճազանճը: Արդեօք Փիէր Ակնէսի հետ ամուսնանալով՝ նոյն ատեն զօրաւոր կապով մը չի՞ կապուիլ նաեւ Ակնէսի մեռած եղբոր եւ անոր խառնաշփոթ ձեռագիրներուն: Երբ Ակնէս կը ձգէ տունը, կարգն ու կանոնը կը վերադառնան հոն եւ անկանոնութիւնն ու ձախողութիւնը կը հաստատուին այն մարդուն տան մէջ, որուն հոմանուէին դարձած էր ինք: Միւս կողմէ՝ Փիէր կը մեռնի, երբ կը հրատարի ձեռագիրներու ընթերցումէն: Ան կը կորսնցնէ Ակնէսը, որ կը միանայ իր «հանդիպած առաջին մարդուն», որովհետեւ Փիէր աւելի եւ աւելի կը հեռանայ մարդկային յարաբերութիւններէն:

Անկանոնութիւնը, որ Ակնէս կը բերէ՝ կը խորհրդանշէ իրականութեան բնոյթը եւ ժարդկային յարաբերութեանց խառնաշփոթ վիճակը, որ Փիէրի համար անկարելի կ'ըլլայ զիմակաւել: Ան կը հրատարի ուրիշներու հետ յարաբերութիւն ունենալէ, որովհետեւ յարաբերութիւնները աստիճանաբար կը դժուարանան եւ շեղուեն կ'այլասերի իր աշխարհն առջեւ: «Ինչո՞ւ մէկը կ'ըլլէ»՝ աստիկա կը պատահի»¹. «Վ'ի աստիկայան, ի՞նչ կ'ուզէ ինձմէ: Ինչո՞ւ մէկը կ'ըլլէ եզնանին վրայ» եւ ոչ ուրիշ բան: Եման հարցերու մասին մտածելով, ես շատ ժամանակ կորսնցուցած եմ: Ինչ որ կ'ուզեմ բառերուն իմաստը չէ, այլ անոնց ծաւալը եւ շարժումն ամբողջութիւնը: Ուշին պիտի փնտրենք այլեւս... Պիտի սպասեմ լուսութեան մէջ, անշարժ»:

Փիէր կը խնդրէ մօրմէն — որ ուտելիք կը բերէ իրեն իր խուցը — շիտախի հետք, իբրեւ նշան մը կատարեալ խզումի: Սակայն, երբ կը թօթափէ մերժողական իր կեցուածքը, երբ կ'որոշէ, թէ ինք կ'ուզէ կեանքին վերադառնալ, ապրիլ կեանքը բոլոր մարդոց պէս, հոն կը դիտանայ, որ Ակնէս լքած է գինք: «Ան անկեցաւ շատ ուշ, կամ շատ կանուխ: Եթէ Քիչ մը աւելի համբերութիւն ունենար, մենք դարձեալ կը սկսէինք հեանքը», կ'ըսէ Փիէր եւ կը վերադառնայ իր խուցը՝ մեռնելու, փախցնելով Ակնէսին հանդիպելու առիթը, որ զգրամեթեան փոխ առնելու» պատրուակով կկած էր, վերստին ընդունուելու յայտնի բաղձանքով: Սակայն Փիէրի մայրը չ'ըմբռնեց կամ չ'սպեցր ըմբռնել կացութիւնը եւ վեր չէ կանչեր Փիէրը:

Հոս ողբերգութիւնը կը դառնայ թիւրիմացութեան մը շուրջ: Եթէ Փիէրի մայրը Ակնէսի խնդրանքը բառացի յառնէր, եթէ թափանցէր զգրամեթեան առնելու» պատրուակին ետին թաքնուած անոր մտադրութեան, ընտանիքին մասնակից դառնալու մտադրութեան, Փիէր թերեւս չ'ընտելէր անէր ու լքուած: Ազամով կը քայտարէ, թէ ինչպէս ինք կը խորհէր դատած ըլլալ թատերական դիւս

մը՝ անուղղակի տխարիկ, այսինքն՝ տիպարներու գործածած անուղղակի լեզուն — գրամեթեանի պարագան: Ատիկա անոր համար, որ թատերգութեան հերոսները չունին քաղութիւնը բացառապէս արտայայտելու Կրեկոց զգացումները, որով՝ իրենք գիրենք կը նետեն ողբերգական թիւրիմացութիւններու մէջ: Աւելի ուշ, Ազամով դիտակցեցաւ, թէ ինք պարզապէս վերակենդանացած էր թեքիք մը, որ արդէն իսկ կիրարկուած էր ուրիշ թատերադրներու կողմէ, մասնաւորաբար՝ Չեխովի:

«Ներխուժումը» անաղիքիկ յաճախանքներով լի թատերգութիւն մըն է: Անորէ ժիտ խորագէտ սպասուած էր անկէ՝ կը խորհէր, որ իրենդիբը կը դառնար մեռած գրողի մը մեծութեան շուրջ, որ աստիճանաբար կը սկարանայ եւ կը սփռուի — վստահաբար թիւրիմացութիւն մը Եւրոպի դրազէտին կողմէ, որ իր սերունդին չափանիշներով կը դատէր նոր ժամանակներու գործ մը: Արդի բնութեզոյն համար «Ներխուժումը» թատերախաղին ամէնէն աղղեցիկ մասը մեռած հերոսին ոչ-իրական հանգամանքն է, այն իրողութիւնը, որ իր շատ հուրովուած պատգամը էապէս անիմաստ է — անհեթեթ:

Ժան Վիլար, Փրանսական արդի թատրոնի մեծագոյն բեմադրիչն ու զերասաններէն մէկը, որ բեմադրած է Ազամովի կողմէ թատերգութեան վերածուած Պուիսէրի «Տմբորճի Մահը» Ավինիոնի 1948-ի Փառատօնին, ժամանակակից ժարդու ունեցող կը դիտէ «Ներխուժումը»: Ան բարձրօրէն կը դժաւատէ «պինապարդ տխարակներն աւ եկթրիքները մերժելու Ազամովի կորովը, որ նայնատեն քառորճին կը վերադարձներ իր ջինց մաքրութիւնը»: Ան կը հակադրէ արդի թատրոնը Քլոսէի թատրոնին, «որ փոխ կ'առնէ իր ներշնչումը հաւատքի ալիքէն եւ ստուցիկ բառերէն», եւ բազմապէս Ազամովն ու Քլոսէի՝ Քլոսէն կու տայ Ազամովին:

Ժիտի եւ Վիլարի Ազամովին ըրած

դճանտանքները, առաւել՝ բեմական եւ գրական զգացերու կողմէ կատարուած այլ մեկնարանութիւններ, ինչպէս Րընէ Շարի, Ժագ Փրէվէրի եւ Րոթէ Պլէնի արժեւորումները հրատարակուած են պղտիկ հատորի մը մէջ, ուր կը պարզուի, որ Ադամով չկարենալով բեմ բարձրացնել իր առաջին երկու թատերադուբլիները, գանոնք կը ներկայացնէ ընթերցող հասարակութեան, 1950-ի գարնան: Այս հատորին հրատարակութիւնը բաղձալի անդրադարձ մը կ'ունենայ: Նոյն տարուան Նոյեմբեր 14-ին, Ժան Վիլարի բեմադրութեամբ «Ներխուժումը» կը սկսէր Սթիւտիո Շոն գէլիդէի թատրոնին մէջ: Ատկէ ճիշդ երեք օր առաջ, Ադամովի երրորդ թատերադուբլինը «Մեծ և պղտիկ ռազմավարութիւններ»-ը (Grands et petits manœuvres) ներկայացուած էր Նոքթիւմալ թատրոնին մէջ, բեմադրութեամբ Փրանսական թատրոնի սկանաւոր աստղապաներէն Ժան-Մարի Սէրրոյի, գլխաւոր դերը վստահելով Րոթէ Պլէնի:

Ադամով ինքը կը բացատրէ «Մեծ եւ պղտիկ ռազմավարութիւններ»-ը գործին խորագիրը, որ թատերադուբլեան մէջ դրսեւորուած փոքր շափի շարժումի մը անկանոնութեան ակնարկութիւն մըն է, հակադրուած՝ մարդկային կացութեան ընդարձակ շարժումին, որ կը պարփակէ եւ կը կրհատէ փոքր շարժումը: Գործողութիւնը բառը հոս կը գործածուի կրկնակ իմաստով, դիտարական եւ հոգեմանական:

«Մեծ և պղտիկ ռազմավարութիւններ»-ը կը միացնէ «Սոնիկատակութիւն» թատերախաղին թեմաները, առաւել՝ «Ներխուժում»-ին ընկերային և քաղաքական անհասարակչութիւնը: Գործուն ու անձնազոհ յեղափոխական ղեկավարի մը պայքարը ցոյց տրուած է հոն այնքան ապօրդին, որքան կրաւորականութիւնը հոգեբանական թաքուն ուժերու տակ շարշարուած զոհի մը, որ կը գործադրէ հրահանգները անտեսանելի հրամայողներու, որոնք կ'առաջնորդեն զինք զէպի աստիճանական քայլաշար: Գործողու-

թիւնը տեղի կ'ունենայ մենատէրի մը կողմէ ճնշուած երկրի մը մէջ, Գործուն տիպարը՝ յեղափոխականը յաղթական պայքարը կ'առաջնորդէ երկրին զինուորական դրութեան դէմ եւ կ'իյնայ, երբ ճառ կ'արտասանէ այն մասին, թէ յեղափոխականները, ի միջի այլոց, վայրագ միջոցներու գիժած են յաղթանակը չահելու համար: Աւելին. յեղափոխականը պատճառ կը դառնայ իր իսկ զուկին մահուան, որովհետեւ իր սոսկացուցած անկարգութեան հետեւանքով բռնիկը չի կրնար օգնութեան փութայ: Անգամ մը ետ, յեղափոխականը աւելի ուշիչ կ'ապահովէ, քան կրաւորական տիպարը, հաշմանկամը, որ կաղ եւ թեւատ, իր օրերը կառքի մը վրայ կ'անցընէ, փողոց կը շարտուի իր պաշտած կրնոջ կողմէ եւ, ի վերջոյ, կը ճզմուի ամբոխին ոտքին տակ:

Հաշմանկամը, որ պէտք է հնազանդի իր ներքին ձայներուն, ա՛յն ձայներուն, որոնք կը ստիպեն զինք զննել ձեռքերը տնդամահատող մեքենային տակ, կամ քալել զինք կոնկրետող ինքնաշարժի մը առջեւէն, հեղինակին կեցուածքը մարմնաւորող գլխաւոր տիպարն է: Հաշմանկամութիւնները, Ադամովի նախորդ թատերադուբլիներուն մէջ ներկայացուած N-ի եւ Փիէրի մահուան պարագաներուն նման՝ ուղղակի հետեւանքն են եւ արտայայտութիւնը սիրելու եւ մարդկային յարաբերութիւններ մշակելու անկարողութեան: Ան ինքնիքն կ'ըսէ, որ եթէ կարենար ապրիլ կոնջ մը ճետ եւ զուակ մը ունենար անկէ, ներքին ձայները պիտի դադարէին իր վրայ աղոթողութիւն ունենալէ: Արկածները, որոնց մէջ ան կը կործնուի իր անդամները մէկը միւսին ետեւէն, բնդհանրապէս կը յաջողեն իր յաճախակի ձախողութիւններուն եւ արկելը կ'ըլլան նուաճելու սէրը իր սիրած կնոջ՝ էրնայի, որ ասոնատեն կ'ըսէ, թէ կը մտածէ իր մասին, մինչ ուրիշ պարագաներու կ'երևայ պարզապէս զինք լրտեսած պահուան, ի հաշիւ գաղտնի ոստիկանի մը, որ իր հոմանին էր:

Յոյժ կենսունակ եւ աշարհու երազի մը վրայ խարսխուած այս թատերախաղը մեկնարանած է ինքը՝ Ազատոյ, ճարտարագիտական քաղաքական պայքարին մէջ գործօն մասնակցութիւն մը կարենալ բերելու իր ձախողութիւնը արդարացնելու իբրև փորձ մը։ Դուրսէն զի սողին համար, ստիկա անկատար հաշուետուութիւն մըն է՝ ի մասին «Մեծ և պրպտիկ ազգամարտաբաններ» թատերախաղին բարձր բովանդակութեան։ Այս թատերախաղը ոչ միայն վիճելի կը դարձնէ (ինչպէս այսօր Ազատոյ անտեղիորէն կը հաւատայ) քաղաքական սարսափը վերացնելու յեղափոխական ճիգերուն ապարդիւնութիւնը — որովհետեւ բոլոր իշխանութիւնները հիմ ունին բիրա ուժին գործածութիւնը — այլև շատ պատկերաւից ձեւով ցոյց կու տայ այն, որ հիմնական նմանութիւն մը կայ արդարութեան համար մարտնչող յեղափոխականի մը եւ իր ենթադրականութեան անհաւասար ուժերուն ենթակայ կրաւորակտն ստրուկի մը միջև։ Այն կարուկ հրամայականները, որոնք կը ստիպեն աճուղողով լքելու իր կիներ եւ, վերջապէս, պատճառ կը դառնան իր զակիւն մահուան, հիմնականորէն առաջ կու դան չկարենալ սիրելու նոյն անկարողութեանն, որ իր ենթադրականութեան անդետեղելի հրամաններուն հետ կը մղեն դինք մաշտիտական ինքնաքանդումի։ Յեղափոխականին յարձակողական բնադրանքը պարզապէս հակադիր կողմերն են ինքզինքին հանդէպ ունեցած հաշմանդամի մարձակամեներուն։

«Մեծ և պրպտիկ ազգամարտաբաններ» թատերախաղին զանազան իմաստներուն մեկնարանութիւնները ապացոյց մըն են այն ուժին, որ իբրև թատերական առաջադրութիւն՝ նպատակ ունի մարդկային հիմնական որոնումներուն խոր եւ տառապազին փորձառութիւնը։ Այս թատերախաղը ցոյց կու տայ նաեւ թե՛ յիշատակումն սիրապետած ըլլալու Ազատոյի կարողութիւնը, զոր կ'օգտագործէ իր զաղափարները մարմնաւորելու համար։ Թատերախաղին գործողու-

թիւնը ոչ միայն ազդու ձեւով մը առաջ կը տարուի, ոչ միայն հակադիր տեսարանները շարժապատկերային տեսարաններու արագ յաջորդականութեան մը յատկութիւնը ունին, այլև կը հանգիստան կատարեալ իրականացումը Ազատոյի այն մտեցումին, ըստ որում թատերը պէտք է ի վիճակի ըլլայ պարզ պատկերներու միջոցով մարմնաւորել զազափարական եւ հոգեբանական իրականութիւնները։ Այնպէս որ, «արտայայտական ձեւը արի է գրականօրէն եւ աւարկայականօրէն համապատասխանել մոյնիմն րովանդակութեան»։

Այս հանգամանքը կը մղէ թատերողիւր լեզուէն աւելի շեշտը դնել տեսանելի գործողութեան վրայ։ Այդ պարագային, թատերգութեան լեզուն կը դադարէ բանաստեղծական առանցք մը ունենալէ, ինչպէս է պարսկան Բլոտելի թատերին, որուն ժան Վիլար կը հակադրէր Ազատոյի թատերը։ Ազատոյ ինք է, որ կը սահմանէ այս տեղափոխութիւնը։ «Մարտնչական անկախ գարգացումի մը մէջ է, որ կը տեսնեմ մոր երեւոյթի մը յայտնութիւնը, որուն պիտի չկարենայ օժանդակել լեզուն, բայց, փոխադարձաբար, եթէ լեզուն մերգաշնակուի շարժումին այն պահուն, երբ այս վերջինը միտքիցով դարձած է, սովորական եւ ամէնօրեայ խօսակցութիւնները պիտի շահին մար աւ մը, գորկարելի պիտի ըլլայ բանաստեղծութիւն կոչել եւ ես պարզապէս գոհ պիտի ըլլամ, նկատելով, որ անկա ազգու կերպով կը կատարէ իր պաշտօնը»։ Բովանդակութեանն զէպի տեսանելին է բառականէն զէպի արտայայտութիւն ընթացող ոճը ամբողջովին իրականացած է «Մեծ եւ պրպտիկ ազգամարտաբաններ» թատերախաղին մէջ։

Միջոցը, գոր Ազատոյ կատարելագործած էր, հարկ եղած պարագաներուն օգտագործելի ըլլալ կը թուի։ Միակ խոչընդոտը կիրարկութեան դաշտին սահմանափակութիւնն է, որովհետեւ յարաբերաբար շատ քիչ են մարդկային այն հիմնական կացութիւնները, որոնք

կրնան արտայայտուիլ այսքան պարզ եւ ընդհանուր ձեւով մը:

Մինչ իր յաջորդ «Թատերգութիւնը» «Թափօրին ուղղութիւնը» (La direction de la Marche) կը պարունակէ նախորդ գործերուն շատ մը թեմաները, Ազատով դարձեալ կը յաջողի գտնել իր հիմնական մտորումները արտայայտող նոր ձեւեր, ներդնելով այդպէս կարեւոր նոր տարր մը, որ կը նշէ հին ձեւերով կազմուած սարդոստայնը յաղթահարելու փաստը: «Թափօրին ուղղութիւնը» թատերգութեան մէջ, Հերոսը առաջին իսկ վայրկեանէն կը մերժէ ենթարկուիլ եւ կ'անցնի յարձակումի: Այս արարքը կըրնայ ուղղուած չլլայ իր տաղանակներուն իրական հեղինակին դէմ: Արարքը ինքնին արժէք կը ներկայացնէ: Հերոսը, Հանրին, բռնառէր հօր մը դաւաճը, կ'անցնի քանի մը դէպքերու ընդմէջէն, ուր ան շարք մը արարքներ մարմնացնելով կը հանդիպի հօր պատկերին: Հօրը պատկերին կը հանդիպի դիմուրական ծառայութեան զացած աստի, հրամանատարին անձին մէջ, կրօնական աղանդի մը առաջնորդին մէջ, որուն աղջկան նշանածն է ինք մտմանակի մը համար, իրբեւ ուսուցիչ իր պաշտօնավարած դպրոցին տնօրէնին մէջ: Հանրին կ'ենթարկուի այս ամէնուն, բայց երբ տուն կը վերադառնայ եւ կը տեսնէ հօրը խարդախ գործակատարը, որ տեսակ մը բռնապետ դարձած էր ու սիրահարուած քրոջը՝ կը խեղդէ զայն: Ինչպէս Ազատով կը մասնանշէ, իրբեւ մեկնակէտ ունէր այն զաղափարը, թէ այս կեանքին մէջ հիմնական պարագաները իրենք իրենց սարսափազդու են, ուր նայն վիճակները ճակատադրականօրէն կը պատահին, միակ բանը, որ կրնանք ընել քանդելն է, քանդելու շատ ուշ անդրադարձումով մը, ինչ որ սխալմամբ մենք կը նկատենք իրական խոչընդոտը, բայց որ իրականութեան մէջ պարզապէս չարագործութիւններու շարքին վերջին էջն է: Ատիկա շատ ինքնատիպ զաղափար մըն է եւ միայն երեւակայութեան մէջ իրականացած: Իր նախկին թատերգու-

թիւններէն կարգ մը թեմաները կը վերայայտնուին, ինչպէս յեղափոխականները, որոնք դարձեալ անյաջող են, Հերոսին սիրելու անկարողութիւնը եւ քրոջը պատկերը:

Ազատով բաւարարուած չէր «Թափօրին ուղղութիւնը» թատերգութեամբ եւ այդ պատճառով մտմանակի մը համար մէկ կողմ դրած էր զայն, երբ ուրիշ երազ մը ո՛չ միայն ամբողջ թատերգութեան մը զաղափարը կու տայ իրեն, այլեւ զրեթէ ամբողջ թատերգութեան մը՝ պատրաստ իր բոլոր մանրամասնութիւններով: Այս թատերգութիւնը, որ կը կոչուի «Փրոֆեսէօր Թալան», մշտական անկրկնադարձ մը կ'ըլլայ Ազատովի թատերական զարգացումին մէջ:

Փրոֆեսէօրը կ'ամբաստանուի ծովազերքին վրայ մերկացած ըլլալու անբարոյականութեամբ: Ան կը մերժէ ամբաստանութիւնը, հարաբորէն յիշեցնելով, թէ ինք նշանաւոր մտաւորական մըն է, որ Պելճիքա հրախրուած է դոստոտութիւններու շարք մը տուլու: Որքան ուժգնօրէն բողբոջէ, այնքան աւելի խոր կերպով կը մխրճուի հակասութիւններու մէջ, ուր աւելի հաւանական կը դառնան իր դէմ եղած ամբաստանութիւնները: Տիկին մը, որ ստտիկանատուն եկած էր, կը թուի ճանչցած ըլլալ զինք, փրոֆեսէօր կը կոչէ զինք, զայն շփոթելով ուրիշի մը՝ փրոֆ. Մենարին հետ, որուն հետ մերձաւոր նմանութիւն մը ունի Թարան: Տեսարանը կը փոխուի ու կը վերածուի պանդոկի, ուր կը մնայ ան: Թարան զարձեալ կ'ամբաստանուի ծովափնեայ սենեակի մը մէջ ուղտերգութիւններ ձգած ըլլալու յանցանքով: Սակայն կը բողբոջէ, թէ ինք սենեակին մէջ շփոթեցաւ, բայց այս ըսելով կը հաստատէ նախկին ամբաստանութիւնը: Ոստիկանները Թարանին առջեւ կը գնեն Խրենց երեւան հանած մէկ ձեռատետրը, Թարան կը ճանչնայ ձեռատետրը, սակայն չի կրնար ճանչնալ ձեռագիրը: Աւելին. ձեռատետրին էջերը մեծ մասամբ պարայ են, մինչ Թարան կը յամառի բռնել, թէ ամբողջովին գործածած էր

զայն: Թուղթերու արցակ մը կը գրուի փրոֆեսէօրին առջեւ, մեծ շողեկաբքի մը ճաշարանին քարտէսը ձեւացնող թուղթերու արցակ մը, որուն վրայ ցրցուն կերպով նշանակուած է պատուոյ սեղանը:

Ճէյն, աղպահանուհի մը կամ քարտուղարուհի մը փրոֆեսէօրին, այս վերջինին կը բերէ նամակ մը: Նամակը կու դայ Պելճիքայի Համալսարանի տնօրէնութենէն: Անիկա պիտի արդարացընէր Թարանի ակնկալութիւնները, բայց իրականութեան մէջ կտրուկ մերժում մըն էր ուսուցչութիւնը շարունակելու իր լաւճանքին: Ու ասիկա անոր համար, որ նկատուած էր, որ իր դասախօսութիւնները նշանաւոր փրոֆեսէօր Սենարի մտքերուն բանադարձութիւններն էին: Թարան կը մնայ միւս միւսին: Սենակին պատէն կը կախէ շողեկաբքի ճաշարանին քարտէսը, որ պարզապէս ճերմակ թուղթի մը վերածուած է հիմա: Փրոֆեսէօր Թարան կամաց-կամաց կը սկսի մերկանալ, կատարելով այսպէս ա՛յն անպարկեշտ արարքը, որով ամբաստանուած էր: Անգամ մը իբրեւ նենգ ամբաստանուելէ հետք, այդ ճամբով կը սկսի դրսեւորել ինքզինք: Ատիկա մրդմուտն է մարդու մը, որ կ'ուզէ իր ինքնութիւնը հաստատել, անկարող ըլլալով եղբակացուցիչ սպառնոյց մը տալը անոր:

Թատերգութիւնը ուղղակի ընդօրինակութիւնն է այրուած երազի մը, առանց «մասնաւոր նշանակութիւն մը տալու կամ որեւէ բան հաստատելու» փորձին: Ամէն ինչ որ կը պատահի Թարանին, պատահած է արդէն Աղամովի, ա՛յն միակ տարրերութեամբ, որ այս վերջինը «փոխանակ եւ փրոֆեսէօր Թարանն են պոռայու, «եկեղիստակութեան» ներդրանքն են» կը պոռայ:

Աղամով Թատերական իր դարպաշուին մէջ մասնաւոր կարեւորութիւն մը կ'ընծայէ «Փրոֆեսէօր Թարան»-ին: Արտադրելով իրական երազ մը, կարծես կը ստիպուի վճարական ուսում մը կատարել: Իր Թատերգութիւններուն մէջ

ատակին անգամ ըլլալով կը գործածէ իրական տեղի մը անունը, տեղ մը, որ գոյութիւն ունի իրական աշխարհին մէջ: Թարան կը հաստատէ, թէ ինք զատախօսած է Պելճիքայի մէջ եւ ստացած է պելճիքական գրոշմաթուղթով կնքուած նամակ մը: «Ասիկա չնչին բան մը կը թափ, այսուհանդերձ ատաղիմ անգամ ըլլալով քանաւորակում երկրային աշխարհէն դուրս եկայ եւ իրերը կոչեցի իրենց իսկական անուններով»:

Եւ իրապէս «Խոստովանութիւն» (L'aveu) Թատերգութիւնը ցուատանջ հեղինակին համար, որ այս գործին մէջ կը տառապէր սասանմութենէն եւ անխառնած ըլլալու դադարիտէն, թէ եւ քիչ չափով, բայց հսկայաբայլ յատկաբանութիւն մը կատարած է իրականութեան հետ կապ հաստատելու տարրերութեամբ, արտաքին աշխարհի իրականութեան հետ, հետո՛ւ իր մղձաւանջներէն: Անշուշտ, «Խոստովանութիւն» Թատերգութիւնը մէջ Աղամով նկարագրած է իր անձնական փորձառութիւններէն քաղուած իրական տեսարաններ, բայց հսկայական տարրերութիւն մը կայ իր տառապանքներուն կանխամտածուած ստորնացումին — խորհրդանշուած Թարանի մերկացումով — եւ իր ստեղծագործ երեւակայութեամբ իրական աշխարհը ներկայագրելու կարողութեան միջեւ, որ կ'ենթադրէ իրմէ դուրս գտնուած աշխարհին նուաճումը:

Ինչպէս խորթաբանց իր մէջ գրութեան մէջ Մորիս Բէճիօ կը մատնանէ, «Փրոֆեսէօր Թարան»-ը կարեւոր ուրիշ անկիւնադարձ մըն է Աղամովի Թատերական ստեղծագործին մէջ: Որպէսզի արտայայտէ իր ներքին պարտաւը եւ կենսութիւնը անհետնութիւնը, իր նախորդ Թատերգութիւններուն մէջ՝ Աղամով կը ցուցնէր երկու հիմնականներէն հսկասական կեցուածքներ, որոնք, վերջին հաշուով, նոյն կէտին կը յանդիման, այսինքն՝ ոչնչութեան: Ոչնչութեանը երկու հատկութիւններու, — գործակաւարը կողիւր տիպարներու, — գործակաւարը եւ N-ը, Փիէրը եւ իր հեղահամբոյր մայրը, մարտունակը եւ հաշմանկամը,

Հանրին եւ յեղափոխականները: Երազր, որուն վրայ կառուցուած է ՎՊՐՈՓԵՍԵՏՈՐ Թարաւնք-ը, առաջին անգամ ըլլալով Ազամովին ցոյց կու տայ ճամբան, ուր կայուն եւ ինքնաբանդումի կեցածքները միտմամանակ կը միտմուշին մէկ տիպարի մէջ — ինքզինք իրրեւ պատուաւոր քաղաքացի պարտադրելու ջանքը եւ մտաւորական նուաճումները: Հոս է, որ Թարան կը դրոսեւորէ այս արարքներուն նենդութիւնը, թէ՛ ինքզինք իրրեւ պատուաւոր քաղաքացի ներկայացընելու եւ թէ մտաւորական նուաճումները իրրեւ արժէք պարտադրելու ճիւղին մէջ: Եւ երբեք յոտակ չէ արդէն, թէ Թատերգութիւնը ինչ կը Հետապնդէ, դիմակազերծ նե՞նդ մը, թէ անմեղ արարած մը, որ դէմ յանդիման կու գայ զաւազրութեան մը, որ կը ձգտի իր աղինկալութիւնները խորտակել: Իրականութեան մէջ, Ազամով ինքզինք կը նոյնացնէ Թարանի Հետ: Այս կարծիքը աւելի Հոգ կը զսնէ անո՛ր Համար, որ Ազամով, գիշեր մը, երազին մէջ կը գառանցէ. «Ես ճեղկատախտախան» հնդիւնակն եմ», եւ անկասկած որ ի՛նքն է Հեղինակը եւ սակայն յայտնական մղձաւանջներու դէմ յանդիման դալու իր պահանջը կը Հերթէ դառանցանքին մէջ եղած Հաստատումը: Անուշուտ, եթէ բուրդ գործունէութիւնները զուր եւ անհեթեթ են, այն ատեն Թատերգութիւնը դրելու միտքը կը մթառնէ բուրդ նուաճումները: Այսպէս, ուրեմն, ՎՊՐՈՓԵՍԵՏՈՐ Թարաւնք-ը Թատերգութեան մէջ՝ Հերոսը թէ՛ գործունէ մտաւորական մըն է, թէ՛ վատ մը, յարգամեծար քաղաքացի մը եւ երեւնալու մարմաղով սառապող անձ մը, լուսատես յատկութիւններով օժտուած աշխատունակ մէկը եւ ինքզինք կործանող թուլ նկարագրով յոռետես մը: ՎՊՐՈՓԵՍԵՏՈՐ Թարաւնք-ի մէջ այս պարագան կը բանայ ճամբայ մը Ազամովի առջեւ, ստեղծելու Համար երկուքի փոխարէն բազմարժէք եւ հոսկողմանի տիպարներ, անոնցմով փոխարինելու Համար յստակօրէն սահմանուած հոգեբանական ուժերու նախանշանակալ արտայայտութիւնները:

Ազամով գրեց ՎՊՐՈՓԵՍԵՏՈՐ Թարաւնք-ը 1951-ին, երկու օրուան ընթացքին, մինչ իր առաջին երկու Թատերգութիւնները մի քանի տարիներ խլած էին իր մէ: Ասիկա յոտակօրէն կը մասնանշէ, թէ ինչպէս յաջողած էր յաղթահարել իր շղագարութիւնը, փոխարինելով զայն ստեղծագործ ճիւղով:

Ամբողջացնելէ ետք ՎՊՐՈՓԵՍԵՏՈՐ Թարաւնք-ը, որ ընդմիջուած էր ՎՊՐՈՓԵՍԵՏՈՐ Թարաւնք-ը Թատերգութեան մղձաւանջային յղացումով, Ազամով կը վերադառնար նիւթի մը, որ նախապէս շարչարած էր իր ուղեգր, այսինքն՝ ժամանակներու անկանոնութեան, բնկերային տակնուփոխութեան եւ իշխողներու կողմէ շղթայադերժուած Հարածանքին: Իր «Ամէնքը աւելուն դէմ» (Tous contre tous) Թատերգութեան մէջ՝ մենք դարձեալ կը գտնուինք երկրի մը մէջ, որ խճողուած է արտասահմանէն ներխուժած զաղթականներով: Գաղթականները դիւրութեամբ կը անշղթային, որովհետեւ անոնք բոլորն ալ կող են: Հերոսին՝ Ժան Բիսթի կիներ կը կողդի զաղթականներէն մէկուն եւ Ժան կը դառնայ անդուստր ամբողջար մը անոնց դէմ: Կարճատեւ շրջան մը իջնաստիկներ Ժան Բիսթի ձեռքը կը մտայ, բայց երբ քաղաքական բախտի անիւր կը գտնայ եւ Հրամայողիկը կը դառնան Հրպատակներ, ան Հաղիւ խոյս կու տայ բանտարկուելէ, ձեւացնելով ինքզինք կազ զաղթական մը: Կայրի անստուգութեան մէջ, թունուած զաղթական սըլըկայ մը սիրով: Երբ քաղաքական տիրիչ տակնուփոխութիւն մը տեղի կ'ունենայ եւ զաղթականները դարձեալ իշխանութեան դուրս կ'անցնին, թերեւս անկարենար մահէն ճողոպրելի, եթէ յայտնելու իր իսկական ինքնութիւնը: Միւս կողմէ սակայն, Հաստատելով, թէ ինք զաղթականները քաջածանօթ ատող մըն է, պիտի կորսնցնէր զաղթական աղբկան սէրը: Կը մերթէ յայտնել իր ինքնութիւնը եւ կը դիմէ դէպի մահ:

Ի դէմս Ժան Բիսթի, Ազամով դարձեալ մէկ տիպարի մէջ ձուլած է երկու Հակադիր ձգտումներ՝ Հայածոցը եւ Հա-

լածանքին զոհը, ոչ միաժամանակ, ինչու
պէս էր պարագան «Փրոֆեսէօր Թարա-
նչ»-ի, այլ յովորդարաբար, ժամանակի եւ
իրերայաջորդ վերիվայրուժներու րն-
թացքին, հանգամանք մը, որմէ տուժած
է ինք, Թատերախաղը դուրս եկած է հը-
ւաղ յաջող: Թատերախաղի աւարտին,
սիրոյ համար անձնադաճութեան արարքը
քննադատուած է իբրեւ հակում մը դէ-
պի դրացացական հերոսները, որ կ'առաջ-
նորդէ ռոմանթիք Թատերախաղերու
պայմաններուն: Կրնայ այս մեկնարա-
նութիւնը ճիշդ չլըլլալ: Ինքզինք փրկե-
լու ժամի դարձած անձնապահութեան
արարքը կարելի է մեկնարանել նաեւ իբ-
րեւ մերժումի արարք մը, իբրեւ հետե-
ւանք անհեթեթ կացութեան մը եւ շա-
րունակ կրկնուող ճակատագրի մը: Այն
րանէն, որ Թատերախաղը կը տառապի
— ըստ Աղամալի — իրականութեան հետ
դժ յանդիման չկարենալ դալա իբ տը-
կարութենէն: Գրեթէ յստակ է, որ այդ
իրականութիւնը հրէական հարցն է, կամ
սոսնուանց ցեղասպանութեան հարցը:
Սալայն յատկապէս շահմանուած շըր-
լանակի մը մէջ, կամ պատմական օրոյ
ըջանի մը մէջ տեղաւորելով իբ հերոս-
ները, հեղինակը կը ձախողի նիւթը լա-
սագոյնա ներկայացնելու իբ ճիշդին մէջ,
եւ անկարող կ'ըլլայ հայթայթել ենթա-
հող մը, որ պիտի բացատրէր տուեալ
հարցին ճիշդ եւ սխալ կողմերը: Ինչո՞ւ
զաղթականները իրենց ներխուժած երկ-
րի բնիկներուն դործերը կը խլեն, կամ
բնիկները՝ իրենք արդարանալով՝ են դադ-
թականները երկրէն դուրս շարժելով:
Աղամալ ինք գիտակից է այս թերու-
թիւններուն: Մէկ կողմէ, կ'ըսէ, թէ ինք
կ'ուզէ ցոյց տալ, որ բոլոր կողմերն ալ
հասարակապէս այսպանելի են նման պայ-
թարի մը մէջ, եւ սակայն կը գիտակցի,
թէ մեծ թիւով զբարիս նկարագիրներ
դուհերու վերածած է, որոյնպէս անոնք
պարզապէս անմեղօրէն տառապին: Իսկ
Աղամալ կ'աւելցնէ. «Նս սառսպեցայ
իճծի պարտադրուած տեղի ամբողջու-
թեան հետեւաճօղ եղած սահմանափա-
կումներով, նախաճանակեալ տիպարնե-

րու շահգամայնէն, կացութիւններու
խորհրդանշանէն, բայց չզգացի, թէ քն-
կերային ճիւղ մը յուզելու ուժը ունիմ,
դրսւտրելու աստար զայն մինչ այդ
կրկնուած ձեւերէն տարբեր ձեւով մը»:
«Փրոֆեսէօր Թարանչ»-ի մէջ ան թա-
ղութիւնը ունեցաւ անկարկ մը նեակ ի-
րականութեան, թէ եւ այդ անկարկը տե-
ղի ունեցած էր երազի մէջ: Այսպէս, ան
կ'որոշէ վերագոռնալ երազներու աշ-
խարհը՝ Թեմաներով իրարու շատ նմա-
նող երկու Թատերախաղներով: «Ինչ-
պէս որ էինք» (Comme nous avons été),
(հրատարակուած «Նալկի րրվի Ֆրան-
սէզ»-ի մէջ, 1953-ին) եւ «Վերագտնը-
ւածները» (Les Retrouvailles) անթուա-
կիր, բայց դրուած 1952-ին: Երկու Թա-
տերախաղներն ալ իբրեւ հերոս ունին
սոսնուութեան սեմին դանուող հասուն
մարդեր, որոնք կը ցուցաբերեն իրենց
մանկական վարժուցները: «Ինչպէս որ
էինք»-ին մէջ Ա. հերոսը սոսնուութե-
նէն անմիջապէս առաջ՝ թեթեւ քուն մը
կ'առնէ: Երկու կիներ, մայր մը եւ ժո-
թաբոյր մը, բեմ կու դան՝ պղտիկ տղայ
մը փնտրելու, հաւասարով, թէ տղեկը
սենեակին մէջ կը թափախի: Ա. -ը չի
ճանչնար դաննք, բայց զործողութեան
զարգացումին հետ ինք կը վերածուի
կիներուն կողմէ փնտրուող տղեկին:
«Վերագտնուածները» Թատերախաղին
մէջ, էտկար, որ Մանփրէյէի մէջ օրէ-
նարդութիւն կ'ուսանէր, կը պատրաստ-
ւէր Պելլեիքայի սահմանին վրայ գտնուող
իր հօրնական տունը երթալ, երբ կը
հանդիպի երկու կիներու, մէկը պատաւ,
միւսը՝ երիտասարդ տղեկ: Էտկար կը
համոզուի մտայ պատահին տունը, նշան-
ւելով երիտասարդուհիին հետ: Ան կը
լքէ իբ նոր նշանածը, որ կը ժեռնի շո-
ղեկառքի արկտնով: Վերջապէս տուն
վերադառնալէ հետք, կ'իմանայ, որ իր
նախկին նշանածը եւս դուրս գարձած է շո-
ղեկառքի արկածի մը: Մասիբ կը ստիպէ
իրեն դառնալ քնալըջիկ մը եւ դուրս կ'ը-
նէ դինք բեմէն:
Հուլերանական անկարկութիւններով
երազային յստակ խաղեր են ասոնք. ո-

րոնք, երկուքն ալ, յարձակումներ են մօր պատկերին գէտ, որ կը ջանայ զսակին արդիւնը ուրիշ կնով մը հետ բաց յարարեութիւն ունենալ: Ազամով ամբողջովին մերժած է «Ինչպէս որ էինք» թատերախաղը. «ատկա կ'իմանանք անկէ՛», որ հեղինակը դուրս ձգած էր զայն թատերական գործերու իր հաւաքածոյէն (թէն 1937ին արածեց անոր անգլերէն հրատարակութիւնը):

«Վերագտնումները», որ յաջորդական տեսարաններու փոփոխութեամբ եւ երկու գոյգ մայր-նշանածներու տիպարներուն վերահրկնութեամբ՝ չափազանցօրէն շփոթեցուցիչ թեքերով մը կը գծէ հրազներու մթնոլորտը, հրատարակուած է Ազամովի թատերական երկերու հաւաքածոյին մէջ: Բայց իր նախարանին կը յայտարարէ, թէ «Վերագտնումները» շատ կարեւորութիւն մերկայացուցած է ինծի համար, որովհետեւ, գայնաւարտելու, վերընթեռնելու եւ քննութեան ենթարկելու ետք, հասկցայ, թէ

ժամանակը եկած է վերջապէս մը գնալու կիսա-երազիմ եւ հին ընտանիքի մը բայտումը օգտագործելու ձգտումին: Կամ, անյի ընդհանրական «ձեռք» կը խորհիմ, որ շնորհիւ «Վերագտնումներ»-ը եւ յաճախի ենթարկեցի այն բարբ, որոնք գրելը ինծի համար կարեւոր յարձանել է ետք, հիմա խոչընդոտ դարձած են գրելու իմ «ճշմարտ»:

Ուրիշ խօսքով, Ազամով հասած էր հոն, ուր ինքզինք կարող կը դարձրէր թատերախաղ մը, որ պիտի ըլլար արտայայտութիւնը մարդկային կացութեան հանդէպ ունեցած իր տեսակէտներուն: Գրուելիք այս թատերախաղը կրնար չըլլալ նաեւ Ազամովի օտարական մաքին ու ոգիին սոսկական բրտումը, այլ անոր մէջ միտմանակ կրնային գոյութիւն ունենալ արտաքին աշխարհէն առարկայականօրէն դիտուած տիպարներ, որոնք լիովին տէրը պիտի մնային իրենց իրաւունքներուն եւ գործունէութեան: Այս թատերախաղը ըլլալու կոչուած էր «Փիկն Փանկ»-ը, մէկը անհեթեթի թատրոնին գլուխ-գործոցներէն:

(Շար. 2 եւ վերջը յաջորդով)

Մ. Է.



Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

Հանրամասնաչ Մեծագրութեան Ռուսերէն Հրատարակութիւնը

«Բազին» ամսագրի էջերում արդէն արդիւն է կղէ խօսելու խորհրդահայ գիտնական Ասատուր Մնացականեանի «Աղանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը» վերնագրով բովանդակւոյց եւ ծանրակշիռ մենագրութեան մասին, որը լոյս տեսաւ 1966 թուի ամբար Երեւանում: «Բազին»-ում տպուած «Հայոց Արեւելից կողմանք» ուսումնասիրութեան մէջ թէեւ արծարծուած էին այլեւայլ հարցեր, նոյն նիւթն ու իրականութիւնը բացայայտելու նպատակով, փաստօրէն հիմնական գրգռիչ ազդակը Մնացականեանի յիշու աշխատութիւնն էր հանդիսանում:

Ճամանակին Մնացականեանի աշխատութիւնը արժանացաւ ընդունելութեան խորհրդահայ մտաւորականութեան կողմից եւ մամուլում առատօրէն դետեղուեցին ձեռնհաս հեղինակներին ամբողջապէս գրախօսականներ: Եստեմբի կողմից ցանկութիւն յայտնուեց, որպէսզի գիրքը վերահրատարակուի աւելի ճոխացած ու քարտէշներով եւ թարգմանուի նաեւ ռուսերէն ու օտար լեզուներով: Եւ ահա այդ ցանկութիւնը մասամբ իրականացաւ՝ Մասենագրանի գիտական խորհրդի որոշմամբ եւ Գիտութիւնների ակադեմիայի Հրատարակչութեան կողմից գիրքը լոյս ընծայուեց առւերէն:

Այս յօդուածը, թէեւ տրուած է զբոսաբանականի մեղով, բայց էութեան «Բազին» ամսագրում երկու տարի առաջ երեւացած ուսումնասիրութեան լրա-

ցումն է, նրա պայմանական չարուսկութիւնը: Նախ Մնացականեանի մեծագրութիւնը իր ընդհանուր արժէքով ու նշանակութեամբ այնքան վեր է կանգնած, որ դուրս է մտած ընթացիկ օրեւէ գրախօսականի հատողութեան շրջապէս: Ամէն դէպքում խօսք կարող է լինել միայն գիրքը լայն հասարակութեանը ներկայացնելու, նրա բովանդակութիւնը աւելի մեծ թուով մարդկանց ծանօթացնելու, այլ ոչ թէ ինչ-որ վերլուծութիւններ ու դիտողութիւններ տնելու մասին: Բացի այդ, մենագրութեան բուն բովանդակութեան վերաբերեալ արդէն իսկ բաւական տեղեկութիւններ են տրուել «Բազին»-ում երկու տարի առաջ տպուած յիշու ուսումնասիրութեան մէջ, այնպէս որ, վերստին հարցի այդ կողմին անդրադառնալը հազիւ թէ կարեւորութիւն ներկայացնի:

Այժմ խօսքը վերաբերում է Մնացականեանի՝ Ճամանակին ողջունուած ու հանրաճանաչ դարձած մենագրութեան սուսերէն Հրատարակչութեանը, ինչպէս եւ ազուանադիտութեան ու Հայագիտութեան որդակի ընտանաւում անցած երեք տարում կատարուած աշխատանքներին: Ռուսերէն Հրատարակչութիւնը Հայերէնից մի գիր աւելի մեծագիր է, տպագրանակը՝ 2500, Ըստ նախնական ծանուցումների, գիրքն աւելի շուտ դիտի տպուէր, բայց ուշացաւ եւ Հրատարակ Հանուեց միայն 1969 թուին: Այդ ուշացման անուղղակի բարեբն այն եղաւ, որ Հեղինակը հարաւորութիւն ու-

նեցաւ նսնիսկ տպագրութեան պահին իր յաւելումները մտցնել եւ աւելի նոր գիրքերից տեսնել քննարկուող խնդրի միճակը:

Ռուսերէն հրատարակութիւնը թէեւ իր ամբողջութեամբ հիմնուած է հայերէն բնագրի վրայ, ըստ էութեան ինքնուրոյն ուսումնասիրութիւն է: Նախ՝ հեղինակը գեղշու է երկու յաւելումներ («Ուտիք եւ ստիններ», «Հայաստանի հիւսիս-արեւելեան գաւառների յիշատակումը Սարաբունի մօտ») ու նրանց մէջ արտայայտած մտքերը ըստ անհրաժեշտութեան բաշխել բուն շարադրանքի մէջ: Ինչպէս ե կատարել է կատուցուածքային ներքին փոփոխութիւններ, առանց դիպչելու բնդհանուր շէնքի ճարտարապետութեանը: Երկրորդ՝ Մնացականեանը հաշտի է առել իր կողմից քննարկուող Նիթի վերաբերեալ 1966 թուից յետոյ աեղի ունեցած հրատարակչային արտայայտութիւնները, հարկ եղած դէպքում արել համապատասխան յիշատակումներ եւսլին: Եւ առհասարակ նկատելի է, որ հեղինակը տող առ տող գրեւորի միշտ աշքի տղնէ է ունեցել, թէ երբ եւ ո՛ւմ համար է շարադրում իր գիրքը կամ առաջ քաշում իր դրոյթները: Տուեալ դէպքում նրա խօսքը ուղղուած է առաւելապէս օտար գիտական հասարակայնութեանը:

Մնացականեանի մենագրութիւնը Աղւանքի կամ նոյնիսկ միայն Հայ Աղուանքի ամբողջական պատմութիւն չէ, այլ բացառապէս Հայ Աղուանքում բազմաթիւ դարերի բնթացքում մշակուած ու որոշ մասով մեղ հասած զգրական յուշարձաններէ» բացայայտում, ամփոփում, դասակարգում եւ բնութագրում, որոնց շնորհիւ ինքնարեքարք բացւում են պատմութեան հորիզոնները եւ աւելի տեսանելի դարձնում առհասարակ պատմական իրադարձութիւնները, հայութեան կեանքի այլեւայլ դրսեւորումները: Հեղինակը գիտակցում է այդ պարագան ու իր կողմից գրում հետեւեալը:

«Հայոց Արեւելից կողմանքի ու ա-

ռաւել եւս բուն Ալլրանիա-Աղուանքի ամբողջական պատմութեան շարադրումը հեղինակի առաջադրանքների մէջ չի մտել: Հենց դրանով է բացատրուած այն իրողութիւնը, որ գրքում չի տրուած հարցի ուսումնասիրման պատմութիւնը եւ տուեալ Նիթի վերաբերեալ լոյս տեսած գրականութեան տեսութիւնը: Սակայն մենք անհրաժեշտ ենք համարում նշել, որ աղուանագիտութեան զծով եղած դրականութեան մէջ առանձնապէս նշանակալից են խորհրդային ակադեմոր արեւելագէտներ Ս. Տ. Երեմեանի եւ Կ. Վ. Տրեւերի հետազոտութիւնները»:

Երբ 1966 թուին Երեւանում լոյս էր տեսնում Մնացականեանի հայերէն մենագրութիւնը, այն ժամանակ առհասարակ ամայութիւն էր տիրում աւանդական Հայաստանի հիւսիս - արեւելեան երկրամասերի վաւերական պատմութեան ուսումնասիրման տպագրելու: Ուստի այդ գիրքը, առանց չափազանցութեան, մի տեսակ ստացահատի դեր կատարեց եւ ճեղքեց լուրթեան օտոյցը: Անցեր է աւելի քան երեք տարի եւ այսօր միանգամայն այլ իրականութեան առջեւ ենք գտնուում: Ճիշդ է, այսօր էլ բուն աղուանագիտութիւնը եւ յատկապէս Հայ Աղուանքի պատմութեան ուսումնասիրութիւնը տակաւին իրենց պատշաճ բարձրութեան վրայ չեն գրտնրում, բայց եւ այնպէս այդ ուղղութեամբ որոշ դրական աշխատանքներ կատարուել են ու այդ առպարէզում որոշակի արթնացում արդէն դրացւում է: Թէեւ յիշեալ կարգի Նիթերի շուրջ հրատարակուած հետազոտական յօդուածները առայժմ մասնադիտական գրադարան չեն կապում, այնուամենայնիւ, ապրիլայ դրագրանի հիմքը արդէն գրուած է, գործի կորիւր երեւում է եւ ծրարձակումների հեւրով շնչում:

Դատելով խորհրդահայ գիտական մամուլի մէջ Երեւացած մի շարք յայտարարութիւններից, այժմ աղուանագիտական կամ հայ-աղուանագիտական սորոշակի անձնակապմ է պատրաստում: Կարելի է յուսալ, որ առաւել կամ պա-

կան մտաւայուցում շօշափելի կը դառնայ այդ նախաձեռնութեան արդիւնքը, կ'երեսան աշխատանքի բերքն ու պտուղները: Բայց չառանց այդ օրուան պատելու էլ՝ այժմ իսկ կարելի է մատնանշել դիտարկան աշխուժացման մի շարք գրեթէ անհնար, որոնք իրենց հերթին անհրաժեշտ նախապայման են հանդիսանում հետագայ աւելի ծաւալուն աշխատանքներէ համար:

Նախ՝ Առատուր Մնացականեանի 66 թուին տպուած մենագրութեան առթիւ խորհրդահայ մամուլում գետեղուած գլխախօսական յօդուածները ինքնին արդէն ուշագրաւ արժէք են ներկայացընում՝ հարցադրումները ցայտուն դարձրելու, փաստարկումները խորացնելու եւ ճիշդագործելու, նիւթի շուրջ հրապարակային խօսակցութիւն բացելու միջնորդութեամբ ստեղծելու առումով: Ուստի պատահական չէ, որ այնուհետեւ զետրով աւելի շատացան Հայաստանի հիւսիսարեւելեան երկրամասերի պատմութեանը միջուկային հետազոտական կամ միջնորդական ուսումնասիրութիւնները:

Գիտական մամուլում երեսային մի շարք մասնագիտական հետազոտութիւններ: Ճիշդ է, նրանց մէջ արտայայտուած սրույ տեսակէտներ նոյնիսկ խիստ քննադատութեան ենթարկուեցին ուրիշների կողմից: Բայց դա բնական եւ ինքնին հասկանալի երեւոյթ է ու այդպէս էլ պէտք է լինի: Եթէ մաքուր թղթի վրայ տպագիր տառերով գրուած ամէն մի նախադասութիւն, իր վրիպակներով հանդերձ, անմիտեղի մշտնապետութիւն համարուի եւ ընթերցողներին սոսկ երկիւղածութիւն ներշնչի, այն ժամանակ գիտութիւնը ո՛ր միայն տեղից մի քայլ առաջ չի շարժուի, այլեւ առհասարակ գոյութիւն չի ունենայ: Մանաւանդ պատմական խրթին առեղծուածների վերծնծման ասպարէզում, Ուրեմն, Հայաստանում հայ-ազղուանագիտութեան գծով հրապարակուող նոյնիսկ թերի եւ վիճելի հետազոտութիւնները որոշակի խթան են ծառայում գիտական յարաբերութեան համար:

Բուն հետազոտական դրակնութեան ստեղծմանը զուգընթաց, որոշակի իրողութիւն է եւ գիտափնտարական, ընդդիմախօսական դրակնութեան զարթոթիւնը, ժանաւանդ հայերէն շիժացող ընթերցողներին ու դիտակոմներին ժառելի աուսերէն լեզուով: Արդէն յայտնի է Ա. Մնացականեանի եւ Պարոյ Սեւակի համապատասխան յղումը արքեպիսկոպոստի վախճանական Բունդիթոյի դրքերից մէկի մերթադրելով: Գրեթէ նոյն ժամանակ եւ նոյն առիթով հրապարակուեց հանդուցեալ ուղղակիփոս Կարապետ Մելիք - Սաննիանեանի հանգամանալից յօդուածը՝ պատշաճ գիտքերից եւ պատշաճ սրութեամբ: Այդ կարգի հրապարակումներն, ի հարկէ, բուն հայ-ազղուանագիտութեան հիմք չեն հանդիսանում, բայց մտակարանը նպատակ են աշխուժի հիմք ստեղծելուն եւ մանաւանդ ամրացնելուն, արթուն պահակի դեր կատարելով:

Պատմական Հայաստանի հիսիսարեւելեան երկրամասերի պատմութեան ուսումնասիրման ուղղութեամբ անցած երեք տարիներէ ընթացքում կատարուած աշխատանքների շարքում յատուկ տեղ են բռնում Բագրատ Ռուբերանի մասնագիտական ուսումնասիրութիւնները: Խորհրդահայ գիտական ու ընթացիկ մամուլի էջերում նրա ստորագրութեամբ հրապարակուած նիւթերը վկայում են, որ դրժ ունենք լուրջ եւ նրբերուած հետազոտող հետ: 1969 թուի Մայիսին Երեւանի համալսարանում Ռուբերանը հրապարակուեց պաշտպանեց իր գիտերացիան՝ պատմական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար, ներկայացընելով «Արցախի պատմութիւնը» հետգոյն ժամանակներից մինչեւ 10-րդ դարը ուսումնասիրութիւնը: Պէտք է յուսալ, որ այդ ուսումնասիրութիւնը երբեք կը ապուի եւ հայ բողմահար բնթերցողներէ արամոգրութեան սակ կը դիտահետազոտական աշխատանքը կը գնահատուի պատշաճ կարգով:

Այս ընդհանուր յիշատակումներից զժուար չէ պատկերացում կազմել, որ Ասատուր Մնացականեանի մենագրութիւնը 1936 թուին լոյս տեսնելուց յետոյ՝ նոր իրադրութիւն է ստեղծուել հայ-ազունահայրութեան ասպարէզում: Գրուել են նոր յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, ճշգրտել են բազմաթիւ մուտք կէտեր ու թիւրիմացութիւններ, ստեղծուել է նպատակայարժար մթնոլորտ եւ մշակուել է որոշակի ու վաւերական ուղեգիծ: Կարճ ասած՝ հայ իրականութեան մէջ արգէն դոյութիւն ունի պատմապիտական մի շարք տեսակէտներ ընդհանուր ներդաշնակութիւն եւ կարելի է ակնկալել համակարգուած դիտական աշխատանքների հետագայ զարգացում: Այսպիսով, չորս տարի առաջ սկսուած փուլը մօտենում է զարձակ Մնացականեանի մենագրութեան շրտորհու, այս անգամ նրա ուսերէն հրատարակութեամբ:

Մնացականեանի մենագրութիւնը իր դերը լիութի կատարեց հայ իրականութեան մէջ: Այժմ նա ուղղուած է օտար ընթերցողներին, օտար դիտական հասարակայնութեանը, առնուազն Խորհրդային Միութեան շրջանակում, թէեւ բացառուած չէ, որ արասասանմանեան՝ ուսերէն իմացող որոշ թուով մասնագէտ դիտականներ եւս հաղորդակից լինեն նրա բովանդակութեանը ու նոյնիսկ վաղ թէ ուշ, հրապարակօրէն կամ կամ լռելեայն արձագանգեն նրան: Այս բոլոր՝ օտար դիտական ընթերցողների արձագանգները, տակաւին հաւանականութիւնների ոլորտում են ստույգ: Իրականութիւնն այն է, որ ուսերէն մենագրութիւնը հրապարակի վրայ է եւ մատչելի օտարալեզու ընթերցողներին ու մասնաւոր դիտականներին: Համբ պատի մէջ բացուել է մի լայն պատուհան, իսկ նրա դիմաց՝ կառուցուել նաեւ դէպի հեռուներ տանող ճանապարհ:

Աւելորդ է ընդգծել, որ այսպիսի դէպքերում բոլորովին տարբեր նշանակութիւն ունեն ներազդային հրատարակութիւնները եւ արտաքին աշխարհի հետ

բեղմնաւոր կապ ստեղծող հրատարակութիւնները: Հիմնականը ի հարկէ, պարզային հետազոտական նիւթի, հետազոտող անձնակազմի եւ հրատարակչական կուտակումների՝ անբմբռնելի է եւ օտարներին որեւէ բան ներկայացնելն ու նրանցից ակնկալութիւններ ունենալը: Բայց երբ կայ ազգայինը, ինքնարեւարար ու անհրաժեշտաբար օրակարգի վրայ է դրուած նաեւ արտահայկական շրջանների հետ շփուելու եւ հաղորդակցուելու խնդիրը, լայն խօսակցութիւններ յարուցելու պահանջը:

Կեանքի իրականութիւնը այս տեսակիւնից դիտելու հետեւանք պէտք է համարել եւ այն եզրակացութիւնը, որ Ասատուր Մնացականեանի ընդհանուր աշխարհի գրականութեան հարցերի լուրջը մենագրութեան ուսերէն հրատարակութիւնը նոր ու րնգարձակ դաշտ է բացում պատմական Հայաստանի հիւսիսարեւելեան երկրամասերի վաւերական պատմութեան ուսումնասիրութեան համար: Թող պատմական իրականութեանը տեղեակ լինեն նաեւ այլապիկ մտաւորականներն ու ընթերցողները, — բարեացակամ թէ անբարեացակամ՝ միեւնոյն է, — թող նրա՛նք էլ, եթէ տակիք ունեն, մասնակցեն վեճերին ու գիրքեր ճշգրեն: Հայութիւնն ու հայադիտութիւնը այդ ասպարէզում կորցնելիք չունեն, եթէ նոյնիսկ միանգամից գործնականօրէն չհանդիպեն: Եւ միայն դէպք, ճամբրիտ դիտական խօսքի շնորհիւ, ասակաւին անիրազեկ մարդիկ կը լուսաւորեն, հայութեան բարեկամները կ'աշխուստանան, իսկ յարակամները մեղաւորի կը լինեն: Միայն ա՛յս մեւով կարելի է հայութեան ձայնը անտիճոնաբար հասցնել արտաքին աշխարհին եւ ստուպել այդ աշխարհում ապրողների սպիւնն ու կեղծը: Այստեղ ընդհանուր ասումս ներկայացուած ուսերէն հրատարակութիւնը այդպիսի ձայններից մէկն է:

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

ԼՂՎԱՐՆԵՐ

ԼՈՅՍ ԵՒ ՍՏՈՒԵՐ...

Հայ հասարակութեան ծանօթ է, որ մեծանուն բարերար եւ Հ. Բ. Ը. Միութեան նախագահ Ալեք Մանուկեան, երկու տարի առաջ, մէկ միլիոն ոտալար յատկացնելով իր անունով հիմնեց Մշակութային Հիմնադրամ մը, անոր եկամուտով քաղաքներու համար հայ գրականութիւնը եւ արուեստները:

Այս տարի, այդ հաստատութեան Գործադիր Մարմինը կազմակերպեց գրական մրցանք մը Մերձաւոր Արեւելքի հայ երկրորդական վարժարաններուն միջեւ, նպատակ ունենալով քաղաքի շարագրութեան, պատմութեան եւ բանաստեղծութեան մարզին մէջ խմոր ունեցող աշակերտները:

Մրցանքները ունէին երկու հանգրուան, առաջինը ներքին էր, երկրորդը՝ միջ-վարժարանային:

Առաջինը, որ բաց էր մասնակից իւրաքանչիւր դպրոցի աշակերտներուն առջեւ եւ նպատակ ունէր ճշդիւ յիշեալ երեք սեռերուն մէջ առաջին հանգրագողները, տեղի ունեցաւ անջատարար, մասնակից վարժարաններուն մէջ, վարժարանին կողմէ նշանակուած հակիչներով ու դատական կազմով, իսկ առաջիններուն առաջինները ջոկելու սահմանուած միջ-վարժարանային մրցանքները, որոնց կը մասնակցէին 15 երկրորդական վարժարաններէ եկած աշակերտներ, տեղի ունեցաւ 31 Մայիսին, Երուանդ Տէմիրճեան վարժարանի սրահին մէջ, Գործադիր Մարմնի կողմէ նշանակուած երեք ուսուցիչներու հսկողութեամբ եւ վերահսկողութեամբ Պր. Յ. Թորոսեանի:

Առ այդ, Յուլիսի առաջին շաբթուն, Գրական Յանձնախումբի ատենապետ Տոքթ. Տ. վարժապետեանի եւ ատենադպիր վահէ-վահեանի ստորագրութեամբ մամուլին մէջ լոյս տեսաւ հաղորդագրութիւն մը, որմէ կ'արտադրենք մրցումներուն արդիւնքները ծանուցանող հետեւեալ հաստատմբը.

«Երեք սեռերու մէջ առաւելագոյն նիշ ստացողները կամ առաջին համ-դիսացողները հետեւեալներն են.—

- 1.— ԵԱՐԱԿՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ.— Ճիմպաշեան Գնար, Սոփիա Յակոբեանէն:
- 2.— ՊԱՏՄՈՒԱԿՐԻ ՄԷՋ.— Ալուանեան Կարապետ, Մելիքեան Կրթական Հաստատութեան:
- 3.— ԲԱՆԱՍՏԵՎԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ.— Հաւասար արդիւնքով՝ Էսկիւ-եան Միքայիլ, Մելիքեանէն, Պերպերեան Յարութիւն, Սոփիա Յակոբեանէն:

ձինպաշխան Գևորգ Եւ Արսլանեան Կարապետ կը շահին 200ական տո-
լար, իսկ Լսեկիւկեան Միհրան Եւ Պէրպէրեան Յարութիւնը 150-
ական տոլար :

Հետագայ էջերուն կու տանք առաջին հանդիսացող դրութիւնները՝ հա-
ղորդագրութեան մէջ յիշատակուած կարգով, առանց լեղումական, ոճական,
ուղղագրական կամ կէտաղբական հարմարում, պահելով մեզի տրամադրու-
ած լուսանկարչական պատկէներուն ամբողջական հարազատութիւնը :

Եթէ հաշուի շտապէն առաջնութիւն չաճած «պատմուածքին» պարտ-
գան, կրնանք անմիջապէս համոզուիլ, որ դատական կարգի անդամները կր-
ցած են անաշատ ըլլալ: «Տիր» և «արք» շարագրութեան մատնած շնորհներ,
նիւթին յանդիմութիւնը, արագութիւնը, ընդհանուր կենդանութիւնը, լեղ-
ուին մաքրութիւնն ու ոճը ուժգնութեամբ օժտելու ճիշդ առաջնութիւն մը
կ'ենթադրեն, առաջնութիւն չաճած ոտանաւորներն ալ համոզելի կը թուին,
թէ և յիշատակուած երկրորդը իր խոսովքով ու թափով աւելի ուշադրաւ է,
քան ծանօթ նիւթի մը վրայ կառուցուած միւսին շատ ծանօթ քնարականու-
թիւնը: Բայց պատմուածքը ասոնց պէս չէ ու բոլորովին հետաւ է ընթեր-
ցողին մէջ նպատաւոր տրամադրութիւն մը ստեղծելու ուժէն: Մտքը եր-
բեք չ'ուզեր հաւատալ, որ մեր 15 երկրորդական վարժարաններէն կ'իմ 15
ուսանողներուն մէջ չկային ասիկէ աւելի խորունկ նիւթ, պատմելու աւելի
շնորհ, լեզուական աւելի սուր բնազդ մատնող տղաք: Անպայման խախուտ
մեր կասկածը: «Բազմ» գրական հանդէս է ու իբրև գրական հանդէս խթ-
րագրութիւն՝ մենք մօտէն կը հետեւինք մեր երկրորդական վարժարաններուն
մէջ աւանդուած գրական առարկաներով, գրական հակում ունեցող տղոց-
մով, փոխադարձաբար իրենք կը հետեւին «Բազմ»-ի, յաճախ իրարու հետ
ենք ու լաւ դիտենք, թէ գրական իրենց հասկացողութեամբ, ճշտակով,
լիզուով ու ոճով քանի մը աստիճան վեր կը մտնէ առաջնութիւն չաճած այս
պատմուածքին մակարդակէն: Ո՛չ, համոզիչ չէ այս ընտրութիւնը: Այլու-
պէս, այսինքն՝ այսքան տկար ըլլալու պարագային, վարժարաններէն շատե-
րը պիտի շուղէին տուեալ նիւթին համար յանձնարարել իրենց աշակերտնե-
րը: Նարնիթաց կայ: Յովակիմեան-Մանուկեանը, Նշան Փալանճեան ձեռնա-
բանը, Հոփսիմեանց Եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանները բնաս-
տեղծութեան սեպին մէջ բախտ փորձելու համար յանձնարարելի աշակերտ
չունէին ու չմտնակցեցան բանաստեղծական մրցանքին: Այդպէս է: Աճէն
հաստատութիւն իր արժանապատուութիւնը ունի:

Պահ մը ենթադրենք, որ ներկայացուած պատմուածքներուն լուսադո-
ւր այդ էր, անհաւատալիօրէն առաջնութեամբ պատկուած կտորը: Բայց այդ
պարագային անհրաժեշտ էր արդեօք նկատի առնել դայն. դատական կար-
գի անդամները՝ Տոբթ. Տ. Վարժապետեան, Սարգիս Վահագնը, Արա Աբ-
ծրունին աւելի լաւ չէին ըներ արդեօք, եթէ աւելի դժուարահաճութիւն
ցուցաբերէին եւ մերժէին իրենց հաւանութեամբ առաջնութեան պատկ տալ
սեւէ՛ տնձի ու վարժարանի պատիւ չբերող երկու էջնող գրական այդ աղ-
քատութեան:

Այս պատկերին զիմաց ստիպուած ենք ընդունիլ ու ապրիլ երկու դաս-
նութիւններէն մէկը, ըսել կ'ուզենք՝ կա՛մ դատական կարգը հարկ եղած բո-
ժանդրութեամբ ու անաշատութեամբ չէ կատարած իր գործը Եւ կամ հա-
յոց լեզուի ու գրականութեան մեր ուսուցիչները չեն կրցած գրական հա-

կացողութիւն, ճաշակ մշակել տղոց մէջ, լին կրցած լեզուի ու ոճի բարե-
ձանութիւններով օժտուած երկու էջ բան զբէլ սորվեցնել անոնց :

Պարզունակ գրութեան մը եւ այլեւս պարզ դարձած մեր խոցելի բար-
բերուն օտիժով բոտած այս խօսքերը թերեւս քիչ մը ծանր թուին ոմանց :
Ոչի՛նչ : Ալիք Մանուկեան Մշակութային Հիմնադրամը գլխարկ հանել տուող
երեսոյթ է Սփիւտքի մեր իրականութեան մէջ եւ Գործադիր Մարմնի այս նա-
խնշանութիւնը՝ արժանի ամէ՛ն զօլետոյ : Ու ճիշդ ասո՛ր է համար ծանրա-
ցան այս գլխադրութիւնները : Մեր խախտած արժեչափերը եւ խախուտ մեկ-
նակէաներով ծաւալած դիւրահաճութիւնները պէտք չէ հող դտնեն հոս : Ան-
խոհմ որեւէ ընթացք, որեւէ ծուռ վերաբերում կամ արամարանութեան
չդիմացող որեւէ՛ հեռուգրութիւն կրնան ճիշդ հակառակ արդիւնքին յանդիլ
ու վնասել ուսանողութեան մէջ գրականութեան ուժը արժարժելու սահ-
մանուած այս իրապէ՛ս գեղեցիկ ձեռնարկին :

Նման պարտպաններու՝ անաշատութիւնը ծօտեցումի լաւագոյն միջոցն է,
պայապէս պէտք է ապաւինել բացարձակ խստութեան : Այսինքն՝ ունենալ
կա՛մ լաւին լաւ բոելու արժանիք մը եւ կամ տկարին գին շտալու քաջու-
թիւն մը : Միայն այս զնով է, որ կրնայ սոյն ձեռնարկը արդիւնաւորուել,
ծառայել Գործադիր Մարմնի առաջադրած նպատակին, մայելել ամէնուն
համարումը եւ հրճուանք պատճառել Մշակութային ձեռնարկներու համար
մէկ միջին առլոր յատկացուցած Ալիք Մանուկեան մեծատունին :



ԱՌԱՋԻՆ ԵԱՐՔ. ձախէն ար՝ չորրորդը՝ Գրական Յանճեսխումբի ա-
ռնճապիտ Տոբք. Տիգրան Վարճապետեան ,Եիկցերորդը՝ մրցումներու վե-
րաճննիչ՝ Պր. Յակոբ Թորոսեան, վերը՝ շրջանակի մէջ՝ առաջին հանգիսա-
ցած ուսանողներէն երկուէր՝ Թնար Հինպաշեան եւ Յարութիւն Քերպէրեան :
Միջանճանէն ժառնակցողները կը բացակային խմբանկարէն :

Ո Ր Ո՞Ւ Է Հ Ա Ր Ս Ը



Մեր հարսանեկան նախօրեակի խննդքը տարժուած է. հարսանիքս նախօրեակ տղերգութիւնը կ'ապուիմ եւ միմակ. ծափիմ, ծիծաղիմ, պարիմ եւ ազմուկիմ մէջ կը դազամ առանձնութենէս. ան չկայ, չի կրնար հաս ըլլալ. միւսը, որ վաղը ամուսինս պիտի ըլլայ իմս է. կը շոյէ զիս, ամէնուն դիմաց կը համբարէ. կը զգուէ: Խնդրանքիս վրայ սա բարի տղան անոր թոյրով օծուած է այսօր. գոնէ տառապանքիս մէջ խաբկանքը ունիմ գայն շրմշած ըլլալու. աչիերս գոց՝ գայն մօտս ունենալ կը կարծեմ եւ միայն այդքան...

Ուրախ եմ ամէնքը. եարսն ու հարսանիքը ուրախութիւն կը բերեն ամէնէն տխուրին անգամ. խինգ ու զուարթութիւն կը սփռեն. շուրջը կը պարեն կիրքով, նազանքով, կոտորուքով, հպանցիկ արագութեամբ, գիրկընդխառն. եւ ալ կը պարեն, կը պարեն տառապանքով, արցունքով, կարօտով եւ դողով:

Անոնք կ'երգեն ապրումով, թռիչքով, գազտագոզի անհարկներով եւ ժպիտով. կ'ունկնդրեն լուս, բացակայ ներկայութեամբ, ապսպրուած խանդավառութիւն շոյելիու պարտաւորութեան տակ ընկնուած:

Բուլբու կը խմենք, կը գինովանմ, եւ բոլորէն առաջ, բոլորին իմ բայց բոլորէն հետու...

Հիմա ամէնէն աւելի պահանջ կը զգամ իր հետ ըլլալու. լալ կ'ուզեմ, լալ. ապա կոտորել. փշրել բան մը, փշրել ամէն բան, ամէն պատենչ եւ փախչիլ. փոխարէնը՝ կոտորուած հարսանեկան դեր կը խաղամ:

— Գիշեր բարի հոգիս, գիշեր բարի ազուտը հարսս...

— Գիշեր բարի, հոգի:

Կը մեկնի խաբուած տղան. կ'արգահատիմ իրեն. կ'ընդզգիմ իր գէմինչու. չի բափանցեր ան գազանքիս. ինչու չի կրնար գուշակել որ մէջս կը կրեմ էակ մը, որուն հայրը չէ իմք, բայց պիտի կարծէ ըլլալ գայն ծնողը:

Միմակ եմ սենեակիս մէջ. կը բանամ պտեարանը. հարսանեկան շքերջագոյնս. ան որոշեց ճեւը. ան, որուն համար չէ որ պիտի հագնիմ այս շքարշնեքը:

Կը հագնիմ օպիտակ գգեստը, հայելիին դէմ զմայանճով կը դիտեմ սիրոյ համար տառապած, ապրած, գգացած այդ էակը. վաղը գիտ այսպէս պիտի դիտէ. ի՞նչ պիտի գգայ. պիտի յագուի՞, տխրի՞, ընդզվի՞... Հագուտու արհունով կը ներկուի յանկարծ. կարմիր է ան, շատ կարմիր, վախնայու չափ կարմիր. կը օտարափիմ. կը խաբե՞մ, խաբուա՞ծ եմ. ես սիրեցի գայն. ան ուրիշինն էր արդէն. ես ուրիշինը պիտի ըլլամ վաղը, բայց մենք ունինք արդէն մեր գուաիւր. կ'ստեմ ուրիշը, ուրիշները. բայց կը սիրեմ ալ գանձեմ, կը սիրեմ աշխարհը, գուա՛կս. որ իմս է ու անորը...

Անդիմադրելիօրէն պահանջ կը զգամ երթալ արթնցնելու մայրս. տոյրերս, եղբայրս, գրացիները, հարսնետունները, աշխարհը, պոռալու համար բալտրին գիտ գինեւոյցնող, խենթեցնող, խենթութեան մղող գաղտնիք:

Կը յիշեմ նկարները. միշտ խմբային եղող այդ նկարները, որոնց մէջ մենք առիք գտած ենք ճովէ ճով ըլլալու:

Կը դիտեմ, կուշամ, կ'ապրիմ, չեմ կրնար բնանալ. վազն ալ պիտի չճնանամ արդէն, յաջորդ օրն ալ, յետոյ ալ:

Գարձեալ ազմուկ, երգ, ծիծաղ, արցունք, շուտով չորցող արցունքներ:

Հարս կը հագցնեն. գիտ կը հագցնեն:

Ձեմ լար բուրսը հարսելուն պէս. ընդհակառակն ուրախ եմ, չէ՞ որ էիք վերջ գայն պիտի տեսնեմ. ան պիտի սեղմէ ձեռքերս:

Շարական, խաչ, մտմ, բագմութիւն եւ ան...

Ենթադրութիւն, մագթանք, համբոյր:

Կիցն է յանկարծ, անոր կիցը, կը համբուրէ գիտ. չէ՞ որ անմե՞ղ, անուշիկ հարս մըն եմ:

Ան...

Գունատ բայց ամուր եւ հաստատ ան կը մտնեայ. կ'աննէ ձեռքերս ակներու մէջ. կը սեղմէ, կը սեղմէ ցուցնելու չափ. մեր ձեռքերը չեն դուրս. մեր շրթները անկարելի համբոյրի մը համար կը սարստան. յետոյ երկչուս կը նայլմ շուրջս. ան ալ կը նայի. ամէն մարդ տեսնով. իր գրազուսնի մէջ է. փեսան կը ձեռնուի ուրիշներու հետ. կը դիտենք գիրքս ակներս մը մրայն. կը շշեցայ մէկ բառ, որ իրն է ու իմս ամբողջ աշխարհի մէջ.

— Ի՛մ հարսս:

ՔՆԱՐ ՃԻՆՊԱՆՇԵԱՆ

**Ե Ր Բ Դ Ր Ա Մ Ը
Ա Ն Ո Յ Ե Հ Ն Չ Է
Գ Ե Ղ Ա Մ Է Ն**



Թաթիկա Հօրս ձևոցին՝ շարածիճի ոտովներով գրեթէ ամէն Կիրակի կ'երթայի Հօրաբոջոյ տունը: Փայտաշէն հիւրանոցն որ ծերուկի մը պէս կոթնած էր երկու աստամաստ սիւններու: Գեանայրիք չէր յղկուած եւ ամէն օր Հօրաբոջոյ ալիք քարերը ալիւնն ժամանակ չէր ունենար քիչ մը հանդիստ ընելու: Ընդ որտեղ որտեղ ասի ցատտանջ ճոճոցացող սանդուխներէն բոկոտն կը բարձրանայինք հիւրանոցը: Միամտորճը ակոսներուն մէջ սեղմած ու զուլա զուլա բարձրացող ծուխներու մէջէն Հօրաբոջոյ ամուսինը մեզ ներս կը հրաւիրէր թեթեւ դիտու շարժումով եւ ժպիտով մը: Ես համարձակ կը մտազնի քոյր եւ այսին պաշտի մը կու տայի: Մինչ հայրիկա եւ Հօրաբոջոյ ամուսինը կը խօսակցէին, ես սնահամբեր կը սպասէի Գեղամին:

Ճառացող դրան ձայնէն եւ վարի խառնակութիւնէն ու ազմուկէն կը հասկնայի թէ Գեղամ աղբարիկը եկած էր: Ան սանդուխները երկու երկու ցատկելով կը մտնար սնահակէն ներս հետք բերելով փողոցի ցուրտ օդը եւ բողբոջ: Մինչ Հօրաբոջոյ անոր ետեւէն կը ճշար:

— Անիծեալ տղայ քեզի քանի տնայամ պիտի ընծ որ այդ տղառու կօշիկներով մեր չէլլես. աման Աստուած իմ

ինչեր կը քաշեմ այս շանդակտի ձեռքէն:

Մինչ Հօրաբոջոյ վազը ինքզինը կը բոկոտէր, Գեղամ ճաղարիկը՝ զրպաններէն դուրս՝ սեղանի վրայ կը թափէր մետաղեայ դրամները շառաչիւնով մը եւ ծոցէն կը հանէր թուղթէ դրամները ու կը սկսէր զոռնոք զատարները: Ես շատ կ'սխտրճէի անոնցմով խաղալէն ու ամբիւ մէջ կը շրջաթայտէի մետաղեայ դրամները:

Գեղամ աղբարիկին հետ միասին վրայ-վրայի կը շարէինք: Եռյոթտեսակ դրամները: Մէկ ոսկինոցները տասական հատ զատ սիւնակներով կը շարէինք մէկ սնակին մը իսկ քսանըհինգ դրոշմոցներն ալ քսաստունական խոճքերով կը զնկէինք թուղթէ ծրարներու մէջ: Գեղամ աղբարիկը այնքան վարպետ էր այս գործին մէջ որ ատանց հաշուելու սիւնակներու բարձրութենէն զատելով զանոնք կը զիղէր ու սրղէսղի ապահով բոլոր թէ աւելի կամ պակաս բան մը չէ դրած բողբոջութեամբ կը բազդատէր նմոյ սիւնակը միւսներուն հետ: Այս զործողութիւնը ստիպան արգելք չէր հանդիտանար իր լեզուանի ու տրպատիստ ընութեան:

— Քերայր անդամ մը տեսնայիր սինեմաներուն տոջեւ խճուղուած բազմու-

թիւնը: Մարդիք շորս ժամ վերջ սկսե-
լիք Ֆիլիմին նոյնիակ տոմսակ չէին գտնար
անձրեւին տակ ժամերով կարգ սպասե-
լով որ տոմսակ դնեն: Այսօր շատ ազ-
ւար դործ դարցուցի: ամէն մէկ տոմ-
սակի համար կրկինը վճարելու համար
մարդիք ազանելով քովս կուզային: Բա-
րեքստարար այսօր քառասունակտն
տոմսակ դնած էի երեք սինեմաներէ ո-
րոնց Ֆիլիմբը շատ դեղեցիկ էին եւ այս-
պէսով գրամը ջուրի պէս զրոյաններս
հասցաւ:

Հայրիկս չէր տխրած եր անոր բրո-
նած այս ընթացքէն եւ զարտուդի մե-
ղցնեցով դրամ չահելէն: Սակայն իր
քրոջը սիրոյն այդ տունը ակամայ կ'աշ-
ցելէր: Չիս քանիցս յանդիմանած էր եւ
խրատած էր որ չմոտենամ Գեղամ ազ-
րարիկի գրամներուն ու անսնցմով չիտ-
ղամ: Սակայն ինծի համար շատ հաճելի
էին թէ դրամներու հետ խաղալը եւ թէ
ալ Գեղամ ազրարիկի խանդավառ բնա-
ւարութիւնը: Անոր դէմքէն ժպտը ան-
պակաս էր, սեւ եւ երկայն մազերու շու-
քէն տակ խոշոր՝ երկու ուշիմ աչքեր կը
փայլատակէին: Իր սուր ու արդեւք
չճանչող քիթը՝ կեանքի պայքարին մէջ
վիռ կարծեք թէ պիտի առաջնորդէր յա-
ջողութիւնէ-յաջողութիւն եւ յաղթանա-
կէ-յաղթանակ: Իր գեղանի գէմքով եւ
սակայն առնական կեցուածքով դադի
բալոր ազդիկներուն երազները խանդա-
բած էր: Երբ դիս գուրս պարտցնելու
տանէր շուրջերեքս կը խրնուէին փունջ-
փունջ աղբիկներ ու անոր բերնէն կախ-
ւած մտիկ կ'ընէին զմայլելով ձայնին
ու շարժումներուն:

Մի քանի տարիէն ան բացաւ փոքր
վաճառատուն մը: Այնքան շուտ գործերը
եւ ապստամբները շատցան որ ստիպ-
ւեցաւ նոր եւ մեծ խանութ մը վարձել:
Եւ երբեք կ'երթայի քովը ու կ'օգնէի
իրեն մի քանի յաճախորդով ալ եւ գրա-

դելով: Երկու տարի վերջ ան սկսաւ ապ-
րանքները ինք ներածել Եւրոպայէն:
Հակայ սնտուկներու մէջ կուզային հե-
ծիքներ, կարի մեքենաներ, ելեկարա-
կան դործիքներ ու իր նոր վարձած մեծ
շտեմարանին մէջ կը դրուէին որպէսզի
անկէ ալ ծախուին ուրիշ փոքր վաճառա-
կաններու: Գրասենեակը կը յաճախէին
Պորոյ անուանի վաճառականները ու
իրմէ կը սորվէին ամենանորը հնարք-
ները քիչ մաքս վճարելով ներածելու ար-
ւեստը: Սակայն Գեղամ տուած ամե-
նափոքր խորհուրդին դիմաց կը պահան-
ջէր վարձատրութիւն: Եւ նախակրթա-
բանս վերջացնելէն յետոյ Ս. Ղազար դա-
ցի մէջս վարդապետ ըլլալու կոչումը
դալով: Ամէն նամակի հետ կը ստանայի
Գեղամ Վեդարիկի նորանոր նուա-
ճումներու լուրերը եւ վերջուպէս մեծ
վաճառականի մը տղկան հետ ամուս-
նանայր:

Օր մը նորէն այսպէս խանդավառու-
թեամբ կը կարգայի նամակին մէջ իր
մասին եւ ահա ստրատիկի տող մը դիս
չանթահարեց «Գեղամ անունը Գէմալի
փոխեց որպէսզի դործերը աւելի դիւրին
գառնան եւ թուրքերը նախանձէ մղուած
իր գործին արգելք չըլլան...»: Ուրեմն
Գեղամ ազրարիկը նիւթին եւ զրամին
համար իր ազգը պիտի ուրանա՞ր: Ամէն
ըրած գործին նոյնիակ խարէութիւննե-
րուն սկսեցաւ աչք կը գոցէի սակայն ոչ
այս մէկուն: Ուրեմն օր մը եթէ հարկա-
ւոր ըլլայ ամբողջովին պիտի ուրանա՞յ
իր ազգը ու ինքնութիւնը:

Այդ օրունէ յետոյ ոչ իր նամակնե-
րուն պատասխանեցի եւ ոչ ալ իր մասին
տեղեկութիւն ուղղել տուանէն: Մնուցա
նանցին դիս համոզել թէ ըրածը պար-
զապէս ձեւակերպութիւն էր սակայն ին-
ծի համար Գեղամ ազրարիկը մեռած էր
ու ջնջուած արեւս առ յուշտ:

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՄԱՆԵԱՆ

ՀՆՈՒԱԻՈՐ ԻՂՁ

Որ մը, եթէ յանկարծ գտնեմ քեզ նորէն,
 Ու տնկարան. դողող քայլով մտադ գամ
 Ըմպելու սէր՝ հոգիիդ գով աղբիւրէն,
 Պիտի հծծե՛ս ծաղիկ խօսքեր անթառամ:

Երբ ա՛յ յագնած աշխարհն ամբողջ շրջելէ՝
 Զս՛ր փնտռելու վիշտս ցրուող սէր մը նոր,
 Զայնդ լսեմ ու քե՛զ կանչեմ խելայեզ,
 Պիտի ծպտի՛ս այեւի՛ն սէս, ամէն՝ օր:

Այս՛, գիտեմ, արժանի չեմ ես քեզի...
 Խօյ վարմունքս խոցեց սիրտդ կուսական:
 Բայց լա՛ւ նայէ. տե՛ս, փոխուած եմ ես այնքա՛ն.

Իզճկուս չի՞նք երկնքին մէջ կը լուծուի
 Քիչ-քիչ՝ ամպ մը չարութե՛նէս: Եւ եթէ
 Բոյրե՛զ գիտե՛մ՝ հպիմ՝ մտքիդ թաւիչէ,
 Պիտի յորդի՛ս երջանկութեամբ երբեմնի:

ՄԻՀՐԱՆ ԷՍԵԿԵՒԿԵԱՆ

ՎՆՎՆՐՆԱԳԻՐ

Ե՞րբ էր, որտե՞զ
 Իմ աչքերու գոյներն յորդող ափերու մէջ
 Մենութեանս սառնութեան մէջ
 Փաթարկեցան...

Ո՞ր էր, ինչպէ՞ս
 Շքութեանքս ըզճանք դարձած
 Ոչինչ գտան համբուրելու,
 Ու կիրքերու կրակն ամբողջ...
 Զիզերու մէջ
 Լուռ մոխրացաւ:

Քանդումներու, կառուցումի
 Մարաւ տղամ'
 Որ ես էի.
 Զգոհացող, միշտ երազող
 'Ժգոհ տղամ'
 Որ ես էի.
 Գոնէ դէմք մը
 Լուռ սիրելու կարօտ տղամ'.
 Որ ես էի...:

Գուցէ մնայ տղան գինով,
 Բաժակներու դառնութեան մէջ
 Զկարեմալ հաղորդուելու,
 Զկարեմալ սպասելու,
 Զկարեմալ հաւատալու
 Տառապանքով...:

Եւ այդ տղան
 Որ ես էի,
 Խենթ փայտուտ մը բլլայ համակ
 Իր արիւնէն,
 Իր միտերէն...:



Փողոցին մէջ,
 Սառն ցօղով մանիշակներ
 Զեռհերուն մէջ
 Աղջիկ մ'անցաւ:
 Կարօտի սուր
 ձիշեր' որպէս ժայթֆոյ կրթիւ
 Սուրբացին վեր:
 Գուցէ երազն իր երգերուն,
 Կամ վերագարձ ճիշի մը հին,
 Բայց ամենուն յորձանքին մէջ
 Յոյսի ճերմակ մուծ կարապներ թեւածեցին
 Ու աղօթք մը եղան կարծես:

Սպասում մը,
 Բերկրութիւն մը հաւատալու,
 Որ կը յորդէր, կը սիրուէր իրերուն մէջ...
 Իսկ աղջիկը
 Մեղմ կը ժպտէր...:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՆԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԹԻՒՐԻՄԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Աւրբ գրութիւնը ունի «Նիկոզոս Սաքափեպն եւ իր «Սասունցի Գաւիթ»-ը խորապէս
ևւ պոնուած է «Հայրենիք»-ի հոստմանային (Գարուն)։ Նմբարգրական նաթին կցուած է նաև
«Սասունցի Գաւիթ»-ի առաջին մասը։

«Հայրենիք»-ի խմբագրութիւնը յայտնապէս թիւրիմացութեան մէջ է, երբ տեսից
կս համարէ ու կը հռչակէ գործը։ Կը հասկցուի, որ «Հայրենիք»-ի ձեռագրերնրու դարա-
կին մէջ մուցած ըլլալու հանգամանքը բուսական պատճառ մը չէ, որ ձեռագիր մը յուխտ-
նապէս ձեռագիր մնայ։ Մենք եւս կ'անդիտանաք, թէ ի՞նչ պատճառ ունէր Գարբինեան «ձե-
ռագրերնրու գարակիք» մէջ պահելու «Սասունցի Գաւիթ»-ը, թայց Սարափեան հրատարակեց
զայն նոյն թուականին, 1946-ին, իր «Միջնաբերդ» տնուն բանաստեղծական հատորին մէջ։

Բնականոն պայմաններու առկ թիւրիմացութիւն մը երբեք արաթութիւն չէ պատ-
ճառք, թայց բնականոն պայմաններու մէջ չենք ապրիր եւ այս թիւրիմացութիւնը ուր-
խութիւն կը պատճառէ մեզի։ Արժանաւոր գործի մը մասին եղած արդար գնանատարին
համար նախ եւ յետոյ, ով գիտէ, թերեւս այս հանգամանքը նոր բախտ մը ընդէ գործին,
բախտուորէ՛ ընթերցողը...



«ՀԱՅՐԵՆԻՔ»-ի աճապրի խմբագրութեան յատուկ ձեռագիրներու զա-
րուկին մէջ՝ ուր Ռ Գարբինեան անջնա ծրարներով կը պահէր զանոնք (ըստ
տեսակի, հրատարակութեան ժամանակի եւ ծաւալի), դտանք — ի շարս ու-
րիշներու — Նիկոզոս Սարափեանի «ՍԱՍՈՒՆՑԻ ԳԱՎԻԹ»-ը, երկու բաժին-
ներով զրկուած խմբագրութեան՝ Փարիզէն, 1946 թուականին։

Կ'անդիտանաք անշուշտ, թէ ի՞նչ արդեւք կամ պատճառ կրնայ գո-
յութիւն ունեցած ըլլալ՝ որ ջարդ անտիպ մնացած ըլլայ ան։ Սակայն կու-
ղենք հաստատել, յետ ընթերցման ձեռագրին, թէ գրագէտին այս գործը նոր
արժէք մը ի յայտ կը բերէ ստեղծագործական անոր ա՛յլապէս հարուստ
փաստակին մէջ։

Պահելով հանդերձ պատմական խորխախին ամբոթիւնը եւ ազգարա-
նական-նկարագրային առանձնատկութիւնները իր տիպարներուն, Սարափ-
եան գեղապանցած է «ՍԱՍՈՒՆՑԻ ԳԱՎԻԹ»-ի նախորդող բոլոր տարբերակ-
ները՝ Էնթաղական արաւեստի տեսակէտով։

Մտածումին տիրական ներկայութիւնը գրագէտին չափածոյ թէ ար-
ձակ սուղումներուն մէջ՝ անոր տեղը յայտարի կ'ընծայէ 1930-1960-ական
թուականներու տիրական անուններու շարքին։ Սարափեան մեծ խօսքերուն
ու փրփրոտ զայցումներուն մարդը չէ. այլ մարդկային էութենէն դէպի
կենսք նետուած կամուրջներու ուղեւոր մը՝ միշտ խուզարկելու եւ պեղելու
տրամադիր։

Հաստատրիմ մնալով հանդերձ «Սասմայ ծոերու» պատմական, տոհ-
մական, տեղագրական եւ տիպարային հիմնոթին տարբեր պահանջներուն՝ Սա-
րափեան գրական նուանումի մը բոլոր սուղ տուեայներուն կրցած է հասնիլ
իր «ՍԱՍՈՒՆՑԻ ԳԱՎԻԹ»-ով, որ կու զայ սուեւնալ մէկ կողմէ համանուն
նախորդներուն վրայ (այս անպամ իրրեւ գրակածօրէն բարձրորակ տարբե-
րակ), ու միշտ կողմէ ստեղծագործական իր փաստակին՝ որ կը բնորոշուի
մտածումի ու զգացումի անգերագանց եղբայրութեամբը, մտքի թէ հոպիի
բոլոր վիճակներուն մէջ։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԱՊԱՏՈՒՄ, յուշագրութիւն, Յ. Թումանյան, 1969, Պէյքուք :

ԱՅՍՏԵՍ ՍԿՍԱԻ ԳԱՐՈՒՆԸ (բանաստեղծութիւններ), Յակոբ Զոլաթեան,
1970, Պէյքուք :

ՏԱՐԵՆԵՆ ԲԱՐՅՈՒՆՆԵՐ

ԼՐՔՆԵՆ	22 Լ. 00ԳԵ
ԱՐՏԱՌՈՂՈՒՆՆԵՐ	8 ՏՈՒՐԸ
ՀԱՏԱՌՈՒՆՆԵՐ	2 Լ. 00ԳԵ



Վարչությունը հասցեով -

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,

Beyrouth - Liban

digitised by A.R.A.R.®